





ԶՄԻԱԾԻՆ





Ի Ը
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ

ՈՒ-15.455



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ՓԻԿԱՐԻՄԱՆ


1972



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԵՐԿՈՒՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՄԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ,
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
Տ. ԸՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ,
ՔԱՀԱՆԱՅԻՅ ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ
ԵՐԵՄՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՅ ԵՒ ՄԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ
ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՅ

**«Ամենայն գիրք աստուածաշունչ է օգտակարք, ի
վարդապետութիւն եմ եւ ի յանդիմանութիւն եւ յուղու-
թիւն եւ ի խրատ արդարութեան»:**

(Բ Տիմ. Գ. 16)

Այն երանելի օրից երբ սուրբ Լուսատրչի տեսիլքով, Իմանալի լոյսը իջաւ
հայոց աշխարհ, մեր ժողովուրդը իր միտքն ու հոգին բեղմնատրեց այդ լոյսով
և այլևս երբեք չբաժանուեց նրանից:

Նոյնիսկ պատմութեան յաճախ դաժան պահերին, նա նախընտրեց իր
կեանքը զոհել, բայց միշտ վառ պահել իր հոգու նրազը եւ այն փոխանցել
գալիք սերունդներին: Կարծէք Յիսուս յատկապէս հայ ժողովրդի համար
ասած լինէր «զհոգին մի՛ շիջուցանէք»:

Մեր ազգային ողջ պատմութեան ընթացքում, մինչեւ մեր օրերը, ա՛յդ կե-
նարար ու ստեղծարար լոյսի մշտահոս աղբիւրը հանդիսացաւ՝ ամենայն հա-
յոց սրբազնատուրք Էջմիածինը:

Այստեղ, սուրբ Էջմիածնում, այդ լույսի շաղախով սկիզբ առաւ հայ ճարտարապետութեան ազգային ոճը:

Սուրբ Մեսրոպեան սերնդի օրերին, նոյն այդ լույսը, այստեղից, սուրբ Էջմիածնից, նոր ճառագայթումով շողաց՝ հայ տառերի գիտով, սուրբ Գրոց թարգմանութեամբ և հայ դպրութեան ու մատենագրութեան սկզբնաւորումով:

Այստեղից, սուրբ Էջմիածնից, միշտ նոյն այդ լույսի զօրութեամբ հնչեցին Ասարայրի ազատութեան շեփորները և հազար հինգ հարիւր տարիներ յետոյ՝ մարտի հրաւեր զանգակները Սարդարապատի:

Այսպէս է որ բազում դարեր, ու Էջմիածինը մնաց ներշնչարանը, առաջնորդող ոգին, կազմակերպիչ հոգեւոր ուժը Հայաստանեայց եկեղեցւոյ և հայ ժողովրդի, թէ՛ ի Հայաստան, թէ՛ ի սփիւռս աշխարհի:

Վերջին տասնեակեց դարերի հայոց պատմութեան ընթացքում, չկայ եկեղեցական, ազգային, մշակութային մի նշանակալից իրագործում որ առնչուած չլինի սուրբ Էջմիածնից շողացող ոգեկան լույսի հետ: Նոյնիսկ երբ Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը՝ քաղաքական դժբախտ պայմանների քերտումով, ստիպուած է եղել ժամանակաւորապէս փոխադրուել Հայաստանի այլ շրջանները, միշտ ու Էջմիածինը է մնացել նրա մտապատկերը, նրա ներշնչարանը, նրա կենարար լույսի աղբիւրը, որին վերադարձել է, երբ համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծուել Արարատեան աշխարհում:

Հայ ժողովրդի հոգեւոր լուսաւորութեան և ազգային-մշակութային զարթօնքի ճանապարհին, 1771 թուականը մի կարեւոր հանգրտան է հանդիսանում, երբ լուսաբնակ Սիմէոն կաթողիկոս Նրեանցու օրօք, ու Էջմիածնում հիմնադրում է հայատառ տպարան, առաջինը հայոց աշխարհի ամբողջ տարածքի վրայ: Տպարան որ սկսել է գործել 1772-ին, իր կողքին ունենալով նաեւ թղթի գործարան՝ 1776-ին:

Պատմութիւնը ոսկի տառերով է արձանագրել՝ «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածնի, ամենայն պարագայիւք, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին Նրեանցւոյ, արդեամբ Զողայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային խոջաջանեան, որ մականուամբ Զաքիկեց, ի յիշատակ իւրեան և իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն»:

Սուրբ Էջմիածնի տպարանը տարիներ շարունակ առանց ընդհատումի գործել է մինչեւ 1919 թուականը, լոյս ընծայելով բազում օգտակար՝ կրօնական, եկեղեցական պատմութեան ու արուեստի, պատմա-բանասիրական, ազգային հայրենասիրական և գեղարուեստական գործեր, որոնց շարքում փառաւոր տեղ է գրաւում Մայր Աթոռի «Արարատ» պաշտօնաթերթը, որ լոյս է տեսել յիսուն տարի շարունակ՝ 1868-ից մինչեւ 1919:

Տիրոջ ողորմութեամբ, Մեր օրօք, լոյժ բարենպաստ պայմաններում, Մայր Աթոռի տպարանը վերաբացուեց 1961 թուականին, ամբողջապէս նոր սերնդաներով և արքայադուրմերով, առատաւոր լումաներովը Միացեալ Նահանգաց մեր հաւատացեալ զաւակների, տպարան որ գործում է նոյն ոգով և նոյն արդիւնաւտութեամբ, ինչպէս այն հիմնուել էր մեզանցից երկու հարիւր տարիներ առաջ, տեսիլքովը և տքնութեամբք մի մեծ ու շինարար Հայրապետի:

Այսու Մեր կոնդակով, 1972 տարին յայտարարում ենք յոբելիական տարի և հրաւեր ենք կարդում որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում, հանդիսաւոր սրբազան արարողութիւններով ոգեկոչուի յիշատակը՝ ու Էջմիածնում տպարանի հիմնադրութեան երկու հարիւր ամեակի, նրա երջանկալիշատակ

հիմնադիր Երեւանցի Սիմէոն կաթողիկոսի, բարեպաշտ բարերարների, և Մայր Աթոռի գործակից միաբանների:

Տարգա՛նք եւ օրհնութի՛ւն նրանց պալծաւ յիշատակին:

Ամենայն հայոց Մայր տաճարի իջման սուրբ սեղանից բաշխւող քրիստոսապարզ և լուսը թող միշտ վառ մնայ բոլոր հայ եկեղեցիներում եւ մեր հաւատաւոր զաւակների հոգիներում, որպէսզի նրանք շարունակեն իրենց նուիրական առաքելութիւնը նաեւ մեր օրերում, թէ՛ վերածնունդ հայոց մայր երկրի երջանիկ պայմաններում եւ թէ՛ սփիւռքում, իմաստաւորելով իրենց կեանքն ու գործը՝ առաւել ու առաւել հարստացումովը հայկական ոգեկանութեան ազգային մեծ գանձարանի:

Օրհնութիւն եւ շնորհք Միածին Որդւոյն, Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեւեանդ, ամէն:

Կալ Շէ Ռ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Տուա կոնդակս ի 28-ն յունուարի


1972 փրկչական ամի,

և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՐ. 729





Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԸՆՈՐՀ ՈՐ ՄԻՇՏ ԼՆՈՒ ԶՊԷՏՍ
ՍՐԲՈՅ ՍՊԱՍՍԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ

Այս տարի ա. Ղևոնդյանց և Վարդանանց ազգային-եկեղեցական տոներ Մայր Աթոռում նշվեց ավանդական հանդիսությամբ, խանդավառ մթնոլորտում:

Փետրվարի 10-ին, հինգշաբթի օրը, ա. Վարդանանց տոնին, հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտ չորս սարկավագներ, որոնք հայրապետական բարձր կարգադրությամբ հոգևոր ծառայության փորձի և փորձառության որոշ մի շրջան էին անցկացրել Մայր Աթոռում և ներքին թեմերում, միակամ ու միախորհուրդ Աստուծո կոչով, իրենց ազատ կամքի ու սրտի թելադրանքով ընդունեցին քահանայական սուրբ կարգը, երեքը որպես կուսակրոն արքեպիսկոպոս և մեկը որպես ամուսնացյալ քահանա:

Մայր Աթոռի, Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հավատավոր հայ ժողովրդի հոգևոր անասկարկ սպասավորության կանչված այս չորս երիտասարդ և խոստումնալից նորընձանների ձեռնադրությունը, նրանց գիտակից ու անձնագոհ այս քայլը Մայր Աթոռի երիտասարդ միաբան սարկավագների հոգևոր, մտավոր չափահասության, մտածումի և զգացմունքի հասունության պայծառ վկայությունն է:

«Որդի հարազատ զնմանութիւն հօրն թե-րէ»:

Վեհափառ Հայրապետի նաչվածքի տակ և Նրա անմիջական հսկողության ներքո Մայր Աթոռում հասակ առալ միաբանական մի նոր սերունդ՝ տոգորված Նրա հավատով, լավատեսությամբ, ծառայության ոգով, և որը արդար հպարտությամբ է կրում իր սուրբ վեղարը:

Հայոց Հայրապետը Իր գաղափարական առաջին իսկ օրերից Մայր Աթոռի միաբանությանը շրջապատել է հայրական գուրգուրանքով և ջերմությամբ, վարդագույն հույսեր է կապել նրա հոգևոր, բարոյական, իմացական աճման և կատարելագործման հետ և Իր գաղափարով, «բոլոր իրոքն պատկերի և նմանութեան» դաստիարակում է Իր հոգևոր զավակներին, որոնք վաղը շարունակելու են Իր եկեղեցաշեն և հայրենամակեր գործը:

Այս մտածումով Մայր Աթոռում ստեղծվեցին խաղաղ ու առողջ հիմքերի վրա դրված վանական կյանք ու միաբանական մթնոլորտ:

Հայոց Հայրապետը սխառնմատիկ կերպով և մեծ կարևորությամբ Իր հոգածու ու-

շաղկապությունը կենտրոնացրել է Մայր Աթոռի երիտասարդ միաբանության հոգևոր դաստիարակության և ի մասնավորի բարության և անարագի կազմության վրա և՛ հոգևոր և մարմնական կրթական հարկի տակ, և՛ միաբանական-վանական կյանքի պայմաններում:

Այդպիսի կազմակերպված հոգևոր-կրթական աշխատանքը տվել է նաև մեր օրերին, տարիների ընթացքում, Իր բարի և խոստովնալից արդյունքները: Ահա թե ինչու հայ եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր անսակարկ ծառայության նվիրված Մայր Աթոռի նոր միաբանությունը իր վրա է սկսել ողջ հայության ուշադրությունն ու ակնկալությունը:

Նորընծա այս չորս ձեռնադրյալներն էլ ս. Էջմիածնի կրոնաշունչ մթնոլորտի մեջ, անմարանի հարկի ներքո անցկացրին իրենց ուսումնառության բեղուն տարիները: Նորանք այստեղ գտան նաև ծնողական ջերմ գորգուրանք ու սեր և իրենց հոգու, մտքի զարգացման համար մաքուր, քրիստոնեական ու հայեցի միջավայր ու շունչ՝ պատրաստվելու համար իրենց վաղվա առաքելությանը:

Այս չորս երիտասարդները, որոնք հայրենի աշխարհի ծնունդ են, երկուսը Վաղարշապատից և երկուսը Լեւոնականից, տարիներ առաջ, փոքր տարիքից, ծվեն-ծվեն հոգիներով եկան Մայր Աթոռ ուսանելու, եկան ընտանեկան տարբեր միջավայրերից, տարբեր հոգեբանությունների և նախասիրությունների տեր, բայց անեցին, կազմավորվեցին ս. Էջմիածնի մեջ: Ս. Էջմիածինը, մեր հավատքի այս դարավոր կենտրոնը և համագային մեծ ուխտատեղին, եղավ նրանց հոգու, մտքի և սրտի խանձարուրդը:

Նրանք այս դարավոր հաստատության մեջ, ս. Էջմիածնի խորհուրդի և լույսի մեջ, Հայոց Հայրապետի նախնադրի և օրհնության ներքո, հասունացան, լցվեցին հայ եկեղեցուն և հայ ժողովրդի ծառայության զգացմունքով և զինվորագրվեցին նրա հոգևոր և հայրենասիրական բանակին, որպես անձնուրաց և սրտեռանդ մշակներ. «Բարոք է մեզ աստ լինել» (Մատթ. ԺԷ 3):

Հայ եկեղեցու հոգևոր սպասուկ կանչված բազմում սերունդներ ծնկի են իջել մեր հավատքի սրբազան խորանների առաջ: Դարեր շարունակ մեր եկեղեցիների կամարների տակ իջել է «աստուածային և երկնային շնորհ, որ միշտ լնու զպէսս սպասաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ»:

Աստվածային այս Զայնի և Կոչման ետեւից են գնացել նաև Մայր Աթոռի նոր միաբանները, եպիսկոպոս, վարդապետ, քահանա և սարկավագ, որպես մեր օրերի «ան-

ձիւնք նուիրեալք», ծառայության և նվիրումի կրակե շապիկը հագած, իրենց երիտասարդ ու կանաչ կյանքերի, մատաղ հոգիների պատարագը բոլորանվեր ընծա բերելու աստվածային պաշտոնին և եկեղեցու հոգևոր սպասին:

Մայր Աթոռում կատարված այս քահանայական ձեռնադրությամբ հայ եկեղեցու սպասավորության կանչված ընտիր հոգիների հավերժական աշակերտության ոսկե շրջանի վրա ավելացավ չորս նոր օղակ:

Հայ ուխտապահ հոգևորականությունը իր ետին ունի քրիստոնեական առաքելության, մշակութային առաքելության և հայրենանվեր գործունեության փառավոր անցյալ և ավանդություններ, կոչումի և ստեղծագործ ծառայության աննպարհի վրա:

Կարիք կա միշտ և հանապազ հոգևոր նոր հունձի, կարենալ լցնելու համար այն դաստարակությունը, որ իրենց ետին են թողնում ընդմիշտ մեզանից հեռացած մեր արժանավոր հոգևորականները:

Մեր եկեղեցու հարատևությունը, առաքելությունն ու կենսունակությունը, մեր օրերին մանավանդ, կախում ունեն վանքերի ու դպրանոցների մեջ և առաջին հերթին Մայր Աթոռում, հայրենի հողի վրա լուսամիտ հոգևոր ու բարոյական ամուր և սկզբունքային դաստիարակություն ստացած արժանավոր ու պատրաստված հոգևորականներից:

Այս իմաստով մեծ ու շնորհակալ գործ է կատարել Հայոց Հայրապետը Մայր Աթոռում:

Մխիթարությամբ և երախտագիտությամբ պետք է արձանագրել, որ այսօր, 1972 թվականի այս առաջին ամիսներին, հայ եկեղեցու 28 բարձրաստիճան իշխանավորներից 23-ը Վեհափառ Հայրապետի ձեռնասուններն են ու Մայր Աթոռի միաբաններ:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին հոգևոր ճեմարանից շրջանավարտ և Մայր Աթոռում ձեռնադրված միաբան երիտասարդ վարդապետների, քահանաների, սարկավագների թիվը հասնում է 60-ի՝ չհաշված ներքին թեմերում կատարված քահանայական ձեռնադրությունները: Վերջին վեց ամսում Արարատյան, Ծիրակի և վրահայոց թեմերում կատարվեցին քահանայական և ութ ձեռնադրություններ:

Այսօր Մայր Աթոռի միաբանական շարքերում ունենք հոգևոր ճեմարանից շրջանավարտ տասնվեց սարկավագներ, որոնք ծառայում են Մայր Աթոռում, ներքին և սփյուռքի թեմերում: Ոմանք, ծառայելով մեկտեղ, շարունակում են իրենց ուսումը բարձրագույն այլ և այլ հաստատություններում և ուր, անցկացնելուց հետո իրենց փորձի

շրջանը, կկոչվեն հոգևոր ծառայության:

Հոգևոր այս հունձը նոր ուժ, նոր կորով է բերում այս դարավոր հաստատության, որ ամենայն հայոց Մայր Աթոռն է, և նրա միջոցով նաև մեր եկեղեցուն:

Բարեկարգ ու զորավոր եկեղեցի նշանակում է, ամեն բանից առաջ, հավատավոր, զոհաբերվող և կարգապահ հոգևորականություն, մեր նախնյաց պայծառ ու բարձր տեսիլքով, կարենալ շարունակելու համար իր պատմական, եկեղեցական, մշակութային ու հայրենասիրական դերը նաև այսօր, արդի կյանքի բարդ ու հակասական պայմաններում:

Դժբախտաբար միշտ չէ՝ որ մեր հոգևորականությունը գտնվում է իր կոչման և ծառայության բարձրության վրա:

«Անտարակույս»,—հայտարարել է Հայոց Հայրապետը 1968 թվականի մայիսի 1-ին 'Նյու-Յորքում' Միացյալ Նահանգաց հայոց թեմի հոգևորականության տարեկան համագումարում,—թե այսօր, հայ եկեղեցին իր ծոցին մեջ ունի բազմաթիվ հավատավոր, առաքինի, նվիրյալ հոգևորականներ, սակայն ոչ բավարար չափով: Փոքր չէ թիվը մեր մեջ նաև հոգևորականներուն, որոնց մասին նույն բանը պիտի չկրճանք ըսել: Մեր հայրապետության այս տասներեք տարիներու ընթացքին, հաճախ ենք ապրած ծանր հուսախաբություններ, սկսյալ Մայր Աթոռեն մինչև ամեն կողմ, դեպի արևելք և դեպի արևմուտք...

Սպասելի է, որ մենք հոգևորականներս ավելի հավատք ունենանք մեր սուրբ զործի նկատմամբ, ավելի զաղափարական բովանդակություն դնենք մեր կյանքին և մեր աշխատանքին մեջ, առանց անձնատուր ըլլալու արժաթին, անկարգության և ծուլության և եսակեղրոն հակումներուն:

Հայոց Հայրապետի քերականով հաստատված այս վկայությունը բաժանում է նաև մեր հավատացյալ ժողովուրդը և սպասում, որ հոգևոր ծառայության և կամ եկեղեցու հայրերի բնութագրումով «աստուածագործ արուեստի և պաշտօնի» կոչված Տիրոջ ազգու մշակները պատվով և սրբությանը կրեն իրենց ուսերի վրա մեր նախնյաց սրբությունների, հավատքի և հայրենասիրական ուխտի սրբազան տապանակը, «զի մի արատեսցի պաշտօնին» (Բ Կորնթ. 2 3):

Հայոց Հայրապետը, Մայր Աթոռը ու մեր հավատավոր ժողովուրդը խանդավառ են ու լավատես հոգևոր այս նոր հունձի տեսիլքով:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն իր ընթերցողների, ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի, հայ եկեղեցու և մեր ժողովրդի անսակարկ հոգևոր ապաստվորության նվիրված չորս այս նորընձաների ձեռնադրությունը և սրտեռանդն բարեմաղթում, որ նրանք լինեն «մշակք առանց ամօթյոյ»:

«Երանի՜ զոր ընտրեցեր և ընկալար և բնակեցեր ի գաւիթս քո» (Սաղմ. ԿԴ 5):






ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Բադալ Մուրադյանը Կառավարական տանը ընդունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի միջև տեղի է ունենում ջերմ գրույց, սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գաապարյանը:





ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ԼԻՈՆԱԲՆԱԿ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՊՈԻԼԼՈՒՔՅԱՆԻՆ՝ ԶՐԱՆՄԻԱԿԱՆ ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ
ՇՔԱՆՇԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՌԹԻՎ

Լիոն

Մեր սրտագին ու ջերմ շնորհավորանքները բարձր պարգևի ատօիվ,
որին արժանացաք:

Պատվո Լեգեոնի շքանշանը, որ Ձեզ շնորհվեց ֆրանսիական վեհամեծ
կառավարության կողմից, մեծ պատիվ է՝ ընծալված Ձեզ, այնպես էլ հալ ժո-
ղովրդին:

Մայր Աթոռ ս. Էջմիածնից հղում ենք Մեր օրհնությունը փառապանծ
Ֆրանսիային և նրա հանճարին:

Մեր հայրապետական օրհնությունը Ձեզ և Ձեր ազնիվ տիկնոջը:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

31-ը հունվարի 1972 թ.,

Ս. Էջմիածին



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի փետրվարի 1—4 օրերին պաշտոնական ացյով Մայր Աթոռում էր գտնվում եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Էժեն Կարսոն Բլեյկը: Մեծարգո հյուրին ուղեկցում էին ուս պրավոսլավ եկեղեցու կողմից հոգեշնորհ հայր Կիրիլ վարդապետը և թարգման Սերգեյ Գորդենը:

Փետրվարի 1-ին, երեքշաբթի օրը, ժամը 17-ին, հարգարժան հյուրերին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու համար Երևանի օդանավակայան էին եկել Մայր Աթոռի ներկայացուցիչներ գերաշնորհ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանը, տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պարզև Շահբազյանը, Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը և Հակոբ սարկավագ Գյուկչյանը:

Հյուրերին դիմավորելու համար օդանավակայան էր եկել նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պրն. Սուրեն Հովհաննիսյանը:

Ժամանումից հետո հյուրերը առաջնորդվեցին Մայր Աթոռ և ընդունվեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից: Նորին Սրբության և դոկտ. Բլեյկի միջև տեղի ունեցավ զրույց՝ Էկումենիկ շարժման և հայ եկեղեցուն վերաբերող հարցերի շուրջ:

Երեկոյան, ընթրիքից հետո, հյուրերը մեկնեցին Երևան՝ «Արմենիա» հյուրանոցում իրենց հատկացված հարկաբաժինները:

Փետրվարի 2-ին, չորեքշաբթի օրը, հյուրերը այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան պետական Մատենադարան, Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղիցի, Եղեռնի հուշարձան, Էրեբունի թանգարան, այնուհետև եղան Օշականում՝ և իրենց հարգանքը մատուցեցին ս. Մեսրոպի շիրիմին:

Նույն օրը, կեսօրին, Վեհաքանում, ի պատիվ մեծարգո հյուրի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանը, նախագահի տեղակալ պրն. Սուրեն Հովհաննիսյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Մայր Աթոռի միաբանության ու պաշտոնեության ներկայացուցիչները: Ծաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բաժակաձևեր:

Երեկոյան Մայր տաճարում տեղի ունեցավ համատեղ էկումենիկ աղոթք, որից հետո Նորին Սուրբ Օծուքայունը ջերմ խոսքերով ողջունեց պատվարժան հյուրի ներկայությունը Մայր Աթոռում դրվատելով նրա մատուցած ծառայությունները էկումենիկ շարժման զարգացման և քրիստոնեական եկեղեցիների միության ամրապնդման գործին իբրև եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար:

Վերջում, ի պատիվ հարգելի հյուրի, Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր համերգ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ ղեկավարությամբ խմբավար պրն. Խորեն Մելիսանեյանի: Կատարվեցին հայկական, ռուսական և արևմտաեվրոպական եկեղեցական երգեր:

Փետրվարի 3-ին, հինգշաբթի օրը, առափոռյան ժամը 11-ին, դոկտ. Բլեյկը իր ողեկիցներով մեկնեց ա. Գեղարդի վանք, որտեղ արժանացավ ջերմ ընդունելության: Վերադարձին հյուրերը դիտեցին նաև Գառնիի վերակառուցվող հերանոսական տաճարը:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, դոկտ. Բլեյկը ներկա եղավ հոգևոր Եմմարանում իր պատվին կազմակերպված ռուսնողական հանդեսին:

Փետրվարի 4-ին, ուրբաթ օրը, բարձրաստիճան հյուրը և նրան ողեկցող անձինք այցելեցին ա. Հոփիսիմնի տաճար, ապա դիտեցին Հին Վեհարանի թանգարանը և Մայր Աթոռի տպարանը:

Ժամը 3-ին Վեհարանում տրվեց ողջերթի ճաշկերույթ, որից հետո Վեհափառ Հայրապետի և դոկտ. Բլեյկի միջև տեղի ունեցավ զրույց սրտագին և ջերմ մթնոլորտում:

Ժամը 17-ին հյուրերը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, ողևփովեցին օդանավակայան՝ մեկնելու Մոսկվա:

Բարձրաստիճան հյուրերին օդանավակայանում ողջերթ մաղթեցին Մայր Աթոռի ներկայացուցիչները և ՀՍՍՀ Միևիստրների սովետին ստընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ

5-ը փետրվարի 1972 թ.,

Ա. Էջմիածին





ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. Է. Կ. ԲԼԵՅԿԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Փետրվարի 1—4 օրերին պաշտոնական այցով Մայր Աթոռում էր գտնվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար **դոկտ. Էժեն Կարսոն Բլեյկը**։

Մեծարգո հյուրին ողջեցում էին ուս պրավոսլավ եկեղեցու կողմից հայր **Կիրիլ վարդապետը** և **Սերգեյ Գորդենը**՝ որպես թարգման։

Դոկտ. Է. Կ. Բլեյկի պաշտոնական այս երկրորդ այցելությունն էր Մայր Աթոռ։

Փետրվարի 1-ին, երեքշաբթի օրը, ժամը 17-ին, հանուն **Հայոց Հայրապետի**, Երևանի օդանավակայանում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հարգարժան ընդհանուր քարտուղարին և նրան ընկերակցող հյուրերին դիմավորում և բարի գալուստ են մաղթում **տ. Հուսիկ եպս. Սանթրույանը**, **տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը**, դիվանապետ **Հ. Առաքելյանը**, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար **Պ. Շահբազյանը** և **Հակոբ սրկ. Գյուկչյանը**։

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար **դոկտ. Է. Կ. Բլեյկին** և նրան ողջեցող հարգելի հյուրերին դիմավորելու համար Երևանի օդանավակայան էր եկել նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Սուրեն Հովհաննիսյանը**։

Ողջույնի և բարի գալստյան խոսքերից հետո հյուրերը մեքենաներով առաջնորդվում են Մայր Աթոռ։

Ժամը 18-ին Վեհաքանոնում հարգելի հյուրերին ջերմորեն ընդունում և բարի գալուստ է մաղթում Ամենայն Հայոց Հայրապետը:

Ավելի ուշ Վեհաքանոնում Հայոց Հայրապետի և դոկտ. Է. Կ. Բլեյկի միջև մտերմիկ մթնոլորտում տեղի է ունենում առաջին գրույցը, էկամենիկ շարժման և հայ եկեղեցու վերաբերյալ մի շարք հարցերի շուրջ:

Երեկոյան, ընթրիքից հետո, դոկտ. Է. Կ. Բլեյկը և հարգելի հյուրերը առաջնորդվում են Երևան, «Արմենիա» հյուրանոց, իրենց հատկացված մասնավոր հարկաբաժինները:

ԱՅՏԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փետրվարի 2-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, **դոկտ. Է. Կ. Բլեյկը** և հյուրերը այցելում են Երևանի ա. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց պետական Մատենադարան, ուր նրանց ընդունում է Մատենադարանի տնօրեն պրոֆ. Լևոն Խաչիկյանը ու հանգամանորեն ծանոթացնում հայ մշակույթի անկրկնելի գանձերի հետ, որոնք ջերմ գորգուրանքով պահպանվում են գիտա-հետազոտական այդ ինստիտուտում՝ մատչելի դառնալով նաև հայ և օտար գիտնականների ուսումնասիրությունների համար:

Հարգելի հյուրերը մեծ հետաքրքրությամբ են դիտում Մատենադարանի ցուցահանդեսի մեծ դահլիճի՝ հայ մանրանկարչության հնագույն և սրանչելի նմուշները և հրաժեշտ են առնում անմոռանալի տպավորություններով:

Ժամը 12-ին դոկտ. Է. Կ. Բլեյկը և հյուրերը այցելում են Երևանի առաջնորդանիստ ա. Սարգիս եկեղեցի, ուր նրանց դիմավորում և ողջունում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Վահան եպս. Տեղյանը**՝ շրջապատված քահանայից դասով, թեմական, եկեղեցական խորհուրդների անդամներով:

Ա. Սարգիս եկեղեցին շուրջ մեկ տարի է, ինչ հիմնական վերանորոգության մեջ է: Բարձրաստիճան հյուրը և նրան ընկերակցող անձինք ծանոթանում են նաև կատարվող շինարարական և վերանորոգչական աշխատանքներին:

Ժամը 13-ին հարգելի հյուրերը այցելում են Ծիծեռնակաբերդ, հայ մահատակաց հուշարձան, և մի պահ իրենց գլուխներն են խոնարհում հայ մավառքի և հայրենիքի անձնուրաց մահատակների խնկելի հիշատակի առաջ:

Ավելի ուշ մեծարգո հյուրերը այցելում են Էրեբունի թանգարան և ժամը 14-ին մեկնում Օշական՝ ա. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, իրենց հարգանքի տուրքը մատուցելու Մեծ վարդապետի անմահ հիշատակին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱԾԿԵՐՈՒՅԹ

Ժամը 15-ին Վեհաքանոնում, ի պատիվ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկի և նրան ողնկցող անձանց, տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

Սեղանը օրհնում է Հայոց Հայրապետը: Նորին Սրբության կողքին տեղ են գրավում **դոկտ. Է. Կ. Բլեյկը**, ՀՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Ս. Գասպարյանը**, տեղակալ **Ս. Հովհաննիսյանը**, **տ. Հուսիկ** և **տ. Վահան եպիսկոպոսները**, **հայր Կիրիլը**, **Սերգեյ Գորդենը**, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ **պրոֆ. Ս. Մելիքսեթյանը**, Երևանի հայ ավետարանական համայնքի վերապատվելի **Սարգիս Կոնստյանը**, Մխիթարյան հայր **Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյանը**, **տ. Գևորգ**, **տ.**

Աղան վարդապետները, դիվանապետ Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ս. Հատիտյանը, միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պ. Շահբազյանը և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթի ժամանակ ողջույնի և բարի գալստյան ճառեր են արտասանում Վեհափառ Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տ. Հուսիկ եպիսկոպոսը՝ վեր հանելով նաև եկեղեցիների համաշխարհային խորհրդի կատարած մեծ գործը եկեղեցիների միջև համագործակցություն ստեղծելու, աշխարհի խաղաղության և ժողովուրդների համագործակցության ճանապարհի վրա:

Պաշտոնական սույն ճաշկերույթի ժամանակ, որը վերածվում է քրիստոնեական սիրո ճաշի, դոկտ. Է. Կ. Բլեյկը երախտագիտության խոսք է ասում Հայոց Հայրապետին՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդի առաքելության մասին Նորին Սրբության բարեմաղթությունների համար, ինչպես նաև իր և իրեն ընկերակցող ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչների անունից շնորհակալություն է հայտնում թե՛ Հայոց Հայրապետին և թե՛ պրն. Սարգիս Գասպարյանին՝ ջերմ դիմավորության և հյուրասիրության համար:

Պաշտոնական ճաշկերույթից հետո Հայոց Հայրապետն ու դոկտ. Է. Կ. Բլեյկը երկրորդ անգամ մասնավոր զրույց են ունենում, ջերմ մթնոլորտում:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Ժամը 18-ին Մայր տաճարում տեղի է ունենում համատեղ Էկումենիկ աղոթք, Հայոց Հայրապետի նախագահությամբ:

Նորին Սրբությունը և դոկտ. Է. Կ. Բլեյկը զանգերի հնչյունների ներքո հանդիսավորապես և եկեղեցական թափոքով առաջնորդվում են Մայր տաճար, ուր պաշտվում է երեկոյան ժամերգություն՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության, հոգևոր ճեմարանի ուսանողության:

Սրբազան արարողությանը ներկա են նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի ողջ պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները և հավատացյալների բազմություն:

Երեկոյան ժամերգությանը կցվում է նաև «Խաղաղական»-ի «Փառք Քեզ, Տէր Աստուած մեր» մաղթանքը: «Եկեղեցին մի անձն եղած» աղոթում է աշխարհի խաղաղության և ազգերի եղբայրության համար: Տաճարում ներկա գտնվող հավատացյալների բազմությունը իր սրտաբոլս «ամեն»-ներով մասնակցում է այդ սքանչելի խաղաղության մաղթանքի սրտառու աղերսանքներին, որպեսզի գիշերվա արհավիրքը խաղաղությամբ անցնի և դարձյալ ծագի «Առաօտ լուսոյ»-ն, «Արեգակն Արդար» ողջ երկրի վրա:

Խաղաղության հոգեգմալ այս մաղթանքի վեհ ազդեցության ներքո և երեկոյան ժամերգության համատեղ Էկումենիկ ոգուց առաջնորդված, նույն մաղթանքից իր սքանչելի քարոզի բնաբանն է ընտրել Հայոց Հայրապետը, բնաբան, որը խտացումն է համամարդկային դարավոր խաղաղության ձրգտումի և արտահայտությունը քրիստոնեական եղբայրության. «Տէր Աստուած մեր, Դու՛ պահեա գեղբայրութիւնս մեր ամբողջ և անխռով ի կամս ողորմութեան քո»:

Հայրապետական հոգեշունչ քարոզը իր հոգևոր ապրումի գերագույն պահին հնչում է Մայր տաճարի կամարների տակ, մանավանդ ա՛յդ երեկո,

որպես քրիստոնեական սիրո, եղբայրության և տիեզերական խաղաղության սրբազան հիմնը, ի ներկայության ընդհանուր քարտուղարի Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, խորհուրդ, որի շուրջ համախմբվել են ի Քրիստոս ավելի քան 250 քրիստոնեական եկեղեցիներ և այլ համալսմաններ:

Խաղաղության, սիրո այս քարոզից հետո Հայոց Հայրապետը ողջունում է հայ քրիստոնեական հավատքի այս հնադարյան կենտրոնի սուրբ Սեդանի առաջ՝ ներկայությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Բլեյկի, բարենախառնություններ կատարելով մեր ժամանակները հատկանշող եկեղեցական էկումենիկ շարժման ապագա է՛լ ավելի զարգացման և հաջողության համար, Քրիստոսի եկեղեցու համագործակցության ամրապնդման ճանապարհի վրա:

Սրբազան արարողության և հայրապետական քարոզի ավարտից հետո Մայր տաճարում տեղի է ունենում հոգևոր համերգ, Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ հոգեկից ղեկավարությամբ պրն. **Խորեն Մելխանեջյանի:**

Համերգի սկզբին Մայր տաճարի երգեհոնահար Լևոն Աբրահամյանը հանդիսավորությամբ կատարում է «Խորհուրդ խորին»-ը երգեհոնի վրա: Ապա Մայր տաճարի երգչախումբը բացառիկ հաջողությամբ կատարում է Կոմիտաս վարդապետի «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»՝ Մ. Եկմայանի «Քրիստոս պատարագեալ», Հենդելի «Ալելուիա»-ն («Մեսիաս» օրատորիայից), Դիմիտրի Բորտնիանսկու կոնցերտ № 15, Անտուան Շոփոնի «Լա ուդատե դոմինիում», Չակովսկու «Գուպոդի պոմիլույ», Ս. Բախի № 142 կանտատից, «Քրիսմս» օրհներգությունը և «Գլորիա ալելուիա»-ն:

Երգչախմբի մեներգիչ **Մարիա Գեղունի Պողապալանը** հանդես է գալիս «Խնկի ծառի մման ես» և «Հատուն, հատուն» տաղերի գեղեցիկ կատարումով:

Մայր տաճարում համատեղ էկումենիկ աղոթքը և հոգևոր համերգը ավարտվում է Մ. Եկմայանի դաշնավորած «Հայր մեր»-ով, որը կատարում է երգչախումբը, և հայրապետական «Պահպանիչ»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԳԵՂԱՐԻ, ԳԱՌՆԻ

Փետրվարի 3-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին **դոկտ. Է. Կ. Բլեյկը** և հարգելի հյուրերը այցելում են ս. Գեղարդի վանք:

Պատմական վանքի դարպասի առաջ մեծարգո հյուրերին դիմավորում և ողջունում են վանական միաբանության անդամները և առաջնորդում եկեղեցի: Տ. Աբրահամ քնն. Մարգարյանը հյուրերին հանգամանորեն ծանոթացնում է ս. Գեղարդի վանքի պատմության ու վանական կառույցների ճարտարապետական առանձնահատկություններին՝ վեր հանելով նաև պատմական այս վանքի կատարած հոգևոր-մշակութային մեծ դերը:


Այնուհետև հյուրերը մեծարվում են նորակառույց վանատան հյուրասրահում և հրաժեշտ առնում լավագույն տպավորություններով:

Դեպի Երևան վերադարձի ճանապարհի վրա հարգելի հյուրերն այցելում են նաև Գառնիի վերակառուցվող հեթանոսական տաճար:

ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆ

Փետրվարի 3-ին, հինգշաբթի օրը, ժամը 18-ին, **դոկտ. Է. Կ. Բլեյկը** այցելում է հոգևոր ճեմարան և ներկա լինում իր պատվին կազմակերպված ուսանողական հանդիսությանը:

Դոկտ. Է. Կ. Բլեյկին ընկերակցում էին հայր Կիրիլը և Սերգեյ Գորդենը:



ՎԵԶԱՓԱՌ ՀԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ԵԿԵՂԵՍԻՆԵՐ ՀԱՄԱԵԽԱՆԱՅԻՆ ԽՈՐՀԻՆԻ ՀՆԴԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ ԴՈՒՏ. Է. Կ. ԲԱՅԵՐԸ
ՅՐԶԱՊԱՏԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒՆԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԵՎ ՀՅՈՒՆԵՐՈՒ

Հանդիսությունը ներկա են Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր համարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունից առաջ դուրս է. Կ. Բլեյկը համարանի տեսչարանում հանդիպում և զրույց է ունենում դասախոսական կազմի հետ և հետաքրքրվում ուսանողության առօրյայով, համարանի ուսումնա-դաստիարակչական ծրագրով:

Այնուհետև որոշյալ ժամին դուրս է. Կ. Բլեյկը ծափահարությունների ներքո մոտք է գործում համարանի հանդիսության սրահ՝ ընկերակցությամբ Ե. Հուսիկ եպս. Սանթրուրյանի և իր մնալուն ուղեկիցների և դասախոսների:

Հանդիսությունը սկսվում է «ի թի» արտասանված հայերեն, անգլերեն և ռուսերեն «Հայր մեր»-ով:

Ապա հոգևոր համարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանը անգլերեն լեզվով բարի գալստյան և ողջույնի խոսք է կարդում, ներկայացնում է համառոտակի հոգևոր համարանի պատմությունը և կանգ է առնում մանավանդ Վեհափառ Հայրապետի օրով հոգևոր համարանի առաջ դրված քրիստոնեական և հայեցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վրա, խոսում է համարանում սովորող հայրենաբնակ և սփյուռքահայ ուսանողության մասին և հույս է հայտնում, որ ս. Էջմիածնի այս հոգևոր, կրթական հարկի տակ սովորող ուսանողներից ոմանք ապագայում կկատարելագործեն իրենց ուսումը Էկումենիկ կենտրոնում, մոտիկից կծանոթանան այդ կարևոր շարժման կյանքին և առաքելությանը և Աստուծո օրհնությամբ և Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ կլինեն սպասավորները ու մշակները Տիրոջ այգու մեջ, Էկումենիկ նվիրումով և խանդավառությամբ:

Հոգևոր համարանի երգչախումբը, եկեղեցական երաժշտության դասատու Արարատ սրկ. Գալստյանի ղեկավարությամբ, կատարում է «Էջ Միաձինն ի Հօրե», «Գովեա, Երուսաղեմ, զՏէր» և «Որք զարդարեցին» շարականները:

Նույն երգչախումբը, եվրոպական երաժշտության դասատու Խորեն Մելխանեջյանի գլխավորությամբ, կատարում է անգլերեն լեզվով ս. Ծննդյան երկու երգեր:

Բ լսարանի ուսանող Վրեժ սրկ. Նաջարյանը, հանուն ուսանողության, անգլերեն լեզվով բարի գալստյան մի ուղերձով ողջունում է ներկաներին՝ դուրս է. Կ. Բլեյկին և հարգելի մյուս հյուրերին:

Ա լսարանի ուսանող Վաչե Նալբանդյանը անգլերեն լեզվով արտասանում է սրբ Էդվարդ Դայրի «Մայ մայնդ ը կինգտոմ իզ ֆոր մի» քերթվածը:

Համերգի վերջում, ի պատիվ հյուրերի, ելույթ է ունենում նաև Արարատ սրկավագի ղեկավարությամբ համարանի նորակազմ ջազ-նվագախումբը, որը կատարում է «Երևան», «Ալագյազ», «Պոլյուշկա պոլե» և «Յելլու Ռիվեր» երգերը:

Տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարությանի հրավերով խոսք է առնում նաև դուրս է. Կ. Բլեյկը, որը իր ջերմ շնորհակալությունն ու ուրախությունն է հայտնում՝ հոգևոր համարանի դասախոսական կազմի և ուսանողության հետ այս երկրորդ հանդիպման համար, ուսանողություն, որը բխրիական այս հողի վրա, Աստուծո ողորմությամբ և Ամենայն Հայոց կաթողիկոսի ղեկավարության ներքո, պատրաստվում է նվիրվելու Աստուծո խոսքի քարոզությանը ոչ միայն հայ ժողովրդի ծոցում, այստեղ՝ Հայաստանում և սփյուռքի հայ եկեղեցիներում, այլև երջանիկ մի օր էլ ընդհանուր եկեղեցու ծոցում, Էկումենիկ ծառայության ճանապարհի վրա:



Դոկտ. Է. Կ. Բլեյկը հաստատ հույս է հայտնում, որ հոգևոր ճեմարանի այս ուսանողներից ոմանք առիթը կունենան իրենց ուսումը շարունակելու և կատարելագործվելու ժնկում՝ հոսանքի էկոմենիկ ինստիտուտում, ի թիվս 40 այլ ուսանող-ուսանողուհիների, որոնք պատրաստվում են նվիրվելու էկոմենիկ քարոզության և առաքելության, Քրիստոսի եկեղեցու փառքի համար։

Հանդիսությունը ավարտվում է խանդավառ մթնոլորտում, խմբովին երգված «Հայր մեր»-ով։

Երեկոյան ժամը 19-ին դոկտ. Է. Կ. Բլեյկը իր մնայուն ողեկիցներով և հոգևոր ճեմարանի մի խումբ դասախոսներով Երևանում, պետական օպերայի դահլիճում, ներկա է լինում «Տրուբադուր»-ի ներկայացմանը։

ԴՈԿՏ. Է. Կ. ԲԼԵՅԿԸ ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՏ

Փետրվարի 4-ին, ուրբաթ օրը, դոկտ. Է. Կ. Բլեյկը և նրան ողեկցող հարգելի հյուրերը առավոտյան ժամը 11-ին այցելում են ս. Հովհաննիսյանի վանք, ապա Հին Վեհարանի նորաբաց թանգարան և Մայր Աթոռի տպարան։

Ժամը 15-ին Վեհարանում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկի պատվին տրվում է ողջերթի ճաշկերույթ, որին ներկա են նաև քարձրաստիճանի հյուրին ընկերակցող հայր Կիրիլը, Սերգեյ Գորդենկո, տ. Հուսիկ եպիսկոպոսը և այլ հրավիրյալներ։

Հրաժեշտի ճաշկերույթից հետո **Հայոց Հայրապետի և դոկտ. Է. Կ. Բլեյկի** միջև տեղի է ունենում վերջին գրույցը, սրտագին և ջերմ մթնոլորտում։

Ժամը 17-ին դոկտ. Է. Կ. Բլեյկը, հայր Կիրիլը և Սերգեյ Գորդենկո հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում օդանավակայան։

Հանուն Հայոց Հայրապետի Երևանի օդանավակայանում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար **դոկտ. Է. Կ. Բլեյկին** և նրան ողեկցող **հայր Կիրիլին** ու **Սերգեյ Գորդենկին** ճանապարհում են **տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը, տ. Գևորգ վրդ. Սերադյարյանը, դիվանապետ Հ. Առաքելյանը, միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պ. Ծահրազյանը և Հակոբ սրկ. Գյուլչյանը**։

Բարձրաստիճանի հյուրին և նրան ընկերակցող անձանց ճանապարհում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին աղբյուր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ **Ս. Հովհաննիսյանը**։

Էկոմենիկ շարժման տարեգրության մեջ մի նոր էջ ևս արձանագրվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեյկի Մայր Աթոռ ս. Էջմիածին կատարած այցելությամբ և էկոմենիկ շարժման և հայ եկեղեցու վերաբերյալ մի շարք հարցերով Ամենայն Հայոց Հայրապետի հետ նրա ունեցած ջերմ հանդիպումների և սրտագին գրույցների միջոցով։





ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵՎ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՍ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ
ՏԱԾԱՐՈՒՄ

Այս տարի Մայր Աթոռում բացառիկ հանդիսությամբ նշվեցին «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց» հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» տոնը և Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձը: Վարդանանց տոնի առիթով կատարվեց մաս վարդապետական ձեռնադրություն:

Փետրվարի 9-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, ավանդական շուքով Մայր տաճարում տեղի է ունենում Վարդանանց մատառնակը:

Փետրվարի 10-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում պաշտվում է առավոտյան ժամերգությունը, իսկ ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Ս. Վարդանանց տոնի առիթով հանդիսավոր պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, որը և կատարում է չորս ընծայացումների ձեռնադրությունը, ապա քարոզում է ս. Վարդանանց հերոսամարտի մասին և նոր ձեռնադրվածներին ուղղյալ խրատականով վերջացնում իր քարոզը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափոռով առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում է հոգևոր ճեմարանի երգչախումբը՝ Վրեժ սրկ. Նաջարյանի ղեկավարությամբ:

Ս. պատարագից հետո Նորին Սրբությունը առաջնորդվում է Վեհարան:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, պաշտոնության և ողջ հայ հավատացյալ ժողովրդի տ. Հուսիկ եպս. Սանթրույանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը և ցանկանում Նրան երկար-երկար երջանիկ օրեր՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետը իր գոհունակությունն է հայտնում իր անվանակոչության տարեդարձի առթիվ արտահայտած ջերմ բարեմաղթությունների համար և օրհնում եկեղեցին ու ազգը, ժողովուրդն ու հայրենիքը:

Բոլոր ներկաները շնորհավորում են Հայոց Հայրապետի տոնը աջահամբույրով:

ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Ժամը 13-ին հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի է ունենում հանդես՝ Վիրված ս. Վարդանանց և Ղևոնդյանց տոնին:

Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, արտագին ծափահարությունների ներքո մուտք է գործում դահլիճ:

Հանդեսը սկսվում է Հայաստանի պետա-

կան հիմնի նվազում, որը դաշնամուրի վրա կատարում է Գ. դասարանի ուսանող Կ. Հովհաննիսյանը:

Ս. Ղևոնդյանը և Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսության բացումը կատարում է ճեմարանի տեսուչ տ. Հովհաննիսյանը: Մարտիկները՝ նշելով, որ Վարդանանց հերոսամարտը հայ հավատքի, հայրենասիրության և խղճի ազատության, հաղթանակի տոնահանդեսն է:

Օրվա տոնի գլխավոր բանախոսն է հոգեվոր ճեմարանի դասախոս Երվանդ Մելքոնյանը, որը հանդես է գալիս հետևյալ բանախոսությամբ.

«Պատմական անցյալը եղել ու մնում է միակ չափանիշը, գնահատելու այս կամ այն ժողովրդի ներդրումը համաշխարհային մտավոր ու քաղաքական զարգացման մեջ: Ժամանակն է ժողովուրդների առաքելության որոշողն ու դատավորը: Իսկ եթե արվել ժողովուրդը գնահատվում է իր ներկայից, ապա անպայման ա՛յն պատճառով, որ այդ ներկան դառնալու է մեծ անցյալ ժողովուրդների կյանքում: Անշուշտ մեր ժողովուրդը այսօր ևս շարունակում է պատմական նշանակություն ունեցող սխրանքներ կատարել, կարողանում է իր լուսման ներդրել համաշխարհային մտավոր զարգացման մեջ: Բայց սխալ կլիներ այդ բոլոր գրկել իր հիմնական հեմարանից՝ մեր պատմության կառույցից: Իսկ մեր պատմությունը հարուստ է պայծառ մտքի փայլատակումներով, հավատի և ազատության համար մղված բոլոր պայքարի ու մեծ կամքի վկայություններով:

Մեր ժողովրդի կյանքում, մինչև Վարդանանց պատերազմը, և նրանցից հետո, քիչ չեն մեծ ընդհարումները ա՛յն ժողովուրդների հետ, որոնք ցանկացել են վճռել մեր նախատախիքը: Նա շատ անգամ է դիմագրավել ավելի ուժեղ թշնամիների: Բայց այդ բոլորի մեջ, և հատկապես հետագա դարերի որպես հայ մարդու ազգային ինքնագիտակցության և մարտունակության խթան, միշտ ընդգծվել է ու վեր առնվել ա՛յս պատերազմը: Պատճառը պարզ է. որովհետև այս պատերազմը «Հայոց պատերազմ» է, ինչպես այն շատ ճիշտ բնութագրել է Եղիշեն: Այն մղվեց հաճում հա՛յ ժողովրդի նախատաքի և մղվեց ամբողջ հայ ժողովուրդի կողմից և համարվեց բարձունքը մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի: Ռազմադաշտում են շինականը իր կոշտացած ձեռքերով, ազնվատոհմ նախարարը իր գինկոյրական վարպետությամբ, եկեղեցականը իր ժաշակներտ հավատքով, որպես այդ պատերազմի ոգին, երիտասարդը, իր եռանդով և «փափկասուն տիկնայք» ի-

րենց մեծ նվիրումով ու համատ համերալությամբ:

«Ոչ երևեր այնուհետև առաել տեղն քան զճառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ որ քան զոր նուագեալ յարութենէ: Մի՛ սիրտ յօժարութեան ամենեցուն՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց»:

Համագգային և իր բախտորոշ նկարագրով Վարդանանց պատերազմի հետ թերևս կարելի է դնել միայն Սարգսրապատի նախատմարտը, որտեղ բառիս բուն իմաստով ամբողջ հայ ժողովուրդը գնեց ի ձեռին կոնց իր բախտը, իր ինքնահաստատման իրավունքը, ճանապարհ բացելով դեպի աշօրը՝ մեծ ապագան:

Մեր կյանքը եղել է մաքառումների մի շղթա, որտեղ հայ մարդը իր ապրելու իրավունքը նվաճել է իր արյունով Ասորեստանի ու Հոմի, և՛ Բյուզանդիայի, հին Պարսկաստանի և՛ արաբական ու թուրքական տիրապետողների դեմ: Դարեր շարունակ այդ երկրները հաջորդաբար ցանկացել են մեզ կտրել մեր հողից, նույնիսկ դուրս նետել պատմության թատերաբեմից, բայց մեր ժողովրդի կամքը ջրղեղվել է այդ հարվածների տակ և կերտել իր պատմությունն ու մշակույթը: Այս բոլորը նրա աննկուն կամքի արդյունքն է, նրա հոգու համատ պայքարը: Այստեղ էլ հենց պետք է փնտրել Վարդանանց պատերազմի կուլանը:

Շուրջ երկու դար էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանում դարձել էր պետական կրոն: Այդ դարերի ընթացքում եկեղեցին ճիգ չիմայեց քրիստոնեությունը հայ մարդու հոգում ապրում դարձնելու համար, քրիստոնեությունը հայկականացավ:

Ե դարասկիզբ: Բոլոր դարերի հայ մտքի ամենամեծ հանճարը նրան պարզեց ամսահոլության գաղտնիքը, հայկական գիրը: Հայացավ Աստվածաշունչը: Մեկը մյուսի ետևից հայ որոնող մտքի առաջ բացվեցին այդ ժամանակ ծանոթ համամարդկային մշակույթի ողջ մեծությունները: Դպրոցները լույս են ափոտմ Հայոց աշխարհով մեկ: Ժողովուրդը մայրենի լեզվով լսում է եկեղեցու պատգամը, ըմբռնում իր հողի խորհուրդը, մի խոսքով՝ հայացած քրիստոնեությունը դառնում է միս և արյուն, հավատքը դառնում է գիտակցություն: Այս է թերևս սահմանադրական սերնդի ամենամեծ ծառայությունը. հայ գրերը հայ մարդուն բերին իր հողի և հավատքի գիտակցությունը, նրանց միջոցով քրիստոնեական կրոնը այրութենով դարձավ մեր, ազգային ոճ զգեցավ: Գրերի գյուտով և ոսկեդարի մտավորականության ճիգով և Վարդանանց հերոսամարտով մենք դարձանք ազգ:

Իսկ ահա միշտ այս ժամանակաշրջանում հազկերտյան Պարսկաստանը պահանջում է հրաժարվել հայ քրիստոնեությունից, այսինքն պարզապես դադարել ազգ լինելուց, ինքնուրույն գոյություն ունենալուց:

Դեպքերի ընթացքը ծանոթ է, ուստի զանց ենք առնում նկարագրել:

Որոշակի է մի բան. Հազկերտը դաշնագրով իրեն ապահովում է բյուզանդացիների հնարավոր հարձակումից, 449 թվականին հայոց այրուծիի օգնությամբ նվաճված են բուշանները: Նա վստահ է, որ կարող է ամեն ինչ պարտադրել հայերին: Առաջարկում է հրաժարվել քրիստոնեությունից, որովհետև «Շատ եմ վախենում,—ասում է,—չլինի՞ թե աստվածները ձեր պատճառով բարկանան ու վրեժը մեզանից առնեն»: Հայերը լավագույնս գիտեն, որ վտանգվում է Մեծ Ընդհանրականը՝ Աշխարհն Հայոց (Ի. Դեմիրճյան): Չեն զարմանում, որ հնազանդ ծառայելով, հարկերը լրիվ վճարելով հանդերձ, Հազկերտը կարող էր պահանջել հրաժարվել «իրենց հայրենի օրենքից»: Հայրենիքի հողին հարազատ նախարարներն ու եկեղեցականները որոշում են դիմագրավել թշնամու և ա՛յս հարվածը: Թուլամորթ Թեոդոսը, ապա Մարկիանոսը մերժում են ռազմական օգնությունը: Հոները միայն, վրեժ լուծելու համար, համաձայնվում են հարձակվել պարսից վրա հյուսիսից: Հայերը թշնամու դեմ են մեն մենակ: Մարգարե՝ Վասակը, հետապնդելով իր փառասիրական նպատակները, պատճառաբանում է անբավարար ուժը և գործում հայրենասեր հոսանքի դեմ. նույնիսկ այն պահին, երբ հայերի ապստամբությունը փաստ է, նա շարունակում է քաղաքական իր գիծը, հույս ունենալով հայրենադավ գործունեությամբ արժանանալ Հազկերտի բացարձակ վստահությանը: Հայ կղերականությունը եռանդուն աշխատանքի մեջ է, ժողովրդին բացատրում է նրան ապստամբող վտանգը, ոգի ու կորով ներշնչում, և հայերը համարձակ հայտարարում են.

«Յայսմ հաւատոց գմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և եմ դառն հարուածք... Սուր քո և պարանոցք մեր...» (Եղիշե):

Պատմության մեջ բարոյական հաղթանակներ չկան, կան միայն հաղթանակներ, որոնք իրագործում են պատերազմի նպատակը, և պարտություններ, որոնք նախահարձակին ստիպում են հրաժարվել առաջադրած քաղաքականությունից: Հաղթանակները վճռվում են իրենց հետագա արդյունքով: Վարդանանց պատերազմի վերջը հայերին բերեց ցանկալի նպատակը՝ հաստատ մնալ ու ազատ պաշտել իրենց հայրենի օրենքը:

Պատերազմի ելքի վրա որոշիչ դեր ունեցավ Վարդան գորավարի վախճանը: Նա ամբողջ պատերազմի ոգին էր. այդ պատճառով էլ պատերազմը կոչվում է Վարդանանց: Եթե Վախճանաց ապստամբությունը ընդունենք որպես Վարդանանց շարունակությունը, քանի որ ընդհարումները պարսից և նախարարական զորքերի միջև շարունակվում են, ուստի այս 30-ամյա պատերազմը կունենա արդեն քաղաքական իր որոշակի հաղթանակը հաստատված Նվարասակի դաշնագրով՝ 484-ին: Վարդանանց հաղթեցին և այդ հաղթանակով նվաճեցին իրենց հոգու և հայրենիքի ազատությունը, մի ազատություն, որը հայ մարդու համար միշտ եղել է գերագույն նվիրականություն:

Իսկ ի՞նչ խորհուրդ ունի Վարդանանքը ժամանակակից հայ մարդու համար, ի՞նչ է ոգեշնչում նրան:

Անշուշտ այսօր հայրենասիրություն հասկացության բովանդակությունը այլ է, քան Վարդանանց հայրենասիրությունը: Սովորաբար հայրենասիրություն է համարվում այն, երբ մարդը իր կյանքը զոհաբերում է հայրենիքի հողը պաշտպանելու համար: Այդպիսի նահատակություն ունեցան Վարդանանք: Բայց այսօր մեզանից այդպիսի նահատակություն չի պահանջվում, որովհետև մեր ժողովուրդը ապրում է խաղաղ և իր վերելքի բոլոր հնարավորություններով: Սա անշուշտ չի բացառում այն ճշմարտությունը, որ եթե անհրաժեշտ լինի, հայ մարդը կարող է տալ նաև մարմնական զոհաբերություն: Բայց մի՞թե հայրենասիրություն չէ, երբ ամեն օր, քայլ առ քայլ, յուրաքանչյուրը մի քար է ավելացնում հայրենիքի վեր պացող շենքին: Այստեղ զոհաբերություն է նույնիսկ ամենափոքր ծառայությունը, առանց որի չէր լինի հայրենիքի վերելքը, ինչպես պատերազմում կարևոր է շարքային զինվորի յուրաքանչյուր զնդակը, առանց որի հաղթանակը կմնա անհասանելի: Պետք է կարողանալ իրեն ամեն օր զոհաբերել հայրենիքին, շունչ առ շունչ, կաթիլ առ կաթիլ: Չէ՞ որ հայրենիքի հզորությունը կդառնա լավագույն կովանդ ի փյուռու աշխարհի տարածված հայության գոյատևման համար: Իսկ այդ հզորության մի արտահայտությունը Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, իր դարավոր քարերի սրբությամբ, Ամենայն Հայոց Հայրապետի հայրենանվեր գործունեությամբ: Այսօր ոչ ոք չի սպառնում վերացնել մեր հավատքը, բայց որոշ արհեստականորեն հարուցված արգելակներ սփռուքում խանգարում են հայ ժողովրդի ամբողջական համախըմբվածությունը ս. Էջմիածնի և հայրենիքի շուրջ: Հայոց հայրենիքը ա՛յս է, իսկ հայրենասիրությունը՝ ա՛յս հայրենիքի շա-

հերին համապատասխանող ձգտումը: Էջմիածինը, հատկապես Վեհափառ Հայրապետը, մարմնավորում է այդ ձգտումը: ուստի Նրա գործունեության հակադրվող ուղիները հակադիր են նաև հայրենիքի շահերին: Գիտակցել այս ճշմարտությունը, պիտի նշանակեր հարազատ մնալ Վարդանանց ավանդներին, այսինքն մտածել մեկ և համահայկական վերելքի մասին, որովհետև ժողովուրդների գոյատևման միակ կոմսանը հողն է՝ «հայրենիքը»:

Հարգելի բանախոսը իր ելույթն ավարտում է՝ շնորհավորելով Հայոց Հայրապետի անվանակոչության տոնը, բարեմաղթելով Նրան երկար ու բարձր հայրապետության երջանիկ և բազմերախտ տարիներ՝ ի պայծառություն Մայր Աթոռի, հայ եկեղեցու և ի միսիթարություն հայ ժողովրդի:


Այնուհետև գործադրության է դրվում օրվա տոնի խորհրդին նվիրված գեղարվեստական ճոխ ծրագիր: Հոգևոր ճեմարանի Բ լսարանի ուսանող Հակոբ Խաչատրյանն արտասանում է «Հիմի» էլ լռենք» (Ռ. Պատկանյան) բանաստեղծությունը, նույն լսարանի ուսանող Ավետիք սրկ. Արաքաչյանը՝ Եղիշեի «Տիկնայք փափկատունք»-ը: Ճեմարանի մի խումբ ուսանողներ հանդես են գալիս Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» քերթվածի խմբական արտասանությամբ: Գ.

դասարանի ուսանող Վ. Հովնանյանը կատարում է Ռ. Պատկանյանի «Լոռեց, ամպերը եկան ծածկեցին երկինք» քաջ Վարդան գորավարի հիշատակին նվիրված ազգաշունչ երգը:

Այս հոգևոր ճեմարանի երգչախումբը, նորրոճա Մասիս աբեղա Գալստյանի ղեկավարությամբ, կատարում է «Նորահրաշ», «Արիացեալք» շարականները և «Իմ հայրենեաց», «Պալույն Ավարայրի», «Ով հայոց աշխարհ» խմբերգերը՝ խանդավառության և հայրենասիրական ջերմ մթնոլորտ ստեղծելով բոլոր ներկաների հոգիների մեջ:

Հանդիսության ավարտին օրհնության խոսք է ասում ազգիս Վեհափառ Հայրապետը և նշում, որ Վարդանանց հայրենակներ հերոսամարտը չափազանց եզակի ու բացանիկ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի պատմության հետագա դարերի մեջ, մի հերոսամարտ, որը դարերի խորքից այսօր ևս լուսավորում է և ոգևորում հայ միտքն ու հոգին և հայությանը մղում նոր սխրանքների՝ հայ եկեղեցու պայծառության և հայոց վերածնված հայրենիքի բարգավաճման և ապագա բարօրության համար:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվի փետրվարի 10-ին, հինգշաբթի օրը, սրբոց Վարդանանց տոնի առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Մայր տաճարում կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Հոգևոր ճեմարանի նախկին չորս շրջանավարտ ուսանողներ՝ Դավիթ սարկավազ Դիլանյանը, Հովհաննես սարկավազ Հակոբյանը, Արարատ սարկավազ Գալստյանը և Եղիշե սարկավազ Բաղրամյանը, ձեռնադրությամբ տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, արժանացան քահանայական սուրբ աստիճանին՝ վերանվանվելով տ. Վարդան արքեպ. Դիլանյան, տ. Հովսեփ արքեպ. Հակոբյան, տ. Մասիս արքեպ. Գալստյան և տ. Եղիշե քահանա Բաղրամյան:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, նորընծա երեք արքեպեպոսները Լճայր տաճարում, ըստ Մաշտոցի, աղոթքով և օրհնությամբ, ստացան վեղալ:

Այս առթիվ ուրախությամբ արձանագրում ենք նաև, որ 1971 թվի սեպտեմբերին և 1972 թվի փետրվարին կատարվեցին հետևյալ քահանայական ձեռնադրությունները.

Արարատյան թեմում՝ տ. Սարգիս քահանա Թաշճյանի, տ. Բարսեղ քահանա Միրզախանյանի, տ. Մկրտիչ քահանա Ստեփանյանի, տ. Գալուստ քահանա Քեքիկյանի:

Վրահայոց թեմում՝ տ. Տիրայր քահանա Կոնստյանի, տ. Տաթև քահանա Սաղոյանի, տ. Ծմավոն քահանա Հարությունյանի:

Ծիրակի թեմում՝ տ. Վահան քահանա Մարգարյանի:

Բացի այդ, 1971 թվի դեկտեմբերի 25-ին, սուրբ Ստեփանոսի տոնի օրը, սարկավազ ձեռնադրվեցին հոգևոր ճեմարանի Բ լսարանի հինգ ուսանողներ՝ Վրեժ Նաջարյանը, Նորայր Ավագյանը, Հակոբ Խաչատրյանը, Սամվել Պետրոսյանը և Ավետիք Արաքաջյանը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

15-ը փետրվարի 1972 թ.,

Ս. Էջմիածին



ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Փետրվարի 10-ին, հինգշաբթի օրը, կրկնակի ցնծության մեջ էր Մայր Աթոռի միաբանությունը:

Այդ օրը ավանդական շուրջով տոնվում էին ս. Վարդանանց հիշատակը, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը և կատարվում էր հոգևոր նշանաբանից շրջանավարտ չորս երիտասարդ սարկավագների ձեռնադրությունը՝ ձեռամբ վրահալոց առաջնորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանի:

Կոչում նորընծաների.—Ըստ Ձեռնադրության Մաշտոցի չորեքշաբթի օրը, ս. Վարդանանց հանդիսավոր նախատոնակից հետո, Մայր տաճարում կատարվում է «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտալիակությանը տ. Գևորգ վրդ. Սերադաբյանի, որը վկայում է նորընծաների հոգեկան ու մտավոր պատրաստվածության և քարեմանության ու արժանիքների մասին՝ նրանց ներկայացնելով արժանի քահանայական ձեռնադրության:

Արարողության ավարտին նորընծաները հրապարակով տալիս են իրենց «հաառոյ խոստովանություն»-ը, ըստ Գրիգոր Տաթևացու սահմանած քանոնի (Մաշտոց, Վարդապատ, 1876, էջ 36—37):

Ձեռնադրության և օծման կարգը.—Փետրվարի 10-ին Մայր տաճարում, ս. պատարագից առաջ, կատարվում է նորընծաների ձեռնադրության կարգը:

Նորընծաները ծնրադիր առաջնորդվում են ու բարձրանում ս. խորան և հավատացյալների խոուներամ բազմությանը դառնա-

լով և իրենց ձեռքերը բարձրացրած, հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «ի սարկաագութենէ ի քահանայութիւն սուրբ եկեղեցոյ»:


Մայր տաճարի կամարների տակ հնչում է հանդիսավոր ու հաղթական «Աստուածային և երկնային շնորհ, որ լնու զպէտս սպասարութեան առաքելական եկեղեցոյ»:

Այնուհետև նորընծաները բոլորվում են ձեռնադրիչ տ. Կոմիտաս եպիսկոպոսի շուրջ, որը իր ձեռքը խաչաձև դրած յուրաքանչյուրի գլխի վրա արտաաւանում է ձեռնադրության աղոթքը. «Ես դենն գձեռս ի վերայ տրա և դուք ամենեքեան աղօթս արարէք զի արժանի լինիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տառն Աստուծոյ»: Դպիրները միաձայն վկայում են. «Արժանի են»:

Ապա «Ողջոյն»-ից առաջ կատարվում է օծման կարգը նորընծաների, որոնք աղոթքով և օրհնությամբ ստանում են քահանայական սև փիլոնը, սաղավարտը, փորուրաբը, շորջառը և այլն:

Հանդիսավոր արարողությունը հասնում է հոգևոր վերացման սրբազան բարձունքին, երբ ձեռնադրիչ եպիսկոպոսը քահանայական լիով զգեստավորման մեջ կանգնած չորս նորընծաների ճակատն ու ձեռները օծում է սրբալույս մեղոնով և վերակոչում նրանց հոգևորականի նոր անուններով:

Այսպես, Դավիթ սրկ. Դիլանյանը վերանվանվում է տ. Վարդան արեղա, Հովհաննես սրկ. Հակոբյանը՝ տ. Հովսեփ արեղա, Արարատ սրկ. Գալստյանը՝ տ. Մասիս



ՄԻ ՊԱՀ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ

աբեղա, իսկ տ. Եղիշեն արկ. Բաղրամյանը՝ տ. Եղիշեն քահանա:

Այնուհետև նորընծաները ձեռնադրիչ եպիսկոպոսից օրհնությամբ ստանում են «գալիկին և գմաղգմայն» որպես պատարագ մատուցելու իշխանության նշանակ և, դառնալով ժուլովրդին, տալիս են իրենց առաջին քահանայական օրհնությունը:

«Ողջուն»-ի պահին պատարագիչ եպիսկոպոսը ողջագուրում է նորընծաներին, ուրիշ հետևում են բոլոր «քահանայք և սարկառաք»:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է մինչև հավարտ:

Վեղարի տվչություն.—Փետրվարի 10-ին, երեկոյան ժամերգությունից հետո, նորընծա երեք աբեղաները օրհնությամբ և աղոթքով ընդունում են վեղար:

Տ. Կոմիտաս եպիսկոպոսը հանում է յուրաքանչյուր նորընծայի գլխից սարկավագական «ջրուն»-ը (գդակ)՝ այն փոխարինելով կուսակրոն քահանայության խորհրդանշիչ վեղարով:

Արարողության ավարտին նորընծաները տ. Կոմիտաս եպիսկոպոսի գլխավորությամբ առաջնորդվում են Վեհարան՝ Հայոց Հայրապետի օրհնությունը ստանալու:

Նորին Սրբությունը գոհունակությամբ և սիրով ընդունում է Իր հոգևոր գավակներին, շնորհավորում նրանց և քարեմադրում, որ լինեն հավատավոր ու հարազատ գավակները Մայր Աթոռի և արժանավոր սպասավորները հայ եկեղեցու:

Չորս նորընծաները իրենց «Բառասունք»-ը կանցկացնեն Մայր Աթոռում:

Տ. Վարդան աբեղա Դիլանյան. ավագանի անունով Դավիթ: Ծնվել է 1945 թվականին Լենինական քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում, մինչև 7-րդ դասարան:

1959—1960 ուսումնական տարում ընդունվել է հոգևոր ճեմարան և այն ավարտել 1966 թվականին, փալցուն հաջողությամբ: Սարկավագ է ձեռնադրվել 1965 թվականին:

1966—1972 թվականներին ծառայել է Մայր Աթոռում, Թբիլիսիի և Բաքվի հայոց թեմերի եկեղեցիներում որպես սարկավագ:

1972 թվականի փետրվարի 10-ին ձեռնադրվել է կուսակրոն քահանա ու նշանակվել

հոգևոր հովիվ Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում:

Տ. Հովսեփ աբեղա Հակոբյան. ծնվել է 1944 թվականին Լենինական քաղաքում և իր նախնական կրթությունը ստացել տեղի հայկական դպրոցում մինչև 9-րդ դասարան:

Ավագանի անունով Հովհաննես: 1959 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և այն ավարտել հաջողությամբ 1966 թվականին: Նույն թվականին սարկավագ է ձեռնադրվել և ծառայել Մայր Աթոռում և ապա Դոնի-Ռոստովի հայոց եկեղեցում որպես սարկավագ մինչև 1972 թվականը, աբեղա ձեռնադրության օրը:

Պաշտոնավարելու է Ռոստովի հայոց եկեղեցում որպես հոգևոր հովիվ:

Տ. Մասիս աբեղա Գալստյան. ծնվել է Էջմիածին քաղաքում 1950 թվականին և, ավարտելով տեղի երաժշտական յոթնամյա դպրոցը, ընդունվել է հոգևոր ճեմարան 1963 թվականին և այն ավարտել մեծ հաջողությամբ:

Ավագանի անունով Արարատ: 1969 թվականին ավարտել է հոգևոր ճեմարանը: 1967 թվականին սարկավագ է ձեռնադրվել և ծառայել Մայր Աթոռում որպես դպրապետ Մայր տաճարի:

1971—1972 ուսումնական տարում նշանակվել է հոգևոր ճեմարանի եկեղեցական երաժշտության և հայ խազագրության դասառու: Կուսակրոն աբեղա է ձեռնադրվել 1972 թվականի փետրվարի 10-ին:

Տ. Եղիշեն քահանա Բաղրամյան. ծնվել է 1944 թվականին Սպահան քաղաքում և հայրենիք է ներգաղթել ծնողների հետ 1946 թվականին ու հաստատվել Էջմիածին քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում և ավարտել 7-րդ դասարանը:

1959 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և ավարտել այն հաջողությամբ 1966 թվականին:

1965 թվականին սարկավագ է ձեռնադրվել և ծառայել Մայր Աթոռում որպես Մայր տաճարի թանգարանի վարիչի օգնական և ապա վարիչ:

1972 թվականին քահանա է ձեռնադրվել և նշանակվել ս. Հռիփսիմե վանքի վանահայր:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Փետրվարի 5-ին, շաբաթ.—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ է առնում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանը և մեկնում Բեյրութի վրայով իր պաշտոնատեղին:

Փետրվարի 6-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան արարողություն՝ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի մահվան քառասունքի առիթով:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանը քարոզում է՝ վեր հանելով հանգուցյալ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի եկեղեցական գործունեությունն ու ծառայությունը Մայր Աթոռում՝ որպես Մայր տաճարի լուսարարապետ և Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ:

Այնուհետև ս. Գայանեի վանքում, տ. Հայկազուն արքեպիսկոպոսի շիրմի վրա, կատարվում է դարձյալ հոգեհանգստյան պաշտոն՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության, ներկայությամբ սրբազանի հարազատների և հալիստացյալ բազմության:

Փետրվարի 8-ին, երեքշաբթի.—«Ա. Ղևվոնդյանց քահանայիցն» տոնի առթիվ հոգեվոր ճեմարանի Ա լսարանի ինն սաներ ստանում են ուրարակության աստիճան՝ ձեռամբ Մայր տաճարի փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոքյանի: Խարտավիչակի պաշտոնը կատարում է տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Փետրվարի 13-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մկրտիչ ավագ քին. Մկրտչյանը:

Երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է Մայր տաճարում «Տեառնընդառաջ»-ի նախատոնակը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսատրությամբ:

Այնուհետև Վեհարանի այգում Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, հոգևոր ճեմարանի դասախոսներով և ուսանողներով, վստում է «Տեառնընդառաջ»-ի ավանդական խարույկը, որի շուրջ ապա երգում և ուրախանում են ճեմարանի սաները:

*
* *

**Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառ-
նընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն
Քրիստոսի ի տաճարն.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

*
* *

**Փետրվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր
Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի
նախագահությամբ, ճանդիսավորապես
սկսվում է Արևագալի ժամերգությունը, իսկ
ուրբաթ օրերին կատարվում է Հսկումի արա-
րողություն:**

*
* *

**Փետրվարի 20-ին, կիրակի.—Բ կիրակի
քառասնորդական պահոց (Արտաքսման).**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Նշան քհն. Բեյլերյանը և քարոզում
տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը՝ «Ողորմեա՛
իմձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան
քում, ըստ բազում գթութեան քում քաեա
զանօրէնութիւնս իմ» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ
Հայրապետը:

*
* *

**Փետրվարի 27-ին, կիրակի.—Գ կիրակի
քառասնորդական պահոց (Անառակին).**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մկրտիչ ավագ քհն. Մկրտչյանը,
իսկ քարոզում է նորընծա տ. Մասիս աբեղա
Գալստյանը՝ «Զի այս որդին իմ մեռեալ էր
և եկեաց, կորուսեալ էր և գտա» (Ղուկ. ԺԵ
24) բնաբանով:



«Սկստած» խոսքի դիմաց Նոր բառգրքի հեղինակները բերում են՝ «սկսումն», «սկիզբն», «ծագումն» և, «Αρχή» ու «Principium» հասկացությունները⁴, որոնք արտացոլում են մեզ զբաղեցնող եզրի նաև երաժշտական հին ու միջնադարյան առումները:

Հունական միջնադարյան երաժշտա-տեսական անանուն մի գրության համաձայն են՝ ἡρχή = սկսվածքն ուրիշ բան չէ, եթե ոչ համապատասխան ձայնեղանակի «հատակագիծը»⁵:

Ծանեկան է դիտել նաև, որ այս հարցում իրար հետ համաձայնում և կամ իրար յուսմանում են տարբեր հետազոտողների եզրահանգումները:

Այսպես, Է. Վելեշը քննելով բյուզանդական սկավադները գալիս է եզրակացության, թե դրանք իրենց համապատասխան ձայնեղանակների «հատակագիծերն» են այն իմաստով, որ հանդիսադրում են դրանց (հիշյալ ձայնեղանակների) մեղեդիական կառուցվածքին հատուկ գլխավոր ձայնամիջոցները կամ ելևէջային քայերը⁶: Մինչ Ն. Ուսպենսկին հավատում է, որ ուսական հոգևոր երաժշտության *погласица* = սկավադներն այնպես են հարաբերում համապատասխան ձայնեղանակներին (սրանց ծավալում տիպարներին), ինչպես մեղեդիական արմատական նշանակություն ունեցող պտույտները կամ դարձվածքները՝ «դեյտմոտիվները» իրենց մշակումներին⁷:

Ինչ վերաբերում է հալ եկեղեցական երաժշտության սկավադներին, ապա մեր դի-

տողությունները ցույց են տալիս, որ դրանք (իրենց ուր տեսակներով) առաջադրում են՝ տվյալ ձայնեղանակի լադային կառուցվածքը («դիմող», «գործածական» ու «վերջավորող» ձայները), ելևէջային (մասամբ նաև կշռային) նկարագիրն ու երգն սկսելու, ծավալելու և վերջավորելու նպատակին ծառայող մեղեդիական գլխավորագույն դարձվածքները կամ պտույտները: Ըստ այդմ էլ՝ սկավադների միակցության պաշտոնը տեսության մեջ ուրիշ բան չէ, քան եթե (միջնադարի չափացույցերով) նմուշորհակել (*modeler*) ուր-ձային ողջ համակարգը:

Ներկայացնելով պարզ ու մատչելի, ամբողջական մեղեդիներ, սկավադները հնուց ի վեր ունեցել են նաև ուսուցողական նյութի նշանակություն: Տավափին Ե. Տնտեսյանը հիշտ կերպով նկատում էր. «Երգեր ուսուցանելու համար կերևի թե մեր մախնիքն ալ կգործածեին՝ նախապես սկավադներ ուսուցանելու դրությունը, որ կգործածվի մինչև ցայսօր. աշակերտը նախ և առաջ ձայնելու սկավադները ուսնելով իբր ելևէջ՝ կտպավորվին ասոնք իրեն հիշողությանը մեջ, որով երգերու եղանակները դյուրալ կըմբռնե. հետ ժամանակաց երբ ասոնցմով երգ մը կսկսի, անոր եղանակին ելևէջը կնորոգի յոր հիշողությանը մեջ, երգին ձևն ու դաշնակն ալ խազերու օգնությամբ և ականջալուր հիշողությամբ կգտնե, և ըստ այնմ կըրնա երգել գրեթե ամեն ընթացիկ երգեր»⁸:

Եվ իրոք, Գր. Գապասաբալյանն, օրինակ, որ գրեթե ամբողջ էությունը միջնադարյան տիպի երաժիշտ է, իր գրվածքներում սկզբվածքների մասին խոսում է որպես ուսումնա-կրթական նյութի: Երաժշտության տեսաբանը նախարական և առաջ է բերում ուր ձայնեղանակների սկավադները (խազերով) ու տալիս անհրաժեշտ բացատրությունը. «Սորա յիրաքի կրթողը և վարժողը են իբր գնորահասուն,—գրում է նա,—ականքելով եկեղեցական ապագա երգիչները,—որ նախ քան բարձր սկսելոցն, մեղմ և հանդարտիկ սկսեն ձայնի, և ապա դուն ինչ յառաջ երթեալ բարձրանալ, որպէս թէ աստիճան քան զաստիճան ելանելով»⁹...

Գալով սկավադների գործնական կարելի դերին պաշտոններգության մեջ, ապա դրան փաստորեն առաջինը անդադարձալ Գ. Ավետիսյանը, ըստ որում երևույթը քննելով պատմական առումով: «Ջեղանակ երգեցողութեան շարականաց,—նշել է նա,

իմոց» (սաղմ. ԵժԴ), և կամ՝ «Գովես Երուսաղեմ գՏեր» (սաղմ. ԺՍԷ): Ոչ հազվադեպ՝ հարցերին հաջորդող գործառնությունը ևս ունենում են սկավադ՝ վերոհիշյալ երկից մանկանց օրհնության 29-րդ տունը («Օրհնեցէք ամենայն գործք Տեսուն գՏեր, օրհնեցէք և բարձր արարէք զնա յախտեանս») կամ մյուս տներից մեկը. (37)՝ «Օրհնեցէք տիրք և գիշերք գՏեր», (40)՝ «Օրհնեցէք աղբիւրք գՏեր» և այլն:

Սկավադների այս խոսքերից, ուրեմն, իսկույն հայտնի երևում է, թե հաջորդող շարականը կանոնի կամ կարգի (սարքի) բաղկացուցիչներից որ մեկն է: Եվ լոկ այս իմաստով հիշտ է Եզն. քի. Երզնկյանցի այն դիտումը թե՝ «սկավադները որոշում են մի ձայնեղանակի մեջ գտնված շարականների իրենց մտքի համեմատ որ տեսակին պատկանիլը» (տես նրա՝ Դասագիրք հայկական ձայնագրության, Վաղարշապատ, 1880, էջ 24):

⁴ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ.:

⁵ L. Tardo, L'Antica melurgia bizantina, Grottaferrata, 1938, էջ 210:

⁶ E. Wellesz, նշվ. աշխ., էջ 303-309:

⁷ H. Успенский, նշվ. աշխ., էջ 60:

⁸ Նկարագիր Երգոց Հայաստանեայց եկեղեցու, Պոլիս, 1874, էջ 119:

⁹ Գր. Գապասաբալյան, Գրքով որ կոչի. ճուազաբան, Վ. Պոլիս, 1794, էջ 198:

նկատի ունենալով սաղմոսների և շարականների խառն (ընդերուզված) երգեցողությունը, — այլազգի տեսանկյունից շատաչինքան գոր այժմս առնենք: Վասն զի ընթերցումը ի հիմն խրատս ժամակարգության, զի զշարական իրաքանչիւր սաղմոսի ոչ սկսանէին յետ վճարելոյ զսաղմոսն ի լման, որպէս այժմոսս է սովորութիւն, այլ քանի մի տուն ասացեալ ի սաղմոսէն, յարէին զսաղմոսն շարականին՝ նոյնպէս կրկնելով. մինչև սպաս ի վճարել սաղմոսին՝ երգէին զետին տուն շարականին: Եւ որպէս այժմ շատաչին տան շարականին սկսումս առնենք զսաղմոսն տուն սաղմոսին, նոյնպէս նախնիքն յայտունս շարականին սկսումս առնէին զմիջին տուն սաղմոսին: Նշանակ այս սովորութեան յայտնապէս երևի այժմ երկրորդ ողորմեայն պահոց թի՛ Ողորմեա ինձ Աստուած իմ ողորմեա, զի անպատասխան եմ և այլն. որ շատաչին տան սկիզբն դնի թիւնս իմ, որ է վերջն առաջին տան սաղմոսին, այսինքն՝ Քաւեա զանօրէնութիւնս իմ: Յերկրորդ տան սկիզբն դնի **Տառապեալք**, որ է վերջն իններորդ տան. այսինքն՝ Լսելի արա ինձ... և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք: Իսկ յերրորդ տան դնի **թեան քո**, որ է վերջն ժե տան՝ Փրկեա զիս յարեմէ... ցնծասցէ յեզու իմ յարդարութեան քո»¹⁰:

Մի առիթով արդեն նշել ենք, որ այս դիտողությամբ Ավետիքյանը նպաստում էր նաև խազագիտական խնդիրներից մեկի լուծմանը¹¹:

Իսկ այստեղ անհրաժեշտ է կարևորել ուրիշ կետ: Եվ հատկապէս այն, որ սրանով հայագիտության մեջ առաջին անգամ լույս էր փոփոխում շարական երգերի հիմն, բուն միջնադարյան կատարման կերպի հետ առնչվող խնդիրների վրա:

Ավելի ուշ այդ խնդիրներն ավելի մանրամասն քննեց Վ. Հացունին¹², հիմնորեն օգտագործելով Մաքենցաց «Խրատք»-ը (ժամատեղաց) ու 1284-ին գաղափարված «Խրատք շարականաց»-ը ևս, որով պարզ դարձավ, թե ինչքան բնութագրական է եղել հայոց պաշտոնեղծության համար մարգարեական օրհնությունների և սաղմոսների

կատարման ընդմիջարկումը՝ շարականների երգեցողությամբ, և թե, ուրեմն, ինչպիսի գործնական նշանակություն են ունեցել դասակարգումների կատարած սկզբնականները նույն պաշտոնեղծության մեջ (ի տարբերություն անգամ բյուզանդականի)¹³:

Հայ հոգևոր երաժշտության այսօր հայտնի սկզբնականները պատմական դարավոր զարգացման բովից ու նաև անկման շրջանի միջով անցած իրակություններ են, որոնց նախնական բյուրեղացումը վերաբերում է վաղ միջնադարին:

Երբվանի՞ց են խազագրվել սկզբնականները: Դժվար է ասել¹⁴: Մինչև վերջերս նույնիսկ կարծւում էր, որ ձեռագրերում առհասարակ չկան դրանք¹⁵: Մենք դրանց հանդիպել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի երկու գրչագրերում, գաղափարված՝ XVI դարում¹⁶ և 1634 թ.-ին¹⁷, տարբեր խազագրությամբ: Խազալիորումով դրանցից տարբեր են նաև Գր. Գապասարյանի առաջ քերածները¹⁸: Մինչ վերջիններիս զգալի մոտենում են, ասենք՝ XIX հարյուրամյակի ընթացքում տը-

¹³ Բյուզանդական պաշտոնեղծության մեջ սաղմոսների ընդմիջարկումով կամ փոխերի հետ խառն կատարվել են ոչ բոլոր ինքնուրույն («շարական») տիպի երգերը, այլ դրանցից $\sigma\tau\epsilon\lambda\lambda\epsilon\gamma\sigma\tau$ կոչվածները միայն, որոնք և ամփոփված են $\Sigma\tau\epsilon\lambda\lambda\epsilon\gamma\sigma\tau$ անվանվող հատուկ ժողովածուներում: Այնպես որ, սաղմոսասացությունը երգեցողության հետ կապող (անցում իրագործող) սկզբնականների պարզապես համախառն դիմելու պետք չեն ունեցել: Զմուռանք նշել սակայն, որ միջլալ անցումներն իրագործելու անհրաժեշտության դեպքերում ևս, սկզբնականները բյուզանդական պաշտոնեղծության մեջ հնչել են՝ հոգ չէ թե քիչ ավելի պարզ երաժշտական մի դերով՝ որպես տվյալ երգի ձայնադասական «աղաարարող» տարրեր, ինչպես ցույց տրվեց արվեստյան երաժշտագիտության էջերում: Տե՛ս O. Strunk, *Intonations and Signatures of the Byzantine Modes*, «The Musical Quarterly», XXXI, 1945, էջ 339-56:

¹⁴ Գուցե եղել է և ժամանակ, երբ դրանք, կառուցվածքի պարզության պատճառով, ընդհանրապես չեն էլ խազագրվել (ինչպես ասենք՝ սաղմոսները): Համեմատել դեպք, ռուսական հոգևոր երաժշտարվեստում, օրինակ, погласица = սկզբնականների նմանգրության՝ XVI դարին վերաբերելու համեմատները հիշող դրանով է բացատրում Ն. Ռապենսկին (տես նրա վկայակոչված աշխատությունը, էջ 60):

¹⁵ Տե՛ս Ռ. Արթյան, Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 117:

¹⁶ Մատենադարան, ձեռ. № 594, էջ 9ա—բ:

¹⁷ Մատենադարան, ձեռ. № 3522, էջ 1ա—3ա (ստորև ցույց ենք տալու երկու գրչագրերի ևս նըշված էջերը):

¹⁸ Գր. Գապասարյան, նշվ. աշխ.-ը, էջ 175:

¹⁰ Տե՛ս Է. Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ Ժ:

¹¹ Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և հայկական խազերի վերածնության խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 37—38:

¹² Տե՛ս նրա՝ Պատմություն հայոց Աղօթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 235:

պագրված շարակնոցների մեջ խազերով գետնադրվածները¹⁹:

Սկսվածքների եղանակները գրառված են հայկական նոր ձայնագրության նշանների օգնությամբ ևս: Այդ գրառումների մեջ ամենաարժեքավորները Ն. Թաշմյանի իրագործածներն են²⁰:

Իսկ եվրոպական ձայնանիշներով գրառված ու մի քանի հրատարակությունների միջոցով վաղուց ի վեր գիտական շրջանառության մեջ մտած սկսվածքների եղանակների վերաբերյալ իմանալի է հետևյալը: Գործը նախաձեռնողները երկու եվրոպացի գիտնականներ էին, որոնք հեռու լինելով հայ երաժշտության փորձից, հին եկեղեցական երգիչների կենդանի կատարմամբ իսկ լսած մեղեդիները, բնականաբար, չեն կարողացել ճիշտ ձայնագրել:

Առաջինը հայագետ Օրյոդերն էր, որն իր «Արամեան լեզուին գանձ» արժեքավոր աշխատության մեջ առաջ բերեց հայ երաժշտության սկսվածքները²¹, տակավին XVIII դարասկզբներին (դրանք գրառելով Ամստերդամում գործած ու իրեն աջակցած հայ վարդապետներից): Երկրորդն էր Վիլտտոն, որը շուրջ հարյուր տարի վերջ նորից միջագային ասպարեզ հանեց մեր սկսվածքները, դրանք ձայնագրելով Գահիրեի հայկական եկեղեցու դարապետի երգածից²²:

Պարզ է, որ կատարված լինելով ավելի ուշ, եվրոպական արևելագիտության զարգացման շատ ավելի բարձր մի մակարդակի վրա, Վիլտտոնի ձայնագրությունները, Օրյոդերի իրագործածների համեմատությամբ, ավելի հաջող էին: Չնկատելով դա (ավելի ճիշտ, երևի տեղյակ չլինելով Վիլտտոնի աշխատությունից, որի խորագիրը չի էլ հուշում ընթերցողին, թե այնտեղ խոսք կլինի նաև հայկական երաժշտության մասին), Պետերմանը դեռևս անցած դարակեսերին հայկական սկսվածքների հարցում հենվում էր Օրյոդերի վրա²³:

Վերջինիս ձայնագրությունների մի թերությունը՝ արևելյան-քրիստոնեական երաժշտությանը հատուկ զարդոտությունների բացակայությունը նրանցում, և Վիլտտոնի գրառումների առավելությունը այս տեսակետով՝ ցույց տվեց Ֆետին, համեմատության կարգով մեջբերելով հայկական սկսվածքների բննարկվող երկու տիպերը ևս²⁴:

Ամբողջ հարցն այն է, սակայն, որ Օրյոդերի ու Վիլտտոնի գրառումները չեն արտացոլում, նախ և առաջ, հայ երաժշտության համաձայնությանին (լարային) հիմունքները²⁵, և դրա համար գոհացուցիչ չեն կարող համարվել: Բացի դրանից, Ֆետին բոլորովին աչքաթող էր արել (և դա հասկանալի է՝ գիտական ինֆորմացիայի խնդիրներից դեռևս հեռու այդ ժամանակների համար), որ հայկական սկսվածքների եղանակների գրառման գործում շատ որոշակի մի համագրվան էր գույացել արդեն 1864-ին, երբ՝ միխիթարյանների «Երգք Հայաստանեայց եկեղեցույ» գրքուկի հրատարակությունից դրված է. Տնտեսյանը լույս էր ընծայել «Բովանդակություն նուագաց» անուն տետրը²⁶: Այն մինչև օրս էլ հայ երաժշտության սկսվածքների եղանակների՝ եվրոպական ձայնանիշներով կատարված գրառումների մեջ բռնում է առաջին տեղերից մեկը:

Ընդհանրապես ասած, սկսվածքներին վերաբերող ձեռքի տակ եղած նյութը քննելի է նաև՝ համապատասխան խազագրությունների վերծանման, հնուց ի վեր ութ-ձայնի համակարգի կապակցությամբ, ապա և սկսվածքներին կից հիշատակվող, այսպես կոչված «հարակա» կամ «մշտակա» («Յարակայք ձայնից») երգերի որոշման. և վերջապես, մեզ զբաղեցնող իրականությունների հաստատագրման կարճամիտի և ընդարձակ տիպերի տարանջատման տեսակետով:

Սկսվածքների խազագրության մասնավոր խնդիրը զատ չէ խազավոր ձեռագրերի վերծանության ընդհանուր հարցից: Եվ պարզ է, որ վերջինիս առաջընթացից²⁷ է կախված առաջինը, ուստի առաջմ մի կողմ թողնենք այն:

¹⁹ Լամոն. Ծարակնոց, Կ. Պոլիս, 1815, էջ 40թ. Ծարակնոց, Կ. Պոլիս, 1853, էջ 874. Ծարակնոց, Էջմիածին, 1861, էջ 781 («Վասն սկսանելոյ ձայնից շարականաց»):

²⁰ Տե՛ս Ջայնագրեալ Ծարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 10—24 (մենք ճիշտ սրանք ենք առաջ բերելու եվրոպական ձայնագրությամբ):

²¹ Տե՛ս J. Schröder, Thesaurus Linguae Armenicae, Amstelodami, 1711, էջ 246:

²² Տե՛ս M. Villoteau, Description de l'Égypte, t. quatorzième, Paris, 1826, էջ 338 (պետք է նշել, որ Վիլտտոն այստեղ ցույց է տալիս նաև սկսվածքների ուշագրավ ու շահեկան մի խազագրություն ևս):

²³ Տե՛ս H. Petermann, Über die Musik der Armenier, „Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft“, Leipzig, Band V, 1851, էջ 363:


²⁴ F. Fétis, Histoire Générale de la Musique, t. IV, Paris, 1874, էջ 75-76 և 77-78:

²⁵ Սույն խնդիրը իրավացիորեն սրել է Ռ. Աթա-յանը. տես նրա՝ վերը վկայակոչված աշխատությունը (էջ 117):


²⁶ Ե. Տնտեսյան, Բովանդակություն նուագաց Հայաստանեայց տուրք եկեղեցույ (ըստ ութն ձայնից), Կ. Պոլիս, 1864:

²⁷ Կարծում էինք սկսած լինել գործը, Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական վերջին (1970 թ.) նստաշրջանին կարդալով «Պարզագույն խազա-

Բոլորովին առանձին է «հարակա» երգերի խնդիրը ևս, որին, հույսով ենք, հատկապես կանգնադառնանք պատեն առիթով։ Այնպես որ, այստեղ փոքր-ինչ կանգ առնենք նշված կետերից լուրջ երրորդի վրա։ Սկսվածքները ձեռագրերում հաշտմաքերելուց առաջ դժվար էր լինում քիչ թե շատ վատահույությամբ կողմնորոշվել դրանց հաստատագրման տարբեր տիպերի հարցերում։



Էր մահ մի մեծացուցեի ու մի հարցի սկսվածքները (քն դարձվածքում և գծում)։ Իսկ Ն. Թաշախանը նույն սկսվածքները առաջ էր բերում ըստ շարական երգերի բոլոր տեսակների, և մասամբ՝ անգամ ըստ ձայնեղանակների դարձվածքների և ծանո. միջակ ու հորդոր բնութագրերի։ Արդ՝ ո՞րն էր ճիշտը։ Տեսականորեն դատելով՝ Թաշախանը։



Եվրոպացի գիտնականների աշխատություններում բախվում էինք լուրջ օրհնությունների սկսվածքներին։ Գալստասարալյանի գրքում դրանց հանդիպում էինք նույնիսկ «Օրհնեսցուք զՏէր» կրճատ ձևով։ Կ. Պոլսում և Լեւոնիանում հրատարակված վերահիշյալ շարակնոցներում դարձյալ վերականգնվում էին օրհնությունների սկսվածքները (լրիվ կերպով), որոնց աղելացվում էր մի ստեղծի սկսվածք էլ (սովորաբար՝ մանկունք)։ Տճոնեպանը, բացի դրանցից, տալիս

անցյալում ևս գոյություն է ունեցել սկսվածքները հաստատագրելու երկու տիպ. կարճամիտի՝ օրհնությունների և (որ շատ կարելի է)՝ հարցերի սկսվածքների մեկտեղումով, ու ընդարձակ՝ նաև հարցերի շարքի բաղկացուցիչների ու ճաշունների և համարձիների սկսվածքների առաջ բերմամբ։ Առաջինը ներկայացված է Մատենադարանի վերին հիշատակված գրչագրերից № 594-ում, հետևյալ խազավորումով.


[Կիշե 1 (ձեռագրական երկու էջ՝ ա, բ)]

գրությունների վերծանությունը՝ զեկուցումը։ Սա է, որ գիտական հոգվածի վերածված փճակում լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում (1971, № 2, էջ 145), արգո խմբագրության առաջարկով՝ հոգվածիս խորագրին ավելացվելով «փորձ» խոսքը։ Եվ հետո, ուրիշ առիթներով՝ ուրիշ առաջարկներ և այլն, որոնց լույսի տակ արդեն մտածում ենք, թե ճիշտ էինք հավակցել արդյոք գործի ընդհանուր ամանակալին առումը։ Վերջերս ամանակի,

առողջանության ու կեսաղորության նշանների համատեղ կիրառության ուսանելի հանգամանքների հանդիպեցինք միջնադարյան մի բանի գրչագրերում, որոնք և առ հավետ տպավորեցինք մեր գիտակցության մեջ, արտաբնական հավատով (հիմա, գործի մասի՝ Ներսես Լաւրբոնացի, Մեկն. Ժող. Ո՛ր է գործըն՝ միատարր բարի, այլ՝ յիշում ժամանակին, և ո՛չ գոյի՝ յորժամ արտաբնական ժամուն է» և շարունակությունը, որ ավելի ևս խոստում են նշանների, և


Ակավածքների հաստատագրման կարգամիտի տիպը այսպիսին է եղել միշտ, այսինքն՝ օրհնությունների և հարցերի ընդգրկումով:

Գրչագիր-խազավոր սույն սկավածքներին, ամենաընդհանուր գծերի մեջ, համապատասխանում են Ե. Տնտեսյանի կատարած ձայնագրությունները²⁸ «Բովանդակությունն առաջաց» տեսքում: Եվ ասիտս, որ երաժշտության տեսաբանը լոկ օրհնությունների սկավածքներն է լրիվ (աձ-դկ շարքով) բերել նշված տեսքում:



Մյուս՝ № 3522 գրչագրում եղածը, հակապակն միջնադարյան երգչային մի ուրիշ դրվագի ավանդություններն է ներկայացնում: Չնայած դրան, այստեղ ևս, բնականաբար, մախ մեկտեղված են օրհնությունների աձ-դկ սկավածքները: Հետո տրվում են հարցերը, բոլոր բաղկացուցիչներով, նաև ճաշուններ, համբարձիներ՝ ըստ ձայնեղանակների, ու վերջում՝ ստեղծիների մի ամբողջ շարք:

[Կիշե 2 (ձեռագրական հիմն է՝ ա, բ, գ, դ, ե)]:



կամ՝ Սաղմ. Լ՛. «Իստե՛ա Տէ՛ր զայնոսիկ՝ ոյբ դատեն գիս. մարտի՛ր ընդ այնոսիկ՝ ոյբ մարտընչին ընդ իս» ու շարունակությունը, և մանավանդ՝ Նարեկ, Մատենան Ողբ. «Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝



Իբր ապաշա՛ն սերմանող անբերրի երկրի:

Մի՛ լիցի ինձ երկնե՛լ և ոչ ծընամե՛լ,
Ողբալ՝ և ոչ արտասուե՛լ, խորհե՛լ և ոչ հառաչե՛լ,
Ամպի՛լ և ոչ անձրեւե՛լ, ընթամա՛լ և ոչ հառանե՛լ,
Ինձ ձայնե՛լ և քեզ ոչ լրսե՛լ, պաղատի՛լ և անտես
մընալ,

Կողկողե՛լ, և ոչ ողորմե՛լ,
Աղաչե՛լ, և ոչ ինչ օգտե՛լ, զոհե՛լ և ոչ ճենճերե՛լ,
Զքե՛զ տեսանե՛լ և դատարկ եղանե՛լ:

²⁸ Թեպետև դրանք թանգարանային հնություններին են վերաձված արդեն, տեղի տրվող պատճառով, ցավոք, չենք կարող այստեղ վերահրատարակել այդ ձայնագրությունները ևս:

Սա էլ, հաս, սկավածքների հաստատագրման ընդարձակ տիպն է, որի համապատասխանը (դարձյալ՝ ամենաընդհանուր գրծերով), տեսնում ենք Ն. Թաշնյանի կատարած ձայնագրությունների մեջ: Թեպետև՝ Թաշնյանի օրոք պաշտոնեղբայրության մեջ գիշերային ժամը երևի թե արդեն իսկ առավոտյանի հետ կատարվելով, նա կարիք չի զգացել աձ-դկ օրհնություններն առանձին մեկտեղելու: Եվ մեկ էլ՝ գիտակցաբար ներկայացնելու համար հայոց սկավածքների պատմական զարգացման ամենավերջին փուլերից մեկը, դրանք նա ձայնագրել է ոչ միայն ըստ շարական երգի տեսակների և ուր ձայների, այլև՝ ի հարկին՝ ըստ դարձվածք տիպի ձայնեղանակների ու տարբեր (չափավոր, օսնր և այլն) ընթացքների (այսինքն՝ ձոքր-ինչ ընդարձակելով վերը բեր-




ված ընդարձակ շարադրամեր, պահպանելով, սակայն, նրա՝ հատկապես մինչև ստեղծված ընկած մասի՝ սկզբունքը. ստեղծվածի մասը Թաշնյանի մոտ սովորական է):

Ահա թե ինչու, եկրուպական ձայնանշաներով Տևոնայանի կատարած ձայնագրությունների հրապարակումից հետո («Բովանդակությունն նուագաց» տետրում), այսօր, մեծագույն ուշադրումով, կարիք ենք զգում՝ հանդիսանալու մատչելի նույն ձայնագրության փոխադրված վիճակում ունենալ նաև սկրիվածքների թաշնյանական ձայնագրությունները:

Դա իրագործելիս կատարել ենք մի երկու մասնակի կրճատումներ (հիմնականում՝ տեղ խնայելու մտահոգությամբ), որոնք ոչ մի չափով չեն անդրադառնա սկալածքների միակցության, որանց ամբողջականության վրա:

Մույն ձայնագրություններին ծանոթանալիս, շահեկան է դիտել, որ եթե, սրանք, որպես սաղմոսասացությունից շարականներգությունը անցումն ապահովելու կոչված իրականություններ, վերաբերում են՝ գլխավորապես՝ շարականի ութ-ձայնի համակարգին. այլ իրենց մի բանի կողմերով թելուզ անուղղակիորեն արտացոլում են նաև հայոց հին



Սաղմոսարան-Ժամագրքի երգեցողությանը հատուկ առանձին գծեր (հիշտ է, փոփոխված վիճակում):

(Սկալածքների եղանակավորումը հաջորդ համարներում):



ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՄՍՂՈՒ ՆՈՐԱՎԱՆՔԸ*

Ժամատան հատակը պատած է Օրբել-
անների տոհմին պատկանող անձանց և
անքի միաբանության բարձրաստիճան հո-
ւսկրականների գերեզմաններով, որոնք
ստավորված են երեք շարքով և որոնց
ապանաքարերը բավականին մեծ են և
սակված են շատ գեղեցիկ ու նուրբ ձևով:
Դանց մի մասն ունեն տապանագրություն-
ը՝ հետևյալ ձևով.—

ա. «Բարեպաշտ իշխանաց իշխանին
Ալլեկումին է տապան»:

բ. «Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիս-
կոպոս թվ. 2Թ.» (1260 թ.):

գ. «Զբարեպաշտ մայր իշխանացս
գԱսփնայն յիշեցեք»:

դ. «Թվիս 2ԻԴ. (1274 թ.) Տուն իմա-
տից եւ հանճարոյ Արաբել Յովհան-
նէս հոշակատր մետրոպոլիտ Սի-
ւնեաց»:

ե. «զբարեպաշտ տիկինն գնաթելն յի-
շեցեք. թվ. 2ԽԴ (1295 թ.):»:

զ. «Այս շիրիմ շնորհալիր Սարգսի է՝
Սիւնեաց եպիսկոպոսի եւ անյաղթ
հռետորի թվ. 2ԽԵ (1298 թ.):»:

է. «ի թվին 2ԾԳ. (1304 թ.) Այս է շի-
րիմ հանգստեան մեծի մետրոպոլիտ
Սիւնեաց Ստեփանոսի»:

ը. «Տէր Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս.
թվ. 2ԾԴ. (1305 թ.):»:

թ. «Այս է հանգիստ Առաքել եպիսկո-
պոսին, որ հանգեաւ (ի Տէր): թվ.
ՌԻ (1571 թ.):»:

ժ. «Տէր Յոհաննէս Սիւնեաց եպիսկո-
պոս»:

ժա. «Ընորատր Քորեպիսկոպոս ան-
հաղթ հռետոր»:

ժբ. «վայելչագեղ տղա և զգեռաբոյս պա-
րոն Զովանն»:

ժգ. «զվաղաթառամ գՍամուն լաղաթս
յիշեցեք»:

ժդ. «Արիորդն է Թամթիկ, լաղաթս յի-
շեցեք»:

ժե. «զպարոն թաղեց»:

ժզ. «Գէորգ նեթամթիկ»:

ժէ. «զգեղեցկափթիթ ծաղիկն եւ զքա-
ջողէշ մանուկն, վաղաթառամ Իվա-
նէ, յիշեցեք. թվ. 2ԽԴ (1294 թ.):»:

ժը. «վայելչագեղ եւ դեռաբոյս պատա-
նին Ուրուսն յիշեցեք, թվ. 2ԽԴ
(1295 թ.):»:

ժթ. «Գեղեցկածաղիկն է Իվանն» (վախ-
ճանվել է 1260 թվին):

ի. «Քաջ զսպառազենն է Փախրաւո-
լան»:

Ժամատանը եղած մյուս գերեզմանները
տապանագրություններ չունենալու պատ-

* Ծարուսված «Էջմիածին» ամսագրի 1972 թվա-
նի № Ա-ից:

նառով հայտնի չէ, թե ում են պատկանում:
Բացի գերեզմաններից, ժամատան ներ-
սււմ, արևելյան պատին կրց կանգնեցված
են մի քանի մահարձաններ՝ գեղաքանդակ
խաչքարերով, որոնցից ոմանք ունեն գրա-
վոր հիշատակություններ՝ հետևյալ ձևով.—

«Ի թվիս 2Ժ (1261 թ.). ի կամս ո-
ղորմութեան Արարչին եւ Բորթէլ, որ-
դի Էլիկումին, որդոյ մեծ Լիպարտին
կանգնեցի զխաչս աստուածընկալ
սուրբ Աշխատի մար իմոյ Թամթայ՝ իշա-
տակ յախտեցից, աղաչեմ յաղաթս յի-
շեցեք ի Քրիստոս»:

«Եւ Յովհաննէս Արարէլ Սինեաց
արհի եպիսկոպոս շինող սուրբ եկեղե-
ցոյս, իշէլ աղաչեմ (զիս) եւս, եւ զբա-
րեպաշտ իշխանաց իշխան զարեան
մերձաւորն իմ զքաջ մեհամարտիկն
զԲորթէլն եւ զղշտյափառ քրիստոսա-
սէր զոյգն իւր Վախախն, նորաբողոք
զառակալքն իրեանց՝ Բեշքէնին եւ Ի-
վանէին թվին 22Ա. (1322 թ.)»:

«Եւ եղիշայ եպիսկոպոս կանգնեցի
զխաչս ի փրկութիւն հարեղրսար իմոյ
Առաքել եպիսկոպոսին. թվին ՌԺԷ
(1569)»:

«Եւ Աբաս կանգնեցի զխաչս որդոց
իմոց Սմբատայ եւ Դաթի, որ կիսա-
րեայ փոխեցան առ Քրիստոս եւ թողին
ինձ կսկիծ. որք երկրպագեք յաղաթս
յիշեցեք. ամեն»:

«Այս Գայիսն միւսեալ արեամբ ամե-
լոյն Յիսուսի, որով հարեալ խոցեցաւ
գոռոզն անմարմին. եւ կանգնեցաւ հրա-
մանաւ աստուածապաշտ իշխանաց իշ-
խանի Սմպատի՝ ի փրկութիւն որդոյ ի-
րոյ՝ Բորթէլին. իշեցեք»:

4. Ս. Գրիգոր եկեղեցի.—գտնվում է Ս.
Կարապետի կամ Ստեփանոս Նախավկայի
անվան եկեղեցու հյուսիսային կողմում՝ նը-
րան կից: Ստեփանոս Օրբելյան պատմիչը
տեղեկացնում է, որ Սմբատ Օրբելյանը մա-
հանում է Թալրիզ քաղաքում, ուր նա հյուր-
ընկալվում էր Ատրպատականի կառավարիչ
Արդուն խանի մոտ: Նրա աճյունաստիճը
արքայալայել հանդեսով դուրս են բերում
Թալրիզից և բերում թաղում են իրենց
տոհմական գերեզմանատեղին՝ Ամաղու Նո-
րավանքում: Սմբատի եղբայր Տառափնը
նրա դամբարանի վրա 1275 թվականին
կառուցում է մի եկեղեցի՝ Գրիգոր Լուսավոր-
չի անունով:—

«Եւ ինքն (Սմբատ Օրբելյան իշխանը—
Հ. Ե.) յետ քազում շինութեանց աշ-
խարհաց և վանորներից և եկեղեցեանց և

մեծամեծ և երևելի գործոց, որ անց ընդ
ամենայն նախնիս իւր, գնաց ի մեծ դի-
ւանն արքունի առ Արդունն և Սահիպն
ի Դավրեժ շահաստան: Եւ անդ հիւան-
դացաւ հիւանդութիւն մեծ, որ և մեռաւ
իսկ:...


Եւ եկեալ ամենայն մեծամեծացն յացին
զնա, և մեծապէս պատուով զարդարե-
ցին զդագաղս նորա արքայակերպ ճո-
խութեամբ, և այնպէս քարճարացուցեալ
քազմականօք, խաչիւք վառելովք, ջա-
հիւք և մոմեղենօք, պաշտամամբք մե-
ծաձայն քազմութեամբ քահանայից
զարմացուցանելով զաշխարհագումար
մայրաքաղաքն՝ հանին հանդիսի ընդ
դուռն նորա. և բերեալ ի հայրենի դամ-
բարանն սուրբ ուխտին Նորավանից. և
աշխարհախումբ հանդիսի եղին ի տա-
ւանի ընդ հարս իւր ի թուականին 722
(1273 թ.): Վասն որոյ և շինեւ եղբայր
իւր Տառափնն նմա տուն տապանի, և
եկեղեցի յանուն արքայն Գրիգորի, և
անդ փոխեւ ի հանգիստ գեղբայր իւր
Սմբատ»:

Ս. Գրիգոր եկեղեցու կառուցման վերա-
բերյալ, քացի Ստեփանոս Օրբելյանի՝ վերը
մեջ բերված տեղեկությունից, եկեղեցու
մուտքի ճակատակալ քարի վրա պահպան-
վել է նաև կառուցման մասին հետևյալ ար-
ձանագրությունը:

**«Եւ Տառափն իշխանաց իշխան շինեցի
զդամբարանս յաղազս եղբոր իմո
Սմպատ արքային, վասն որո աղա-
չեմ իշէլ. ի թվ. 2ԻԳ»** (1275 թ.):

Վերը մեջբերված տեղեկություններից
հետևում է նաև, որ դա սուկ եկեղեցի չէ,
այլ մի տեսակ դամբանատուն-եկեղեցի:
Պարզ է դառնում նաև, որ Սմբատ իշխանի
թաղումը տեղի է ունեցել 1273 թվականին,
իսկ դամբանատուն-եկեղեցու կառուցումն
ավարտվել է 1275 թվականին՝ նրա մահ-
վանից երկու տարի հետո:

Գրիգոր Լուսավորչի անվան այդ եկեղե-
ցի-դամբանատունը փոքրածավալ մի կա-
ռուցվածք է՝ միանալ քաղիյիկ ձևով: Արե-
վելյան ծայրում հարդարված է շատ գեղե-
ցիկ կիսավոր արքիդը՝ բեմով (նկ. 4):
Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ պո-
նագարդ շրջանակով և կիսավոր ճակատա-
կալ մեծ քարով: Երկու լուսամուտներից մե-
կը քացվում է արևելյան կողմից՝ շեղ դիր-
քով դեպի հարավ, իսկ մյուսը՝ արևմտյան
կողմից՝ մուտքի վերևում: Ամբողջ շենքն ա-
վարտված է վարդագույն ավազաքարի մա-



Նկար 4. Ամաղու Նորավանք.—Ս. Գրիգոր
Լուսավորիչ եկեղեցի-դամբանատան արքիդը

քուր տաշված քարերով՝ ամուր կրաշաղա-
խի միացությամբ. տանիքը պատած է սալ-
քարերով:

Եկեղեցի-դամբանատան ամբոջ հատակը
պատած է գերեզմաններով՝ երկշարք դա-
սավորությամբ, որոնց հսկա տապանաքա-
րերը մշակված են շատ գեղեցիկ և նուրբ
ձևով: Դրանց մի մասն ունեն տապանագրու-
թյուններ հետևյալ ձևով.—

- ա. «Սմբատ արքային է տապանն. յի-
շեցեք. թվ. 21ԻԲ» (1273):
բ. «Ի թվիս 21Լ. (1289): Այս է հան-
գիստ արքայաշուք կողմնակալին՝
հզար և մեծ գործակալին և քաջա-
պահ մեհմարտին՝ Աթաբակ Տար-
սայիհին»:
գ. «Թվին 21ԽԹ (1300): Զգեղեցկա-
տիպն էլիկում, որդի մեծին Տարսա-
յիհին, որ առիծարեն խրոխտ մորն-
չէր ընդդեմ այլասեռ գեղին. աղաչեմ
յիշել յաղաթս»:
դ. «Ի թվ. 21ԽԷ (1298) թագազարմ ար-
քայունին Միմա խաթունն, դուստր

մեծ կողմնակալին Աղանից՝ Զալա-
լին»:

ե. «Զաշխարհաշեն... դշխուսիստ պա-
րոն զթամթա խաթունն, մայր Բիր-
թելին. յիշեցեք. թվին 24Ա (1312):

զ. «Եղբայր մեծ Բուրթելին զգեղահրաշ
Բուրդային երիտասարդ հասակաւ,
որ լետ յոլով քաջ մրցմանց տիգա-
խոցեալ զանթառամն ընկաւ զպսակ.
թվին 24Է» (1318):

է. «Այս յարկ տապանի քանդ քարկու-
թեան է եւ գուր գերութեան հրաշա-
գեղ մանկանն եւ քաջազար երիտա-
սարդին՝ Փախրադալին, որդու մե-
ծափառ իշխանին Տարսայիհին. վասն
որոյ աղաչեմ յիշել. թվին 2ԽԵ»
(1296):

ը. «Զայս նշան Յիսուսի խաչելուն...
Տեառն Աստուծոյ վասն փրկութեան
մարդկան՝ կանգնէ յուսով քրիստո-
սաւէր իշխանութի Թամթա խաթուն
ի քարեխաւսութիւն իւր մեծափառ
իշխանին՝ Էլիկումին և վասն լերկար
կենաց զաւակաց իւրոց Բուրթելին և
Բուրդային»:

(Այս արձանագրությունը փորագրված է
մի խաչքարի վրա, որը դրված է եկեղեցի-
դամբանատան հյուսիսային պատի մեջ):

5. Ս. Աստվածածին եկեղեցի.—Գտնվում է
վերը նկարագրված հուշարձանների խմբի
հարավ-արևելյան կողմում, մեկուսի: Նրա
արևմտյան պատի վրա, արտաքուստ, երկ-
րորդ մուտքի վերևում, շրջանակի ներսում
փորագրված արձանագրության համաձայն,
որը մեջ ենք քերում ստորև, այն կառուցել է
իշխանաց իշխան Բուրթել Օրբելյանը, իր
սիկնոջ՝ Վախաղի և որդիների Բեշքենի և
Իվանեի աջակցությամբ 1339 թվականին:
Այդ իսկ պատճառով էլ այդ հուշարձանը
հայտնի է նաև Բուրթելաշեն անունով:

Ահա կառուցման վերաբերյալ արձանա-
գրությունը.—

«Կաման Աստուծոյ, ես պարոն Բուրթել
իշխանաց իշխան և ամուսին իմ Վա-
խաղ և որդիք իմ Բեշքեն և Իվանէ
կանգնեցաք գեկեղեցիս ի մեր հալալ
արդեանց»: Կառուցման վերաբերյալ
29Ը թվականը փորագրված է դամբա-
նատան մուտքի վերևում, շրջանակի
վերին շերտի վրա:

Իր կառուցապատման և հարդարման
խիստ յուրահատուկ և անչափ հետաքրքիր
ձևերով այդ եռահարկ շենքը հայ արվեստի
ու ճարտարապետության անգուգական կո-
թողներից մեկն է (նկ. 5): Չնայած այն կոչ-



Նկար 5. Աստվածամայնի հուշարձանը։—Ս. Աստվածամայնի և Երվանդի հուշարձանը արևմտյան կողմից

վում է եկեղեցի, սակայն դա սույն եկեղեցին չէ՝ նրա յուրաքանչյուր հարկը ծառայել է առանձին նպատակի։ Օրինակ, ստորին հարկը եղել է դամբանատուն, երկրորդ հարկը՝ աղոթատուն, որ մատյանք է կատարվել դամբանատանը թաղված նեոֆեցյալների հիշատակին, իսկ ամենալեքին՝ երրորդ հարկը ծառայել է որպես զանգակատուն։

Ստորին հարկը կամ դամբանատունը մեկ մետրաչափ գետնափոր է, որ իջնում են քարյա լայն սանդուխտով։ Սրա հատակագիծը արտաքուստ երկարամիզ ուղիղ քառակյունի տեսք ունի, իսկ ներսից խաչաձև է՝ ոչ խորը և ուղղանկյուն խաչքներով։ Ծածկը թաղակապ է։ Միակ գեղեցիկ մուտքը արևմտյան կողմից է. մի փոքր լուսամուտ բացվում է արևելյան կողմից։ Հատակում նկատվում են երեք մեծ գերեզմաններ՝ համապատասխան տապանաքարերով, որոնք քոյրն էլ տեղաշարժ են արված։

Երկրորդ հարկի կամ եկեղեցի-աղոթատան հատակագիծը խաչաձև տեսք ունի ուղղանկյուն խաչքներով։ Արևելյան խաչքն ավելի մշակված է կիսակլոր արսիդը, որի երկու կողմերում կան մի-մի փոքրիկ խորաններ։ Արևմտյան անկյուններում խորանների փոխարեն մշակված են մեկական խորը խորշեր՝ կամարակապ գազաթղթերով։

Խաչքների միացման անկյուններից ձգվող գլանաձև կիսապուրկներ միանալով կա-

մարներով՝ շենքի թաղակապ ծածկի կենտրոնում առաջացնում են լայն բացվածք՝ ժամատների լուսանցք-երդիկների ձևով, միաժամանակ իրենց վրա կրելով գմբեթ-զանգակատունը։ Միակ մուտքը արևմտյան կողմից է, որ բարձրանում են դամբանատան արևմտյան պատին կից, արտաքուստ մուտքի երկու կողմերից ձգվող 15 աստիճան ունեցող քարյա կոնսոլ սանդուխտներով (նկ. 5)։

Զանգակատունը, որը միաժամանակ եկեղեցի-աղոթատան համար հանդիսացել է որպես գմբեթ՝ թմբուկը պոմազարդ է եղել՝ սրածայր վեղարով։

Ս. Աստվածամայնի եկեղեցու եռահարկ աղ շենքը միաժամանակ շրջապատի զարդարված է մարդկանց, կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներով, ինչպես և բուսական ու երկրաչափական ձևերի հարուստ զարդաքանդակներով, որոնք մշակված են վերին աստիճանի մուրք ձևերով։ Այդ հանգամանքը, իր հերթին, առավել շուրջ ու գեղեցկությամբ է տալիս հուշարձանին։

Դամբանատան մուտքի շրջանակը կողերից եզերվում է երկրաչափական ձևի մուրք միահյուսված երկու լայն շերտերով և գլանաձև բներ ունեցող կիսապուրկներով։ Մուտքի կիսակլոր ճակատակալ քարի վրայի բարձրաքանդակը պատկերում է Մարիամ Աստվածածինը՝ բազմած բարձի վրա, մանուկ Հիսուսը գրկին, իսկ կողքերին՝ Եփրեմ և Սիբայել հրեշտակներին՝ մատապատասխան մակագրություններով։ Մուտքի ճակատակալ քարը եզերվում է աստամուսվոր քանդակներ ունեցող կամարով, որից վերև, շրջանակի անկյուններում քանդակված է մի-մի աղավթի՝ մարդկային կերպարներով (գլխով) (նկ. 5)։

Դամբանատան միակ լուսամուտը բացվում է արևելյան կողմից՝ երկար ու նեղ, ուղղանկյուն բացվածքով, որի պսակը զարդարված է ծաղկեհյուս քանդակներով, իսկ այդ պսակաքարի վրա, նույն ծաղկեհյուս ձևով քանդակված է. — «Բորթել իշխանաց իշխանի տեք Աստուած ազնե»։

Առանձնապես հետաքրքիր և ուշագրավ են եկեղեցի-աղոթատան մուտքի շրջանակի քանդակները՝ կազմված երեք շերտերից (նկ. 5), մշակված ութաթև աստղերի ու երկրաչափական զանգված ձևերի զարդաքանդակներով։ Մուտքի կիսակլոր ճակատակալ քարի վրայի բարձրաքանդակը պատկերում է Հիսուս Քրիստոսին՝ կայքերին Պողոս և Պետրոս առաքյալները։ Իսկ դրանից վերև, ճակատակալ քարը եզերող կամարաձև շերտի երկու կողմերում՝ գծավոր շրջանակի անկյուններում քանդակված է մեկական աղավթու պատկեր։

Եկեղեցի-աղոթատան պատերն արտաքուստ զարդարված են գլանաձև բներ և գեղեցիկ խարիսխներ ու խոյակներ ունեցող պտուհաշարերով, որոնք միանում են որմնակամարներով: Իսկ միջսրնային տարածությունները պատած են բուսական ու երկրաչափական ձևերի զարդաքանդակներով, ինչպես և զանազան կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներով:

Զանգակատան՝ գետնին թափված սյուների վրա կան առանձին մարդկանց ամբողջական և սրբապատկեր բարձրաքանդակներ՝ զանազան տարազներով (նկ. 6, 7):

Ս. Աստվածածին եկեղեցու առաջին շենքն ավարտված է կարմրագույն հանքաքարի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախի միացությամբ: 1840 թվականի երկրաշարժից քանդվում է նաև այս հուշարձանի գլմբեթ-զանգակատունը և պատերի վերին մասերը:

6. Պարսպը.—Ամաղու Նորավանքը՝ վերը նկարագրած հուշարձանների խումբը շրջափակված է բարձր պարսպապատերով, որոնք շարված են անմշակ ավազաքարերով՝ առանց կրաշաղախի: Տեղ-տեղ նկատվում է բրգաձև աշտարակների հետքեր: Ամբողջական վիճակում պահպանված միակ մուտքը հյուսիսային կողմից է, որի եզրերը շարված են սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Պարսպի կառուցման մասին տեղեկություններ չկան. հավանական է, որ այն կառուցված լինի պարսկական տիրապետության շրջանում՝ 18-րդ դարում, մինչև վանքը՝ 1840 թվականի երկրաշարժից ավերվելը: Պարսպից պահպանվել են հյուսիսային և արևմտյան պատերը, ինչպես և հարավային և արևելյան պատերի ստորին մասերը:

7. Վանքի միաբանության բնակելի շենքերը գտնվում են պարսպի ներսում՝ հարավ-արևմտյան անկյունամասում: Նկատվում են միայն երեք սենյակներ, որոնք ծավալով շատ փոքր են և գտնվում են ավերակ վիճակում: Պատերի կանգուն մնացած մասերը շարված են զանազան հանքաքարի տարբեր մեծության անմշակ քարերով՝ հողաշաղախով: Պատերի մեջ օգտագործված են հին շենքերի բեկորներ և գեղաքանդակ խաչքարեր: Կառուցվածքի նման շինակերպը վկայություն է այն բանի, որ նրանք ծամանակակից պետք է լինեն պարսպին:

8. Մեծ կամ առաջին մատուռ.—գտնվում է վանքի հուշարձանների գլխավոր խմբի արևելյան կողմում՝ պարսպից դուրս: Սովորական ձևով կառուցված մատուռ է՝ ուղիղքառանկյունի հատակագծով ու թաղակապ ծածկով: Արևելյան ծայրում մշակված է կի-



Նկար 6. Ամաղու Նորավանք. -Ս. Աստվածածին եկեղեցի-դամբանատան գլմբեթ-զանգակատան սյուներից մեկը

սակյոր արսիդը՝ առանց բեմի: Ծարված է անմշակ լեռնաքարերով՝ կրաշաղախով միաձուլված: Խիստ նշանակալից ու հետաքրքիր է նրանով, որ պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ բազմաթիվ բեկորներ, ունանք արձանագրության մնացորդներով: Օգտագործված բեկորների մեջ նկատվում են 1222 և 1310 թվականները կողո խաչքարերի բեկորներ: Այդ վերջին

հանգամանքը ինքնին ցույց է տալիս, որ մատուռը պետք է կառուցված լինի ոչ ուշ քան 1222 թվականը: Բացի նշված քեյորներից, մատուռի ներսում, հարավային և հյուսիսային պատերի մեջ դրված են մեկական մեծ խաչքարեր, ըստ որի հարավային պատի խաչքարի ամբողջ երեսը պատած է ընդարձակ արձանագրությամբ (տես ստորև), իսկ հյուսիսային պատի խաչքարը խիստ բնորոշ է իր քանդակագործության ձևերով: Մատուռի մուտքի ճակատակալ քարի վրա փորագրված է ՅՈՒՆԵՍԿՈՒՄ-ը:

Մատուռի արևելյան պատը հենամ է բնական մեծ ժայռի վրա, որի տակ նկատվում է ցամաքած աղբյուրի հետքեր: Որ այդ եկե-



Նկար 7. Ամաղու Նորավանք. — Ս. Աստվածածին եկեղեցի-դամբանատան գմբեթ-գանգակատան մի պլանը

ղեցին պետք է լինի, որի մասին հիշատակում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը՝ համարելով Ամաղու Նորավանքի հիմնադրման հանգամանքների մասին:—

«...նաև ի թանձրամած կաշկառուտին, ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն սրբոյ հայրապետին Փոկասու շինեալ. և ի մեջ եկեղեցոյն բոխեր ջուր սակաւ ի ներքոյ բեմին...»⁶:

9. Փոքր կամ երկրորդ մատուռ.—Այս մատուռը նույնպես գտնվում է պարսպից դուրս, վանքի հյուսիս-արևելյան կողմում, պարբային մոտիկ: Սա էլ սովորական ձևով կառուցված փոքր մատուռ է և, հավանաբար ծառայած լինի որպես դամբարան: Ավերակ վիճակում է՝ պահպանվել են պատույցի ստորին մասերը, որոնք շարված են անմշակ մասնի լեռնաքարերով՝ թույլ կրաշաղախի միացությամբ: Քանդված մասերը թափված են ներսը և շրջապատը:

10. Հյուրատուն.—Վերը նշված մեծ մատուռի կամ ինչպես ենթադրվում է՝ ս. Փոկասի անվան եկեղեցու հարավային պատի մեջ դրված խաչքարի ընդարձակ արձանագրության մեջ, որը մեջ ենք բերում ստորև կրճատումներով ու վերծանված ձևով, ասվում է, որ Սարգիս եպիսկոպոսը Տառախն իշխանի կարգադրությամբ Ամաղու Նորավանքում կառուցում է հյուրատուն և մի շարք կալվածքներ՝ գյուղեր, ջրաղացներ, այգիներ ու վարելահողեր է նվիրում հյուրատանը, որպեսզի վերջիններիս եկամուտով հոգացվեն հյուրընկալվողների սկզբերը:—


«Յուսովն առ Աստուած, եւ Սարգիս անարժան եպիսկոպոս, կամաւ եւ հրամանաւ ամենաարհմեալ պարոնացն ի մոց՝ Տառապիմին՝ եղբար Սմբատայ արքայի եւ ամուսնոյ իւրոյ Միկայ խաթունին եւ եղբարց իւրոց Լիսարիտի եւ Թաղային, շինեցի զհիւրատունս եւ Կառ հիւրանոցս... (թվում է նվիրած կալվածքները): Որ զայսոց մուտքն ի հիւրերին պետքն անցոր աւտարքն եւ կամ ուտելիքն ուտեն՝ պարոնացն երախտաւորացն աղաթք եւ Աստուած ողորմեաւ. ստեն. յիշելով զիս եւ զիմ աշխատասեր Առաքելն...»:

Վանքի արևելյան կողմում, պարսպից դուրս, մեծ մատուռից վերև, նկատվում է մի ընդարձակ շենքի ավերակներ, որի հատակագիծը ուղիղ-քառանկյունի տեսք ունի: Պահպանվել է պատերի ստորին մասերը՝ մեկ մետր բարձրությամբ, որոնք շարված են

⁶ Ստ. Օրբելյան, նույն տեղ, էջ 346—47:

ղեցու արսիոյի տակից աղբյուր է բոխելիս եղել, այդ մասին վկայում են նաև 19-րդ դարի վերջերի հայ տեղագիրները, երբ դեռ գործելիս է եղել հիշյալ աղբյուրը: Ինչպես տեղագրական-հնագիտական հետազոտությունները, այնպես էլ մատենագրական վերլուծությունները բերում են այն հաստատ համոզման, որ դա ս. Փոկասի անվան եկե-

տեղական լեռնաքարի տարրեր մեծության անմշակ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Հավանական է, որ այդ կառուցվածքը եղած լինի այն հյուրատան շենքը, որի մասին հիշատակվում է վերը մնջքի և՛ սրճանագրության մեջ: Վերջինիս մեջ հիշատակված Առաքել անունով անձնավորությունը ամենայն հավանականությամբ շենքը կառուցող վարպետը պետք է եղած լինի:



Նկար 8. Ամաղու Նորավանք.—Հին շենքի քանդակազարդ բեկոր

11. Մի ուրիշ շենքի ավերակներ էլ նկատվում են վանքի հյուսիսային կողմում, պարսպից դուրս՝ մոտիկ: Սրա հատակագիծը նույնպես ուղիղ-քառանկյունի ձևով է: Պահպանվել են պատերի ստորին մասերը 1—2 մետր բարձրությամբ, որոնք նույնպես շարված են անմշակ քարերով՝ կրաշաղախի միացությամբ: Պատերի մեջ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր և խաչքարերի բեկորներ՝ 13—14-րդ դարերին վերաբերող զարդաքանդակներով: Պարզ չէ, թե այդ շենքը երբ է կառուցվել և ինչ նպատակի է ծառայել:


12. Զ ի թ հ ա ն .—Գտնվում է վանքից հարյուր մետրաչափ դեպի հյուսիս-արևելք, հիմնովին ավերակ վիճակում՝ պահպանվել

է միայն ձիթապտուղը տրորող կլոր մեծ քարը: Անկասկած է, որ այն պետք է պատկանելիս լիներ վանքին:

13. Մահարձաններ, դամբարաններ, խաչքարեր և հին շենքերի բեկորներ.—Վանքի բակում, պարսպի ներսում ամենուր նկատվում են մահարձաններ, դամբարաններ և թագմաթիվ այլ բեկորներ՝ մշակված շատ գեղեցիկ և վերին աստիճանի նուրբ ձևով, որոնք մեծ մասամբ ունեն գրավոր հիշատակություններ: Մահարձանները խաչքար-կոթողների ձևով են՝ շքեղ ու հարուստ զարդաքանդակներով և հատուկ պատվանդանների վրա ամրացված:

Բակում թափված հին շենքի բեկորներից՝ բացի ս. Աստվածածին եկեղեցու գմբեթ զանգակատան սյուներից, որոնց վրա քանդակված են մարդկանց ամբողջական բարձրաքանդակներ ու սրբապատկերներ, խիստ նշանակալից ու հետաքրքիր է ութաթև աստղերի ձևով՝ բուսական և երկրաչափական ձևերով միահյուսված բեկորը (նկ. 8), որը, ամենայն հավանականությամբ, վանքի կառուցվածքներից մեկի (գույ՝ ս. Աստվածածին եկեղեցու աղոթատան) մուտքի շրջանակի մասը եղած լինի:

Առանձնապես բնորոշ ու արժեքավոր է մի այլ բեկոր (նկ. 9): Դա մի շենքի մուտքի



Նկար 9. Ամաղու Նորավանք.—Հին շենքի բեկոր

նկատակալ քարի աջակողմյան կես մասն է, որի աջ կողմի անկյունում քանդակված է մի առյուծի բարձրաքանդակ՝ մարդու դիմանկարով (գլխով) և բուսական ձևերի զարդաքանդակներով միահյուսված: Մարդն իր գլխին թագ է կրում, որը հաստատում է նրա քաջակորով լինելը և իշխանական ծագում ունենալու փաստը: Կարելի է ենթադրել, որ այդ բեկորը հյուրատան շենքի մուտքի ճակատակալ քարի մի մասը եղած լինի, իսկ մարդու դիմանկարով առյուծի բարձրաքանդակը վերաբերի հյուրատան շենքը կառուցող Տարսաին իշխանին:

Վանքի բակում եղած խաչքար-մահարձանների և դամբարան-գերեզմանների մի մասն ունեն հիշատակագրություններ, որոնք առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայ պատմագրության համար, մանա-



Նկար 10. Ամաղու Նորավանք.—Թաթուս խաթունի իր ամուսնու և որդիների հիշատակի և կանգնեցրած խաչքարը

վանդ՝ Օրբելյանների տոհմի պատմության տեսակետից: Մեջ ենք բերում այդ արձանագրությունները՝ վերծանված ձևով.—

ա. Ժամատան արևմտյան կողմում, պատին կից, մուտքի հյուսիսային կողմում եղած խաչքար-մահարձանի վրա (նկ. 10):

«Ես Թաթուս խաթուն կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո աթաբեկ Տարապիճին և արևշատութիւն որդւոց ի նոց Բարթեղին և Բողոտային. թիւն 20Է: (1308 թ.): Մոմիկ վարդապետ յիշեցեք» (վերջինս խաչքարը բանդակագարդովն է):

բ. Ս. Կարապետի անվան եկեղեցու հարավային կողմում, մի մեծ տապա-նարարի վրա՝ չափածո ձևով.—

«կայ հանգուցեալ յայս տապանի, 2քնաղ մանուկ զարմանալի, Որ իվանե անուն կոչի, Եղջիր ծագեալ Արթեկեցի, Որդի 2եսար մեծ իշխանի»:


գ. նույն տեղ, մի այլ խաչքարի վրա.
«Այս նշան ամեղոյն Աստուծոյ, կանգ-նեալ ի բարե խոտորին իշխանաց իշխանի Հասա-նայ՝ որդոյ Սենեքերիմայ արքայի, որ կեսարեալ փոխեցաւ առ Քրիստոս զրկեալ ի հայրենի փա-նացն...»:



Նկար 11. Ամաղու Նորավանք.—Բարթեղ իշխանի իր եղբայր Բողոտայի հիշատակին կանգնեցրած խաչքարը

դ. Ժամատան հարավային կողմում, մի խաչքարի վրա.—

«կաման Աստուծոյ ես Վուգր՝ որդի Աղթամարին կանգնեցի զխաչս յաղագս մար իմոյ Ասիային: Որ երկրպագեք յիշեցեք ի Քրիստոս. ի թվիս 21Գ» (1284 թ.):



Նկար 12. Ամաղու Նորավանք.—Ա Աստվածածին եկեղեցի-դամբանատունը վերականգնումից հետո

ե. Մի այլ խաչքարի վրա.—

«ՉԺԸ (թվ.) (1269 թ.) եւ դիդ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ եւ բարեխաւսութիւն...»:

զ. Ժամատան հարավային կողմում, մի այլ խաչքար-մահարձանի վրա.—

«Կաման Աստուծոյ եւ կուգոր՝ որդի մեծ Աղթամարին, կանգնեցի զխաչս եղբար իմոյ Փակայ, որ կիսարեալ փոխեցաւ ի Քրիստոս. թվ. 21Դ» (1285 թ.):

է. Մի այլ խաչքարի վրա.—

«զՏիրատուր և զամուսին իւր Խաթուն յիշեցեք. թվին 2Խ» (1291 թ.):

ը. Ժամատան արևմտյան կողմում, մի խաչքարի վրա.—

«Յիշատակ է հարեղբար իմոյ Առաքել եպիսկոպոսին. թվին ՌԾԺ» (1611 թ.):

թ. Ս. Աստվածածին եկեղեցու մուտ, մի խաչքարի վրա (նկ. 11):

«Եւ պարոն Բուրթել կանգնեցի չխաչս ի փրկութիւն հոգւոյ վասն եղբար իմ Բուդղային»:

ճ. Մի տապանաքարի բեկորի վրա.—

«Վարդագուն տոյային Մարտի տրդի Բուրթելին՝ յիշեցեք»:

ժա. Վանքի բակում եղած մի տապանաքարի վրա.—

«Ջհայր տեառն Սարգսի՝ զՅովսէփ յիշեցեք ի Քրիստոս»:

ժբ. Մի այլ տապանաքարի վրա.—


«Ջհայր տեառն Ստեփանոսի՝ Տեր Գրիգոր՝ յիշեցեք»:

ժգ. Մի խաչքարի վրա.—


«Գնեալք արեամբ գառին Աստուծոյ՝ երկրպագողք սրբոյ խաչիս՝ զմխիթար քահանայ հանդերձ ծնողսր...»:

1948—1949 թվականներին զգալի շինարարական և բարեկարգման աշխատանքներ են կատարվել Ամաղու Նորավանքում, որի ընթացքում վերականգնվել է Աստվածածին եկեղեցու քանդված մասերը, պատրաստված է թիթեղյա ծածկ և բարեկարգվել է վանքի ողջ տերիտորիան (նկ. 12):





Մ Ս Հ
ՍՈՒՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆԻ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ
(1896—1972)



1972 թվականի հունվարի 28-ին կարճատև, ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ, ՀՍՍՀ վաստակավոր

իրավաբան, անվանի փաստաբան և դատախազ Սուրեն Ղահրամանի Արևշատյանը:

Ս. Արևշատյանը ծնվել է 1896 թվականի մայիսի 7-ին Երևանում, տիրացու Ղահրաման Արևշատյանի բարեպաշտ ընտանիքում: Սովորել է Երևանի թեմական դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է և 1916 թվականին ավարտել Պետերբուրգի առևտրի ինստիտուտը:

1916—1918 թվականներին հանգուցալը գորակոչվել է բանակ և մասնակցել 1918 թվականին Ղարաբիխայում թուրքերի դեմ մղվող ճակատամարտին:

1924 թվականին նա սովորում և ավարտում է Ռոստովի ժողովրդական տնտեսության ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը և մինչև 1930 թվականը աշխատում ՀՍՍՀ դատաբնիչական մարմիններում լինելով նաև Հայաստանի գերագույն դատարանի անդամ:

1931—1941 թվականներին հանգուցալը մեծ եռանդով աշխատել է նաև արվեստի բրնձագալստում, միաժամանակ սովորել Մոսկվայի թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետում:

1941 թվականից մինչև իր կյանքի վերջը Ս. Արևշատյանը զբաղվել է փաստաբանական աշխատանքով և դատախազել Երևանի սեփական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և գեղարվեստա-թատերական ինստիտուտում:

Մեծ են Ս. Արևշատյանի ծառայություննե-

րը մեր հանրապետությունում երիտասարդ իրավաբան-մասնագետների պատրաստման գործում:

Ս. Արևշատյանը իրավաբանական մի շարք գրքերի և աշխատությունների հեղինակ է և խմբագիր: Նրա գրչին են պատկանում «Հոետորական արվեստի հիմունքներ», «Ծափապիվանի կանոնները», «Դվինի կանոնները» և այլ աշխատություններ:

Ս. Արևշատյանը գործում մասնակցություն է ունեցել նաև ՀՍՍՀ քրեական, քրեական-դատավարական օրենսգրքի մշակման գործում:

Ս. Արևշատյանը երկար տարիներ անդամակցել է Արարատյան թեմի թեմական խորհրդին, որպես ատենապետ, և իր օգտակար ծառայությունները բերել Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենամուկ գործունեությանը: Հանգուցյալը եղել է նաև Մայր Աթոռի իրավաբան-խորհրդատուն:

Ս. Արևշատյանը Մայր Աթոռի կողմից


մասնակցել է խաղաղության պաշտպանության միջեկեղեցական հարցերի վերաբերյալ Մոսկվայի մի քանի կոնֆերանսներին և հանդես է եկել խաղաղության պաշտպանության նվիրված հայրենաշունչ ելույթներով:

Փետրվարի 6-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր տաճարում կատարվում է հոգեհանգստյան արարողություն հանգուցյալի հիշատակին: Տ. Հուսիկ եպս. Սանթրույանը իր քարոզի մեջ վեր է հանում հանգուցյալի հայրենամուկ գործունեությունը:

Հոգեհանգստյան սվարտին Վեհափառ Հայրապետը Վեհաբանում ընդունում է հանգուցյալի հարազատներին, բարեկամներին և ընկերներին, մխիթարության և սիրտ-փանքի խոսքեր ասում ու հայտնում Մայր Աթոռի վիշտը Ս. Արևշատյանի մահվան տխուր առիթով:

Հանգիստ իր ոսկորներին:





ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 294

ՄԱՇՏՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Հայերեն, լատիներեն և լեհերեն)

Թերթերը՝ 254:—**Պրակները՝** 33, յուրաքանչյուրը 8-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները՝ 2՝ 6, ԺԼ՝ 7, ԼԲ՝ 5 և ԼԳ՝ 4 թերթից են:—**Մեծությունը՝** 19.5×11.3×3.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական գունավոր և ծաղկավոր թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** հայերենի դեպքում՝ միասյուն, իսկ օտար լեզվի ժամանակ՝ երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 1բ, 2բ, 253բ, 254ա և 254բ:—**Տողերը՝** անկանոն, 26—34:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** հայերենը՝ ցուրդգիր, իսկ օտար լեզուն՝ լատիներեն տառեր:—**Զարդագրությունը՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1797 թ.:—**Վայրը՝** Լեոպոլիս (Լվով, նախապես Լեհաստանում, իսկ այժմ Ուկրաինայում):—**Մանրությունը՝** Մայր Աթոռի Ձեռագրատունը Վեհափառ Հայրապետի միջոցով 1965 թ. հունիս ամսին ստացել է նվեր Բուխարեստից (Ռումինիա): Գնված է հնդությունների մի խանութից 120 լեյով:

Թ.թ. 5ա—8ա.—Ձեռագիր մաշտոցի մասին հասարակ խրատներ:

Թ.թ. 8ա—244բ.—Մաշտոցի տեքստը: Լրիվ գրված է հայերեն, սակայն բազմաթիվ տեղեր թարգմանված է լատիներենի, իսկ որոշ տեղեր էլ՝ լեհերենի, ինչպես օրինակի համար թ. թ. 23ա—24ա (Հաստամ լևստոմոյ Հայրն ամենակարողն), 25բ (Հայր մեր որ լերկինս ես) և այլն:

Թ.թ. 245ա—246ա.—Ցանկ:

Թ.թ. 246բ.—**Տաղ գԱրթոյ Հոգւոյն**

Եկ սրբարար ստեղծող հոգի
Ձմիտս քոյոց այցել արի,
Լի՛ց վերնական զեղմամբ շնորհի
Ձոր դու ստեղծեր զսիրտ մարդկի:

Մխիթարիչ կոչիս հոգի
Ձիր Աստուծոյ քարձրագունի,
Հուր, սէր, աղբիւր դու կենդանի
Օծումն հոգւոյ իմանալի:

Դու եօթնարիւնեան պարզևօր լի
Մատըն աջոյ հայրականի,
Դու հօր խոստումն ես արժանի
Բանի պըճնօղ մեր կոկորդի:

Տուր զլոյս անշէջ զգալարանի
Հեղ զսէր սրտից անխախտելի,
Չտկարութիւն մերոյս մարմնի
Միշտ զօրացո՛ւ ընդդէմ չարի:

Վանեա՛ր զոտխն ի մէջ հեղի
Զխաղաղութիւն տուր փութակի,

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1966 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1972 թվականի № Ա-ից:

Լե'ր ատաշնորդ լամնագնի
Զմեզ անվերտանգ պահեա' լերկրի:

Տուր քն գիտել զհայրն անծին
Եւ ճանաչել զիր միածին,
Եւ լերկոցունց զրդխեալոյ հոգի
Միշտ հաւատալ լրիւ սրտի:

Հօր Աստուծոյ փառք եղիցին
Եւ յարուցեալ Որդոյն նորին,
Եւ Սուրբ Հոգւոյն մխիթարչի
Ի յաիտեանս յաիտեանի. ամէն:

Թ.թ. 247ա—250բ.—Լատիններն տեքստ:

Նախ հինգ պարագրաֆներ, որոնք սկսվում են հետևյալ տառերով՝

B F R S

ապա լատիններն տեքստը հետևյալ վերնագրերով՝
Benedictio caru: dem Literarum.

Benedictio Ignis.

Absolutio Peneralis cum plenana Indulgentia in articulo mortis.

Թ.թ. 251ա—253ա.—Մի քանի հայերեն աղոթքներ, գրված հետագայում:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 4ա.—Մաշտոց կամ Ծիսարան, ի վայելումն եկեղեցեացն Հայոց, և յատկապես թեմին Լեօպոլսեցւոյ, նորապէս յարմարագոյն շարադրեցեալ:

Ջարարողութիւնս Խորհրդոցն Եկեղեցւոյ (բացի խորհրդոյ կարգի) որոց պաշտումն առ քահանայս պատկանի: Նաև զերթմնեցողութիւնս և զհամայն օրհնութիւնս, որք ի Սուրբ Եկեղեցոց ի կիր արկանին:

Պարունակեալ:

Rituale ad Usus Ecclesiarum Ritús Armeni, & proecipue Dioecesis Leopolitanae. Recenter accommodatius concinnatum.

Coeremonias Sacramentorum Ecclesiae (praeter Sacramentum Ordinis) quorum administratio ad Sacerdotes pertinet: Insuper Exercismos, et omnes Benedictiones, quae in Ecclesia exercentur.

Continens.

Առ եկեղեցեանս Աթոռակալա յամի Տեառն 1797:
Եւ ի թուաբերութեան Հայոց ՌԻՄԶ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբի պահպանակի վրա) DNM-1856.

Թ. 1ա.—Amna-S. S. Switzey-DNM-1856.

Թ. 3ա.—Anticariar Nr. 1, Lei 120.

Թ. 4ա.—Ex² libris Ecel: paroch: r. a. in Lysiec.

Թ. 4բ.—(Կա Էլիպսան և մի կնիք, 4.3×3.5 սմ. չափերով, որ անընթեռնելի է: Հայկական Եկեղեցու կնիքն է, գրված լատիններեն):

Թ. 83ա.—(Կա երեք տող գրություն լեզվով):

№ 295

ԱՌԱՎԱՅ ԳԻՐԸ

Թերթերը՝ 116:—Պրակները՝ 10, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ Ա և Ժ պրակները, որոնք 10-ական թերթից են:—Մեծությունը՝ 16.5×11.3×3.5 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ դիմացկուն թուղթ:—Կազմը՝ կաշեպատ տախտակ, որ ժամանակին ունեցել է երկու բռնիչներ, որոնք հետագայում ընկել են սակայն:—Պահպանակներ՝ սկզբում ժամանակին եղել է երկու թերթ մագաղաթ, որոնք հետագայում կտրատվել են չարագործ մի ձեռքի կողմից: Այժմ մնում է մի փոքրիկ կտոր 15 սմ. երկայնքով և 2—4 սմ. լայնքով: Վրան կարդացվում է 4—5 քառեր միայն. գրված միջին երկաթագրով:—Վիճակը՝ լավ:—Գրությունը՝ միապուն:—Դատարկ թղթեր՝ չկան:—Տողերը՝ 21:—Գծումները՝ ճնշումով:—Գիրը՝ նոսրգիր:—Ջարդագրություն՝ ձեռագիրն ունի մի հատ հասարակ կիսախորան և մի հատ էլ հասարակ զարդագիր (թ. 1ա):—Գրիչը՝ Տիվրիկեցի Պետրոս քահանա:—Պատվիրատուն՝ Ալեքսանոս վարդապետ:—Ծաղկողը՝ շատ հավանաբար նույն ինքը ձեռագրի գրիչը՝ Պետրոս քահանա:—Ժամանակը՝ 1621 թ.:—Վայրը՝ Սուրբ Նշան Եկեղեցի (հավանաբար Տիվրիկի—Արևմտահայաստան):—Ծանոթություն՝ վեհափառ Հայրապետի միջոցով ձեռագիրը ստացված է նվեր Բուխարեստի բնակիչ պրն. Ջարեմ Գոշումյանից 1965 թ. հունիսի 26-ին:

ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիր մատյանը ունի 166 զանազան առակներ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 115բ.—Ցիշտակ է առակաց գիրքս տիպրիկեցի Պետրոս իրիցուն և իր ծնադացն, հարն Յովանէսին և մարն Ջըմրութին, և իր իրիցակնոցն՝ Կեռսէ, և իր որդոյն Պողոս սարկաւագին զփոխեցեալն առ Քրիստոս, և քաջ քաբունապետին հարեղրայրն իմ զՀարապետ վարդապետն, որ եղաք յիշատակ ի ձեռն Ալեքսանոս վարդապետին:

Թ. 116ա.—Փառք անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեան Հայր և Որդոյ և Հոգոյն սրբոյ այժմ և միշտ յաիտեանս ամէն:

Արդ գրեցաւ առակաց գիրքս ընթերձում ուսումնաւսէր մանկանց զի ասացեալ է սայ առն աստուածաբանի և տիեզերայնոչակ եռայմեծին և երիցս երանեալ նազելի քաբունուն և քաջ փազերային վարդապետ: Զի հոգոյ և մարմնոյ շահ և ոգոս է ընթերձողացն: Արդ յերես անկեալ աղաչեմ զսիրողոյ քանի և զորողորեալոյ ի նախանձ բարի յիշեցիք զՊետրոս

երեսն գոյադրեցի որ զառակաց գիրքս գրեցի զի ուսանիցին և զիս յիշեցնեն:

Գրեցաւ գրկունքս թիին հապոց ԲԿԹ (1621 թ.) յուլիս ամսոյ ԻԲ, արեւ շաբաթ:

Դարձեալ աղաչեմ զքեզ մանկունք Սուրբ Եկեղեցոյ զի կարիք մի յաղարթից ձերոց իջէ՛ք յոսկերս իմ և լուսացէ զբազմազարաւ վերս հոգւոյ (թ. 116թ) և մարմնոյ իմոյ և ծնաւորացն իմ և ընդամացս և զառակաց իմ, և զեղբարցն իմ, և զքրերցն իմ զներելիմ և զմահացուն, ամէն:

Դարձեալ յիշեցիք զորդեակն իմ ԳՊօղոս ասրկուացն, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս և բազում սուր երոյ մեզ:

Գրեցաւ ձեռնամբ անարծման Պետրոս իրիցոս, որ յոյժ աշխատեցաւ յայսմ տառիս ի դրան Սուրբ Նշանիս ՏԵՐ Պետրոս խոտմանելի, որ գրեցի յայրի առնելիս մաղձանքն շատ էր աղբատիս: Ով որ յիշէ զանարծման ինքն յիշեալ եղիցի Քրիստոսի միւս անգամ գալտաւան ամէն:

ՀԻՇՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի ներսից կազմված է)

Եղիվարը Տիրան և Զարեհ Գոջումեանի կողմ, իրենց հօրմէն մնացած ներկայ ձեռագիր գիրքը կը նուիրեն Ս. Էջմիածնի Մատենադարանին:

Պարբէշ, 26 Յունիս 1965: Զարեհ Գոջումեան:

Zareh Cocumian -Bd. Republicii 205
Bucarest -Telef. 752913

Թ. 58ա.—(Կաւ Էլիպաան մի կնիք 5.8 սմ. երկայնքով և 2.9 սմ. լայնքով, որի վրա ուղիղներեն և հայերեն գրված է հետևյալը).

Biblioteca Centrala Armeana, Bucuresti 1927

Պարբէշ—Ռումանաց Կեդր. Մատենադարան:

(Նույն կնիքը կա նաև 81թ և 116թ թերթերում):

Թ. ք. 88թ և 116թ.—(Գրչափորներ):

Թ. 115ա.—Եւ դազանչեցի եւ Յովաննէսըս:

№ 296

ԿՈՆԳՐԱԿՍ ԳԻՐԴ

Թերթերը՝ 165 (1—153 մատյանի հիմնական թերթերն են, իսկ 154—165 թերթերը ավելացված են հետագայում):—**Պրակները**՝ յուրաքանչյուրը 12-ական թերթից:—**Մեծությունը**՝ 34.4×21.8×2.5 սմ.:—**Նյութը**՝ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ:—**Կազմը**՝ հաստ սովորաբար, որի վրա կողքին տրված է 1875 թվականը:—**Պահպանակները**՝ սկզբից երկու թերթ մաքուր սպիտակ դիմացկուն թուղթ:—**Վիճակը**՝ լավ:—**Գրությունը**՝ միապետ:—**Դատարկ թղթերը**՝ 1ա—2թ, 161թ—166թ:—**Տողերը**՝ անկրճուն, 30—37:—**Գծումները**՝ առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրք**՝ շնորհգիր:—**Զարդագրություն**՝ չունի: Միայն թղթի վերին մասի ձախակողմյան անկյունում կա մի փոքրիկ կնիք, ոչ թանաքով, այլ ճնշումով, 1.8×1.7 սմ. չափերով, որի վրա գրված է թղթի գործարանի անունը՝ Фабрики Сергиева № 4:—**Գրիչը**՝ շատ հա-

վանաբար Մայր Աթոռի Դիվանատան քարտուղարը:—**Պատվիրատուն**՝ Գեորգ Դ. Ամենայն Հայոց կաթողիկոսը:—**Ժամանակը**՝ 1875 թ.:—**Վայրը**՝ Ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն**՝ սույն ձեռագիրը ստացված է հոգեշնորհ տ. Նարեկ վարդապետ Օսթաթյանի ձեռամբ, հոգևոր ճեմարանի գրադարանից, 1965 թ. հունիսի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. ք. 3ա—148թ.—Գեորգ Դ. կաթողիկոսի 1875 թ. գրած 418 կարևոր կոնդակների և նամակների պատճենները, որոնց մի քանիսին, հետաքրքրության համար, տրվում են վերնագրերը:

Թ. 6թ.—Կոնդակ Ներսէս արք. եպս.-ի Պատրիարքի Կ. Պօլսոյ վասն համոզելոյ զՅակոբ Պէյն Տառեան զԿարապետ Էփէնտին Փափազեան. ի մասին չամսնամաղոյ ընդ դստեր Կարսուկտի Փափազեանց:

Թ. 15ա.—Նամակ արքային Պիրմանիոյ վասն յայտնելոյ թէ ի հովութիւն հայոց որք ընդ իշխանութեամբ նորա են գնացել արքայիսկոպոսն վիճակին Հնդկաստանի և Ասպահանի:

Թ. 20ա.—Հեռագիր նախարարի ներքին գործոց ի Պետերբուրգ վասն առաջադրելոյ նահանգապետին Եկատարինուպատ թոյլատրել քանազ զդարոց Նոր Նախիջևանու գիտիադրեալն ի Թէղուսիալէ:

Թ. 30ա.—Կոնդակ Մակար արքայիսկոպոսի առաջնորդի վիճակին հայոց Վրաստանի վասն հաստատելոյ զՀոփսիմէ Բեքաթեգեանց ի պաշտօն մայրապետութեան, ի տեղի հանգուցեալ Գայիանայ Բէնքուտեանց են:

Թ. 35թ.—Կոնդակ Սինգոյ Սրբոյ Էջմիածնի վասն զարմանն տնօրինել իրեղինաց և ստացումոց Ամսերտամ եկեղեցոյն:

Թ. 62թ.—Կոնդակ Սինգոյ Սրբոյ Էջմիածնի վասն պատուիրելոյ հոգևորականաց ըստ նախնական կանոնաց վարել:

Թ. 78թ.—Նախագիծ կանոնաց յաղագս կառավարութեան տարաքանի Ս. Էջմիածնի:

Թ. 95ա.—Կոնդակ Ներսէսի արքեպս.-ի Պատրիարքի հայոց Կ. Պօլսոյ վասն ստանալոյ մերոյ գթողթան ընկոթեան և զպատճենս պէսպէս գրուածոց յաղագս Երեմիա և Մկրտիչ Լախիկոպոսաց, ի մասին ապօրինատր ձեռնադրութեանց նոցա:

Թ. 107թ.—Կանոնք թեմական դպրոցաց Հայաստանեայց Եկեղեցոյ եղիցոց ի Ռուսաստան վասն հանրական սամմանաց:

Թ. 133թ.—Նամակ առ Կապերական Բարձրութիւն ի Տփլիս, վասն մտանելոյն ծպտեալ իմն և դանակալ ի վանս Ս. Էջմիածնի Նատմովի պաշտօնավարին կառավարութեան Բաժից նահանգին Երեւանաց և Խորասանելոյն գորդուս մատանատն վանիցս յաղագս պատրաստելոյ մերոյ գոյի:

Թ. 138թ.—Նամակ առ Նպարգոսն պարսից ի Թէքրան, վասն զպարտ ու պատշաճ տնօրէնութիւնն առնել առ ի գտառչս առնելոյ նկղակիք դրութեան հայոց վիճակին Զուղայու յերեսաց թողորական քարոզաց և հարստամարութեան հարկապահանջից:

(Շարունակելի)

ՀԱՅ ՀԱՄԱԲԱՐՔԱՌԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌ՝

Բ. ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԲԱՐՔԱՌՆԵՐ

Հայերեն համաքարքառների պատմությունը թևակոխում է իր երկրորդ հիմնական հանգրվանը, որն ընթանում է նոր ժամանակներում գրականության ու գիտության զարգացման հետ կապված նոր պահանջների գծով:

Նախորդ և նոր հանգրվանների բաժանումը, սակայն, անմիջականորեն և անպայմանորեն ժամանակագրական չի եղել: Մինչև առաջին հանգրվանը, ինչպես տեսանք, շարունակում է պահպանել իր գոյությունը դեռ մինչև մեր օրերում, երկրորդը հենց նրա ազդեցությամբ և նրա օրինակով սկսում էր զարգանալ դեռևս սրանից երկու հարյուրամյակ առաջ: Որպես առաջին անգամ՝ ԺԸ դարից մեզ հայտնի է Գրիգոր Նարեկացու երկերի անտիպ համաքարքառը:

Հայ իրականության մեջ հանդես եկող այդ երևույթը ընդհանուր կապերով կապված էր արևմտյան աշխարհում սկսված այն փորձերի հետ, որոնք բնագրաբնական համաքարքառային մեթոդը կիրառում էին աշխարհիկ և զուտ գիտական հետազոտությունների համար՝ լեզվաբանական և աղբյուրագիտական նպատակներով:

Առայժմ դժվարանում ենք ճշգրտորեն ասել, թե առաջին անգամ ե՞րբ և ո՞ր երկրում է սկսել կիրառվել համաքարքառային մեթոդը գրականության և գիտության մեջ նշանավոր հանդիսացած հեղինակների երկերի բնագրային ուսումնասիրության ասպարեզում: Բայց մեզ հայտնի է, որ Անգլիայում, սկսած ԺԸ դարի երկրորդ կեսից և մինչև մեր օրերը, լույս են տեսել հռչակավոր թատերգակ բանաստեղծ Ուիլիամ Շեքսպիրի (1564—1616 թթ.) երկերը մասնակիորեն և կամ ամբողջությամբ ընդգրկող համաքարքառներ: Նման աշխատանքների առաջին հիշատակությունը կապվում է շեքսպիրագետ Ռ. Ուոդների (1713—1775 թթ.) անվան հետ: 1768 թվականին Ուոդները շեքսպիրյան համբավավոր դերասան Դավիդ Գարրիքին ուղղած մի նամակում խոսում էր այն մասին, թե կազմում է Շեքսպիրի թատերախաղերի բառարան, որի փորձամուշը կցել էր նամակին. այդ բառարանը, որի վրա նա աշխատել է մինչև իր մահը և որը մնացել է անտիպ, այժմ գտնվում է Բրիտանական Թանգարանում⁷⁹: Դրանից հետո տպագրությամբ լույս են տեսել Շեքսպիրի երկերին նվիրված համաքարքառային մի շարք գործեր, որոնցից նշենք հետևյալները: Նախ հրատարակվել է Բրիտանական Թանգարանի պաշտոնյա՝ հայտնի գրադարանագետ Ս. Էյսկոուի կազմած համաքարքառը՝

* Ըարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թ. №№ ԺԱ—ԺԲ-ից և 1972 թ. № Ա-ից:

⁷⁹ Ըմբն. F. E. Halliday, «A Shakespeare Companion 1564—1964», Harmondsworth, Penguin Books Ltd., 1964, p. 521.

1790/91 թվականներին⁸⁰։ Այնուհետև լույս է տեսել քերականագետ Ֆ. Տոլսի կազմած համառարբառը՝ 1805 թվականին⁸¹։ Բրիտանական Թագաբանի ձեռագրերի պահորդ Ռ. Նելլը 1822 թվականին հրատարակել է Ենթադիրի և նրա ժամանակակիցների լեզվի բառարանը⁸²։ Ենթադիրը և նրա ժամանակակիցներին հրատարակել է իր համառարբառիկ Մ. Կ. Կլարկը 1844/45 թվականներին հրատարակել է Ենթադիրի խորը⁸³։ Բանասեր Ա. Դալը 1864 թվականին հրատարակել է Ենթադիրի խորը⁸⁴։ 1872 թվականին իր համառարբառիկ և դարձվածքների բառարանը⁸⁵։ 1874 թվականին լույս է ընծայել իր Ենթադիրյան համառարբառ-բառարանը⁸⁶։ Ավելի նոր ժամանակներում Ենթադիրյան համառարբառներ են հրատարակել Ռիլ. Հ. Դ. Ադամզը՝ 1886 թվականին⁸⁷, 2. Մաքլը՝ 1887-ին⁸⁸, Վ. Բարտլեթը՝ 1894-ին⁸⁹, Զ. Ֆորստերը՝ 1908-ին⁹⁰, Ռ. Զ. Կանլիֆը՝ 1910-ին⁹¹,

⁸⁰ S. Ayscough, "An Index to the Remarkable Passages and Words, Made Use of by Shak[es]peare, Calculated to Point out the Different Meanings to which the Word are Applied.", London, 1790 (առաջին մաս, 1-1081 էջ) և Dublin, 1791 (երկրորդ մաս, 1083-1754 էջ)։

Տես նաև նույնի վերահրատարակությունը՝ "...2-d ed., revised and enlarged", London 1827.

⁸¹ Fr. Twiss, "A Complete Verbal Index to the Plays of Shakespeare, Comprehending Every Substantive, Adjective, Verb, Participle and Adverb Used by Shakespeare with Reference to Every Individual Passage in which Each Word Occurs.", vol. 1-II, London, 1805.

⁸² R. Nares, "A Glossary or Collection of Words, Phrases, Names and Allusions to Customs, Proverbs, etc., which have been Thought to Require Illustrations, in the Works of English Authors, particularly Shakespeare and his Contemporaries", London, 1822.

Տես նաև նույնի այլ հրատարակությունը՝ "with considerable additions both of words and examples, by J. O. Hollywell and Th. Wright", vol. 1-II, London, 1859.

⁸³ M. C. Clarke, "The Complete Concordance to Shakespeare. Being a Verbal Index to all the Passages in the Dramatic Works of the Poet", London, 1844-1845.

⁸⁴ Հմմտ. F. E. Halliday, p. 114. Մեզ հայտնի է նրա հետևյալ վերահրատարակությունը. A. Dyce, "A Glossary to the Works of William Shakespeare", London, 1880.

⁸⁵ H. K. Furness, "A Concordance to the Poems of Shakespeare", Philadelphia, 1872.

⁸⁶ Հմմտ. F. E. Halliday, p. 114. Մեզ հայտնի են այս երկի 3-րդ և 4-րդ հրատարակությունները. A. Schmidt, "Shakespeare-Lexicon. A Complete Dictionary of all the English Words, Phrases and Constructions in the Works of the Poet", 3d ed., vol. 1-II, Berlin, 1902. Նույնը՝ 4th ed., vol. 1-II, Berlin und Leipzig, 1923.

⁸⁷ W. H. Davenport Adams, "A Concordance to the Plays of Shakespeare", London, 1886.

⁸⁸ Ch. Mackay, "A Glossary of Obscure Words and Phrases in the Writings of Shakespeare and his Contemporaries Traced Etymologically to the Ancient Language of the British People as Spoken before the Irruption of the Danes and Saxons", London, 1887.

⁸⁹ J. Bartlett, "A New and Complete Concordance or Verbal Index to Words, Phrases and Passages in the Dramatic Works of Shakespeare; with a Supplementary Concordance to the Poems.", New York, 1894. Ունեցել է բազմաթիվ հրատարակություններ. վերջինը՝ 1966 թ.։

⁹⁰ J. Forster, "A Shakespeare Word-Book. Being a Glossary of Archaic Forms and Varied Usages of Words Employed by Shakespeare", London-New York, 1908.

⁹¹ R. J. Cunliff, "A New Shakespeare Dictionary", London, 1910.

**ՀԱՄԱԲԱՐԲԱՌ
ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ
ՄԱՏԵԱՆԻ**

**ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ
ԱՐԴԻ ԱԾԻԱՐՀԱԲԱՐՈՎ**

Ոչխոտափրկ

ՎԵՐ. ՎԱՀԱՆ Գ. ՍԱՀԱԿԵԱՆ



**ՏՊԱՐԱՆ ԱՏԼԱՍ
ՊԵՏՐՈՒՄ
1963**

Վ. Գ. Սահակյանի աշխարհաբար համադարձրածի անվանաթերթը

2. Տ. Օգիոնգը՝ 1911-ին⁹², Բ. Ստիվենսոնը՝ 1937-ին⁹³: Եվ վերջապես 1968—70 թվականների հրատարակությամբ մեզ հայտնի է Մ. Սպիվարի կազմած վեցհատորյա լիակատար համաբարբառը⁹⁴:

Այս համաբարբառները մեծ մասամբ բառա-բնագրային բնույթի են, այսինքն բառարաններ, ուր տվյալ բառի տակ Շեքսպիրի գործերից բերվում են նախադասությունների այն մասերը, որոնց մեջ օգտագործված է այդ բառը. ուրիշներ նույնպես այդ բնույթի լինելով հանդերձ, երբեմն, ըստ հանգամանքների, բառերի դիմաց նշանակում են միայն աղբյուրը՝ հղելով ուղղակի Շեքսպիրի երկերին:

Անգլիսալուսն այսպիսի համաբարբառներ կան կազմված նաև ուրիշ բանաստեղծների և թատերագիրների երկերի համար, ինչպես, օրինակ, Ջ. Չոսերի (1340—1406 թթ.)⁹⁵, Թ. Կիդի (1558—1594 թթ.)⁹⁶, Քր. Մարլոուի (1564—1593 թթ.)⁹⁷, Ջ. Դրայդենի (1631—1700 թթ.)⁹⁸, Թ. Գրեյի (1716—1771 թթ.)⁹⁹, Ուիլ. Բլեյկի (1757—1827 թթ.)¹⁰⁰ և ուրիշների: Եվրոպական մյուս առաջավոր երկրներում ևս գոյություն ունեն նման համաբարբառներ: Մեր նպատակից դուրս է ծավալվել այս ուղղությամբ. միայն նշենք ուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի (1799—1837 թթ.) երկերի համաբարբառը, որը կազմվեց մեր օրերում: Պուշկինյան համաբարբառ կազմելու ուղղությամբ խուսափանում աշխատանքներ էին կատարվում դեռևս 1933 թվականից սկսած, նախ պրոֆ. Գ. Օ. Վինոկուրի ղեկավարությամբ և ավելի ուշ՝ ակադ. Վ. Վ. Վինոգրադովի: Հավաքական հեղինակությամբ կատարվող այդ աշխատանքների արդյունքը եղավ քառահատոր «Պուշկինի լեզվի բառարան»-ը, որը 1956—1961 թվականների ընթացքում հրատարակության տրվեց ՍՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Լեզվաբանության ինստիտուտի կողմից, նույն Վինոգրադովի խմբագրությամբ¹⁰¹:

Համաբարբառային այսպիսի հրատարակությունները հնարավորություն են ստեղծում ուսումնասիրելու անգլերեն, գերմաներեն, ռուսերեն և կամ որևէ լեզվի զարգացման օրինաչափությունները, ընթացքը և աստիճանը՝ ըստ այս կամ այն դարաշրջանի և այս կամ այն հեղինակի մոտ. նաև ուսումնասիրե-

⁹² Ch. T. Onions, «A Shakespeare Glossary», Oxford, 1911. Ունեցել է, սրբագրություններով ու հավելումներով, ավելի քան 10 հրատարակություն. վերջինը՝ 1958 թ.:

⁹³ B. Stevenson, «The Hom Book of Shakespeare Quotations. Being also a Concordance and a Glossary of the Unique Words and Phrases in the Plays and Poems», New-York—London, 1937.

⁹⁴ M. Spevack, «A Complete and Systematic Concordance to the Works of Shakespeare», vol. I-VI, Hildesheim, 1968-1970.

⁹⁵ I. S. P. Tatlock and Arthur G. Kennedy, «A Concordance to the Complete Works of Geoffrey Chaucer and to the Romaunt of the Rose», Carnegie Institution of Washington, 1927.

⁹⁶ Ch. Crawford, «A Concordance to the Works of Thomas Kyd», Louvain, 1906-1910.

⁹⁷ Ch. Crawford, «The Marlowe Concordance», Louvain, 1911-1912.

⁹⁸ Guy Montgomery, «Concordance to the Poetical Works of John Dryden», Los Angeles, Univ. of California Press, 1957.

⁹⁹ A. S. Cook, «A Concordance to the English Poems of Thomas Gray», Boston—New York—Cambridge, 1908.

¹⁰⁰ D. V. Erdman, «A Concordance to the Writings of William Blake. Ed. by David V. Erdman, with the Assistance of John E. Thiesmeyer and Richard J. Wolfe», vol. II, Ithaca (N. Y.), Cornell Univ. Press, 1967.

¹⁰¹ «Академия Наук СССР. Институт Языкознания. Словарь языка Пушкина» (отв. ред.: В. В. Виноградов), т. I—IV, Москва, 1956—1961.

լու՝ որևէ հեղինակի մոտ հանդես եկող լեզվական յուրահատուկ երևույթները, ինչպես և նույն հեղինակի երկերի միջև եղած ներքին կապերը ոչ միայն լեզվի առումով, այլև լեզվի միջոցով ի հայտ եկող իմաստային ու գաղափարական առնչությունների և գիտական բովանդակության առումով: Այսպիսի համապարփակությամբ ուշագրավ է, օրինակ, հին աշխարհի հույն նշանավոր իմաստասեր Արիստոտելի երկերի համաբարբառը, որ Բեռլինի Գիտությունների Ակադեմիայի հանձնարարությամբ կազմել և 1870 թվականին հրատարակել է բնագրաբան Հ. Բոնիտցը և որում ընդգրկված են, հունարեն լեզվի բառապաշարի հիման վրա, Արիստոտելի տեսական, բնագիտական, բնապատմական և այլ երկերը¹⁰²:

Ինչպես ասացինք՝ Նարեկացին հայ առաջին մատենագիրն է, որի գործերն արժանացել են համաբարբառ ունենալու:

Նարեկացու համաբարբառն անանուն աշխատություն է, որի ձեռագիրը մի ժամանակ գտնվում էր Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանում՝ 28 թվահամարի տակ, իսկ այժմ պահվում է նույն քաղաքի Ս. Երրորդություն եկեղեցում: Այդ ձեռագրի նկարագրությունը ժամանակին տվել է Բաբգեն վ. Կյուլեներյանը¹⁰³: Նկարագրողի կարծիքով ձեռագիրը հավանաբար Հակոբ Նալբանի (մեռ. 1764 թ.) ինքնագիրն է, ուստի և հեղինակությունը նրան է պատկանում: Ձեռագիրը բաղկացած է 234 քառասյուն էջերից՝ յուրաքանչյուրը 50—53 տողերով, ըստ որում՝ տողերի ընդհանուր քանակը ոչ պակաս, քան 12.000 է. բայց տողերի քանակը, օգտագործելի տարածության առումով, փաստորեն ոչ թե 12.000 է, այլ 4 անգամ ավելի (48.000), քանի որ էջերը բաժանված են 4 սյունակների:

Համաբարբառի բնույթը բառա-բնագրային է: Ոչ ավելի քան 4 սմ. լայնություն ունեցող սյունակների մեջ տեղավորված են այբբենական կարգով իրար հաջորդող բառերը՝ իրենց վերին աստիճանի կրճատված կապակցություններով: Յուրաքանչյուր բառի առջև դրված է արաբական երկու թվանշան, որոնցից առաջինը ցույց է տալիս բնագրի գլխաբաժանումները, իսկ երկրորդը՝ գլխի հատվածները: Նկարագրողը որպես նմուշ բերում է հետևյալ 8 տողերը, որոնք գաղափար են տալիս համաբարբառի հորինվածքի մասին.

Աղախին Աստուծոյ եւ մայր	80	18
Աղախին եւ ի ձեռի	82	43
յ-Աղախնային ծառայ	98	192
Աղախնանուն հա	96	245
յ-Աղախնեայ ոք աղաչիս	32	22
Աղախնեայ ոք ոյ	90	46
Աղախնոյն ի Սինայէ	100	99
Աղաղակ բարձրութեան	95	20

Համաբարբառը բովանդակում է, սյունակային տողերի հաշվով, 48.000 բառային վկայություն:

Համաբարբառն ընդգրկում է ոչ թե միայն «Նարեկ»-ը, ինչպես կարծում է նկարագրողը, այլ նաև Նարեկացու մյուս գործերը: Դրա ապացույցն այն է, որ տրված նմուշների մեջ կան նաև այնպիսիներ, որոնք Նարեկացու 96-րդ,

¹⁰² Herm. Bonitz, „Index Aristotelicus“, Berlin, 1870. Վերահրատարակվել է 1955 թ.:

¹⁰³ Բաբգեն աթոռակից կաթողիկոս (Կյուլեներյան), «Ցուցակ ձեռագրաց Ղաթթիոյ Ազգային Մատենադարանի Հայոց», էջ 114:

98-րդ և 100-րդ գլուխներից են, մինչդեռ «Նարեկ» գիրքն ունի միայն 95 գլուխ: Համաքարքառի հեղինակը «Նարեկ»-ի 95 գլուխներից հետո՝ հերթապես գլուխներ է համարել նաև Նարեկացու մյուս երկերը, որպեսի ձևով նրանց արդեն պատահում ենք մի շարք ձեռագրերում և Նարեկացու երկերի դրոշ տպագրություններում:

Մեզ համար հետաքրքրական էր իմանալ, թե ո՞րն է եղել Նարեկացու երկերի այն ձեռագիր կամ տպագիր օրինակը, որը հիմք է ծառայել սույն համաքարքառին: Երկար որոնումներից հետո պարզվեց, որ համաքարքառի հեղինակը ձեռքի տակ ունեցել է երկու ձեռագիր, որոնցից մեկը՝ «Նարեկ» գիրքը, իսկ մյուսը՝ Նարեկացու ճառերը: Երկրորդի հետքերը չենք գտել, բայց նրա գոյություն ունեցած լինելը հաստատվում է առաջինով՝ «Նարեկ» հատորով, որ վերջերս մենք գտանք Երևանում: Այս ձեռագիր «Նարեկ»-ը, որն ընդօրինակված է 1851 թվականին ոմն Գրիգոր Սուքիասանցի ձեռքով, այժմ գտնվում է Հայկ. ՍՍՀ Այ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարանում (Հանրային գրադարան)¹⁰⁴: Նրա գլուխները բուն իսկ գրչի ձեռքով նշանակված են լուսանցքների վրա հաշվական տառային թվանշաններով. իսկ հետագայում գլուխները մի անձանից ձեռքով բաժանված են նաևր հատվածների կամ տների, ճիշտ այն ձևով, ինչպես են Աստվածաշնչի տնատումները, և դրանք արաբական թվանշաններով նշանակված են նույն լուսանցքների վրա՝ բնագրից զգալիորեն տարբերվող թանաքով և քարակ գրչածայրով. և հենց այս հանգամանքներն են, որ մեզ առիթ տվին կոահելու, թե պիտի սա՞ լինե՞ր «Նարեկ»-ի՝ մեր որոնած օրինակը: Եվ, իրոք, վերևում որպես նմուշ բերված վկայությունները, նշանակված գլուխներով ու այդ տնահամարներով, մենք տեղն ու տեղը գտանք այս ձեռագրում: Սրանով անվիճելիորեն պարզվում է, որ Նարեկացու երկերի համաքարքառը կազմող հեղինակի, — ամենայն հավանականությամբ՝ Հակոբ Նալյանի, — ձեռքի տակ եղած հատորներից առաջինն այս ձեռագիրն է եղել և թե նրա գրչին են պատկանում այդ տնատումներն ու համարակալումները:

Ի՞նչ նպատակով է կազմված եղել Նարեկացու երկերի այս բազմաշխատ համաքարքառը. զուտ լեզվական ուսումնասիրությունների՞ համար, թե նաև Նարեկացու երկերի մեկնության համար: Հայտնի չէ: Ըստ երևույթի՞ն՝ և՛ մեկը, և՛ մյուսն է եղել նպատակը: Նարեկացու լեզվի խորնությունն ու հայերեն լեզվի լիակատար բառարանների չգոյությունն է, որ, հավանաբար, ուսումնասիր հեղինակին հարկադրել են մեկտեղել նրա գրվածքների ամբողջ բառապաշարը, որպեսզի համեմատությունների միջոցով կարողանա բացահայտել տարբեր նախադասությունների մեջ այդ բառերի ունեցած նշանակությունն ու իմաստային երանգները և ճշգրտորեն պարզել նախադասությունների մեջ ամփոփված բովանդակությունը: Նկատվում է, որ այս գրավիչ սիրտը հետագայում ևս եղել է խթանաբան Նարեկացու երկերով և հատկապես «Նարեկ»-ով զբաղվողների ուշադրության առարկա: Հովհաննես Աստվածատրյանը (պոլսահայ տպագրիչ Աստվածատրի որդին), որը 1774 թվականին Նարեկացու երկերի քննական առաջին հրատարակությունն է տվել

¹⁰⁴ ՀՍՍՀ Այ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարան (Հանրային գրադարան), անձեռնմխելի գրականության բաժին, երկաթյա պահարան, ձեռ. № 2:

Այս ձեռագիրը ժամանակին պատկանել է Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանին, որ կրել է 52 թվամամարը: Նրա մանրամասն նկարագրությունը տես՝ Բաբգևն աթոռակից կաթողիկոս, «Ցուցակ...», էջ 293—300:

2 հատորով¹⁰⁵, «Նարեկ»-ին կցել էր մի փոքրիկ բառացանկ, որը կրում էր «Նշանակությունը խորթին բառից ինչ մատենիս» խորագիրը: Այս բառացանկը որոշ չափով համաբարբառային բնույթ ուներ, որովհետև բառերի դիմաց միաժամանակ նշում էր նաև «Նարեկ»-ի համապատասխան էջերը¹⁰⁶: Նույնաման մի գործ էր նաև վեցետիկյան միաբան Հ. Գաբրիել Ավետիքյանի կազմվածը՝ «Յուրակ մեկնելի բառից ինչ Նարեկին», որ հեղինակը տպագրել է 1801 թվականին իր հրատարակած «Նարեկ աղօթից»-ի վերջում¹⁰⁷:

Նալյանին վերագրվող վերոհիշյալ մեծի գործը՝ Նարեկացու երկերի համաբարբառը թվում է, թե այդ ժամանակ հայ մատենագրության համար մնացել է որպես եզակի երևույթ: Սակայն այդպես չէր: Իրականության մեջ նույն ԺԸ դարում, նույնիսկ դեռ Նալյանից էլ առաջ, հայ մատենագրության համաբարբառ ունենալու գաղափարը հասունանում էր ու զարգանում բառարանագրության հունով և դա մի ուղի էր, որը հնարավորություն կտար ընդգրկելու շատ ավելի լայն շրջանակներ, քան կարող էին ընդգրկել առանձին հեղինակների հատկացված համաբարբառները:

Ինքնին հասկանալի է, որ բառագիտական ու բառարանագրական աշխատանքների մեջ մեծ տեղ են գրավում բնագրերի լեզվի համեմատական ունեցողություններն այն դեպքերում, երբ տվյալ լեզուն ունի գրական անցյալ, ինչպես է հայերենը: Այդ տեսակետից Ստեփանոս Ռոշքայի երկհատոր բառարանը՝ «Գանձ Հայոց լեզուի»-ն, որը երեսնամյա աշխատանքով ավարտվել էր 1731 թվականին և որի ձեռագիրն այժմ պահվում է Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում՝ 6 թվահամարի տակ¹⁰⁸, առաջինն էր հայ բառարանագրության պատմության մեջ: Ռոշքան այստեղ յուրաքանչյուր բառի դիմաց, նրան տրվող բացատրությունն աներկբայելի դարձնելու համար, վկայություններ է բերում իրեն մատչելի եղած հայ մատենագրական աղբյուրներից, ինչպես են՝ Խորենացի, Մամբրե, Եզնիկ, Եղիշե, Զենոբ Գլակ, Հովհաննես Մամիկոնյան, Մխիթար Անեցի, Համամ Արևելցի, «Յաղագս Պիտոյից» գիրքը, քերականների երկեր և ուրիշներ: Ըստ երևույթին՝ առանց վկայության բառ չկա այս բառարանում, ինչպես հեղինակն ինքն է ասում իր նամակներից մեկում, թե «և ոչ զմի բառ թարգմանեմ ինչպես»: Այս առումով և բառագիտական իր լայն ծավալով ու արժանիքներով իր ժամանակի համար մեծարժեք գործ էր այս բառարանը, որի անտիպ մնացած լինելու մասին ափսոսանք են հայտնել մասնագետները. բայց, ի հարկե, համաբարբառային տեսանկյունից սաղմնային վիճակ էր ներկայացնում, որովհետև

¹⁰⁵ «Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հոգևորի, քաջխաղ յիննսուն և հինգ քան» հոգևուն մաղթանաց, նորապէս սրբագրեալ՝ համեմատութեամբ հնագոյն և ընտիր ձեռագիր օրինակաց», Կ. Պոլիս, 1774:—«Հատոր երկրորդ ներքողինաց ճառից չորեցունց արժանատրաց գովեստից՝ ասացելոց ի սրբոյ հօրէն մերմէ Գրիգորէ Նարեկացոյ», Կ. Պոլիս, 1774:

¹⁰⁶ Այս բառացանկն արտատպվում է 1789 թվականին Կ. Պոլսում Ստեփանոս Պետրոսյանի տպարանից լույս տեսած «Նարեկ»-ի վերջում. իսկ հետագայում՝ նաև «Նարեկ»-ի մի շարք այլ հրատարակություններում:

¹⁰⁷ Հ. Գ. Ավետիքյան, «Նարեկ աղօթից, հարազատ և զգուշատր լուծմամբք նորոգ քացայտեալ, ի նպատո քանաւեր աղօթաւորաց», Վենետիկ, 1801: Վերահրատարակվել է 1827 և 1859 թվականներին:

¹⁰⁸ Այս բառարանի Ա հատորը հայերեն-լատիներեն է, Բ-ը՝ լատիներեն-հայերեն: Նկարագրությունը տես՝ Հ. Հ. Տաշյան, «Յուրակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 22—24: Տես նաև՝ Հ. Գ. Ավետիքյան, «Տեսություն ի Գանձ լեզուի Հայոց», կամ ի Ստեփանեան բառարան», Բագմալեն, 1852, էջ 86—95:

թվով շատ սահմանափակ էին հայալեզու մատենագրությունից նրա ընդգրկված աղբյուրները:

Այնու ամենայնիվ Ռոշքայով էր սկսվում հայ մատենագրությունից բնագրային հատվածներ քաղելու, դրանք ի մի բերելու և բառարանության ու բառարանագրության համար օգտագործելու գաղափարը, իսկ դա փաստորեն մատենագրական մի ընդհանուր համաբարբառ ունենալու և գիտական օգտագործման համար նրա ունեցած նշանակության ու պիտանիության մասին գործնականորեն տրվող առաջին գնահատականն էր: Բայց այդ առումով ավելի խոշոր դեր է կատարում 1717 թվականից Վենետիկում հաստատված Մխիթարյան միաբանությունը՝ իր անդամների հավաքական աշխատանքով:

Մխիթար Սեբաստացին և աշակերտները 1749 թվականին հրատարակեցին տարիների քրտնաջան աշխատանքով իրենց պատրաստած «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակի առաջին հատորը, իսկ նրա երկրորդ հատորը լույս տեսավ 1769 թվականին¹⁰⁹: Այստեղ ընդգրկված աղբյուրների թիվը ավելի մեծ էր, քան Ռոշքայի մոտ, թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական մատենագրությունից: Ամենակարևոր տեղը գրավում էր Աստվածաշունչ մատյանը. ապա գալիս էին՝ Խորենացի, Ագաթանգեղոս, Փավստոս, Դավիթ Անհաղթ, Զենոբ Գլակ, Դրասխանակերտցի, Նարեկացի, Շնորհալի, Լամբրոնացի, Սոկրատ, Ոսկեբերան, Նազիանզացի, Կյուրեղ Աղեքսանդրացի, «Զգօն» գիրք, «Վարք հարանց», «Վանոնագիրք», «Ծարակնոց», «Յայամատոք», բժշկարաններ, ճառեր, մեկնողական երկեր և այլն, և այլն: Ինչպես երևում է առաջին հատորի առաջաբանից՝ այս բառարանին հիմք ծառայելու համար նախապես և կամ գործի ընթացքում կատարված էր քարտագրական մի հսկայական աշխատանք, որի շնորհիվ բառերի դիմաց բերված վկայությունների թիվը հաճախ հասնում էր մինչև 20-ի կամ 30-ի: Սակայն, դժբախտաբար, հեղինակները, ինչ ինչ պատճառներով, խիստ կրճատել էին նրանց թիվը և բառերի դիմաց թողել միայն մեկ կամ երկու հատ, լավագույն դեպքում՝ չորսից ոչ ավելի, նաև շատ տեղերում հապավման ենթարկելով վկայությունների բնագրերը: Այդ մասին նրանք գրում են.

«Այլ վասն վկայութեանց եղելոց ի մենջ՝ պարտ է գիտել զերկուս: Առաջին՝ զի ոչ այնչափ էին, որչափ եղաք, այլ առաւել. քանզի բազում բառք էին, զորս հանեալ էաք գրեթէ ի քսան կամ յերեսուն տեղեաց՝ զորոց զամենայն տեղիսն քննեալ, քաղեցաք բովանդակ գտարբեր նշանակութիւնս, և զետեղեալ զնոսա մի ընդ միով. մեկնեցաք զբառսն. իսկ ի վկայութեանց եղաք զերկուս, կամ զերիս. և կամ զչորս. և զայլսն ի բաց թողաք՝ առ ի ոչ ձանձրացուցանել զընթերցողս...: Երկրորդ՝ ի բազում տեղիս զբառս վկայութեանց կրճատելով բերաք, և այս՝ էր ի կամաց, և ոչ վրիպանօք. և պատճառ մեր այս էր, զի պարբերութիւնք բազում վկայութեանց էին երկայնաձիգք, զորս անմարթ էր բովանդակ ի մէջ բերել»:

¹⁰⁹ «Բառգիրք հայկազեան լեզուի, բաժանեալ յերկուս հատորս, յորոց յառաջնուն՝ որ է տպագրեալս այս, պարունակեալ զոն յոգնախոն բազմութիւնք բառից Աստուածաշունչ Գրոց և այլոց երևելի մատենից լեզուազեւ դարապետաց...: Արարեալ ի Մխիթարայ վարդապետէ Սեբաստացոյ Աբրայ Հայր կոչեցելոյ, աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց», Վենետիկ, 1749:

«Բառգիրք հայկազեան լեզուի, հատոր երկրորդ, յորում նախ պարունակին մնացորդք գրաբառ բառից...: Արարեալ բազմատրոն և աշաղորջ ճգանօք յաշակերտաց ամենապատիւ սեւան Մխիթարայ մեծի արքային և քարունակետին Սեբաստացոյ», Վենետիկ, 1769:

Վկայություն-բնագրերի այսպիսի կրճատումն, անշուշտ, հասկանալի էր այն առումով, որ տպագրվող հատորները բառարաններ էին, լոկ բառերի իմաստը պարզելու սահմանված: Այստեղ կարևորն այն է, որ բառարանագրության ուղիով զարգանում էր գաղափարը հայ մատենագրության համաբարբառի գիտական դերի մասին:

Մխիթարյանների հաջորդ սերունդն ավելի կարևոր քայլ է անում այս բնագավառում: ԺԹ դարի սկզբներին Մխիթարյան երեք գիտնականներ ձեռնամուխ են լինում Մխիթար Սեբաստացու և նրա անմիջական աշակերտների ձեռքով հորինված բառարանը բարձրացնելու մի նոր մակարդակի, որի արդյունքը լինում է 1836/37 թվականներին հրատարակումը երկհատոր մի նոր բառարանի՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»¹¹⁰:

Ծավալով վիթխարի այս ձեռնարկումը նաև աննախընթաց էր իր ընդգրկումներով: Սույն բառարանում օգտագործման էին բերված մատենագրական բազմախոսն այլ աղբյուրներ, որոնք մասամբ անմատչելի և մասամբ անձանոթ էին եղել Վենետիկում Մխիթարի օրերին: Նկատի ունենալով, որ այստեղ հայ մատենագրության ընդհանուր համաբարբառի գաղափարն ենք հետապնդում, ավելորդ չենք համարում թվարկել հսկայական քանակություն կազմող այդ աղբյուրներից գոնե գլխավորները, հիշեցնելով, որ նշվող անուններից շատ շատերը միաժամանակ բազմաթիվ երկերի հեղինակներ են: Հայագիր հեղինակներից՝ Ագաթանգեղոս, Փավստոս, Կորյուն, Եզնիկ, Եղիշե, Խորենացի, Փարպեցի, Մամբրե, Հովհան Մանդակունի (և Մայրազունեցի), Դավիթ Անհաղթ (և Հարքացի), Ծիրակացի, Գրիգորիս Արշարունի, Ստեփանոս Սյունեցի, Հովհաննես Մամիկոնյան, Թեոդորոս Բոթենավոր, Լրթանես Քերթող, Կաղանկատվացի, Օձնեցի, Խոսրովիկ թարգմանիչ, Ղեվոնդ Երեց, Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, Զաքարիա կաթողիկոս, Համամ Արևելցի, Խոսրով Անձնացի, Մեսրոպ Երեց, Սամուել Կամբաձորեցի, Ասողիկ, Գրիգոր Մագիստրոս, Լաստիվերտցի, Անանիա Սանահնեցի, Ծնորհալի, Լամբրոնացի, Գրիգոր Տղա, Ուռհալեցի, Գոշ, Հերացի, Գրիգոր Սկևռացի, Գեորգ Սկևռացի, Բենիկ Վանանդեցի, Հովհաննես Գառնեցի, Մաղաբիա Աբեղա, Բարսեղ Մաշկևորցի, Հովհաննես Վանական, Արիստակես Հռետոր, Եսայի Նշեցի, Հովհաննես Երզնկացի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի, Մխիթար Այրիվանեցի, Վահրամ Րաբունի, Օրբելյան, Խաչատուր Կեչառեցի, Հովհաննես Արմիշեցի, Հեթում Պատմիչ, Մովսես Երզնկացի, Զաքարիա Ծործորեցի, Մխիթար Ապարանեցի, Թովմա Մեծոփեցի, Ներսես Մոկացի, Առաքել Դավրիժեցի և ուրիշներ. ինչպես նաև՝ «Ծարակնոց», «Ժամագիրք», «Մաշտոց», «Պատարագամատոյց», «Կանոնագիրք», «Յայսմատուրք», «Գանձարան», «Ախտարք», «Եօթնագրեանք», ճառքնոթիւրներ, տոմարական, բժշկական, մեկնողական և այլ երկեր: Թարգմանական գրականությունից ընդգրկված են՝ Պլատոն, Արիստոտել, Գալիանոս, Փիլոն Եբրայեցի, Դիոնեսիոս Արիսպագացի, Դիոնեսիոս Թրակացի, Իգնատիոս Անտիոքացի, Գրիգոր Սքանչելագործ, Աթանաս Աղեքսանդրացի, Բաբելաս Աղեքսանդրացի, Եվսեբիոս Կեսարացի, Եփրեմ Խուրի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Գրիգոր Նազիանզացի, Ոսկեբերան, Եվագր Պոնտացի, Պրոկլ Կ. Պոլսեցի, Սեբերիանոս Գաբաղացի,

¹¹⁰ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրություն երկից վարդապետաց յաշակերտութենէ Մեծին Մխիթարայ Արքապօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան», հտ. Ա.—Բ, Վենետիկ, 1836—1837:

Երգիչի Կիպրացի, Սոկրատ Սքոլաստիկոս, Կյուրեղ Աղեքսանդրացի, Անտիպատրոս Բոստրացի, Նեղոս, Գեներատիոս Կ. Պոլսեցի, Իսիքիոս Երուսաղեմացի, Նոննոս, Կլիմաքս, Հովհան Դամասկացի, Գերմանոս Կ. Պոլսեցի, Նանա Ասորի, Միքայել Ասորի, «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ», «Զգօն» գիրքը, «Յաղագս պիտոյից» գիրքը, «Վարք հարանց», «Գիրք առաքիւնութեանց և մոլութեանց», և այլն, և այլն:

Հնարավոր չէ գուշակել, թե այս նյութերի հիման վրա կազմված համաբարբառային քարտարանում ո՞րքան էր թիվը բնագրային վկայությունների: Լեռնային հատորի ներածությունից տեղեկանում ենք, որ հրատարակության ժամանակ դրանք զգալի չափով կրճատվել են՝ նյութական միջոցների չգոյության պատճառով: Հեղինակների տված հաշվից երևում է, որ եթե կրճատումները եղած չլիներին, տպագրված երկու հատորների փոխարեն կունենալինք նույնպիսի ծավալով հինգ կամ վեց հատորներ. նշանակում է՝ բառարանը լույս է տեսել մոտ երկու երրորդով կրճատված, և եթե նկատի ունենանք, որ նրա բառագիտական մասը (բառերը և բացատրությունները) չէ, որ կրճատված է, այլ միայն վկայակոչումների, ապա պարզ կդառնա, որ հրատարակության չարժանացած երեք կամ չորս հատորների կրճատումը եղել է միմիայն ի հաշիվ վկայությունների:

Ի տարբերություն «Բառգիրք հայկազեան լեզուի»-ի (=Ա), որը բացառաբար էր ներկայացնում իր աղբյուրները, «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»-ն (=Բ) վկայությունները դնում է լիարժեք կերպարանքով, առանց խառնելու բացատրության հետ: Բերենք մի երկու օրինակ՝ Նարեկացու երկերից առնված նմուշներով.

Ա.

ՄԶՆԱՐՀԵՍ.—

...Եւ ըստ այսմ մզնարհեստ կռչի թմբուկն լսելեաց, որ կազմեալ կայ ի նորք մաշկէ իբրև գիորքիկ բուշտ. ըստ այլմ **Նարեկ. դգ.** Մզնարհեստ ուժգնաբարբառ կազմուածոյ թմբկիս գործականութեան, և այլն:

ՄԻԱՏԵԻԱԿ.—

...Իսկ մերթ նշանակէ զայն, որ լինի ի միասին տնելով, կամ համբերելով, և ըստ այսմ ասի՝ միատեսակ ժուժկալութիւն. **Նարեկ. ի գով. կուս.**

ԾՐՏՈՒՄՆ.—

...Իսկ մերթ ապշութիւն, կամ քնդարմացումն, կամ անզգայութիւն, և կամ շուարումն. ուսմկ. փատ կտրիլը, կամ շաշմիշ ըլլալը. **Նարեկ. դա:** ...Իսկ երբեմն շլացութիւն, կամ կորուստ տեսութեան, և կամ կորութիւն. և ըստ այսմ ասի **Նարեկ. ի մեկն. երգոց.** Թժկեաց զշրտումն աշաց Պօղոսի, այսինքն զշլացութիւնն:

Բ.

ՄԶՆԱՐՀԵՍ.—

Զարկուած վերածածկութեան մզնարհեստ ուժգնաբարբառ խորոխտահնչական կազմուածոյ թմբկիս գործականութեան թուլաղաշնակեալ. **Նար. դգ.**

ՄԻԱՏԵԻԱԿ.—

Որդոյ թոյ կցորդութեամբ՝ միատեսակն ժուժկալութեամբ. **Նար. կուս.**

ԾՐՏՈՒՄՆ.—

(Բարձ) գթմութիւնսն ընդ շրտմանցն. **Նար. դա.**

Զշրտումն աշացն (Պօղոսի) Թժկել ձեռնադրութեամբ. **Նար. երգ.**

Բերենք մի քանի օրինակներ դարձյալ Բ-ից.

ԱՆՏԱՐՐԱՓԱԿ.—

Ցառաջ քան զհիմն լաիտեանցն անտարրափակ էութեանց. Նար. լդ.
Անտարրափակ ընդարձակութիւն հատու զօրութեան. Նար. ժգ.

ԱՊԱԶԷՆ.—

Ապագէն եղեալ՝ մատնեցայց. Նար. է.

Որ առ աչաց տեսիլ՝ ապագէնք և նուաստագոյնք. Նար. կը.

ԳԹԵՄ.—

Յաջն գթեցի. Նար. ծե.

Զվիմին գթել ոչ գրեցեր. Նար. ծէ.

Ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց. Նար. հր.

Ինչպէս տեսնում ենք՝ համաբարբառային գաղափարը, ընթանալով հայ բառարանագրության ուղիով և զարգանալով նրա պահանջների պայմաններում, ըստ ինքյան հանգել էր հայ մատենագրության մի ընդհանուր համաբարբառի ստեղծման փաստին: Այդ փաստը իր տեսակարար կշռով գերազանցում էր, անշուշտ, Նարեկացու կամ ուրիշ մատենագիրների երկերին նվիրելի համաբարբառների գաղափարը: Այլ խնդիր է, որ, դժբախտաբար, Մխիթարյան գիտնականների այդ հույսկապ գործի միայն մի փոքրիկ մասն է մեզ հասել տպագրությամբ:

Ապասելի չէ, որ Մխիթարյան միաբանությունը մի օր կարողանա լույս բնծայել հայ մատենագրության համաբարբառի վերոհիշյալ նյութերը, որովհետեւ, որքան մեզ հայտնի է, նրանց մի զգալի մասն արդեն գոյություն չունի այսօր: Եվ եթե այդպէս է, ապա մնացած մասն արդեն որպէս համաբարբառ հրատարակվելու վիճակում չէ, քանի որ այդ նյութերի ստուգումն ու մանավանդ լրացումն իր հերթին կպահանջեր մի քանի տասնյակ տարիների հավաքական նոր աշխատանք՝ խելահեղ քանակություն կազմող մատենագրական աղբյուրները մի առ մի նորից հետազոտելու, իսկ նման աշխատանքի համար ներկայումս Մխիթարյան միաբանությունը չունի տրամադրելի ուժեր ու միջոցներ:

Եվ սակայն հայագիտությունը մեր օրերում, եթե ուզում է շարունակել իր զարգացման ընթացքը համաշխարհային մակարդակով, չի կարող անտեսել բանասիրական աշխարհում կիրառվող գիտական ժամանակակից մեթոդները, որոնց թվում՝ հետազոտության համաբարբառային մեթոդը: Հայ բանասիրությունն ամեն քայլափոխում իր առջև ծառացած է գտնում աղբյուրագիտական և բնագրաբանական խնդիրներ, որոնց արագ լուծմանը կարելի է հասնել միայն համաբարբառի օգնությամբ: Այդ մասին կարող է վկայել հայ բանասիրության ամեն մի մշակ: Բերենք մի օրինակ մեր սեփական աշխատանքների քննազավտից:

Վարդան Այգեկցու նորահայտ երկերից մեկում, որը կոչվում է «Արմատ հաւատոյ»¹¹¹, կան պարզելի շատ հարցեր, որոնց լուծումը պահանջում է բնագրաբանական բազմակողմանի հետազոտություններ: «Արմատ հաւատոյ»-ի աղբյուրների քննությամբ զբաղվելիս՝ մենք հարկադրված եղանք ի շարս

¹¹¹ Տես Հ. Ս. Անասյան, «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ», Վենետիկ, 1969: Արտատպւած է Բազմապէս ամսագրից, 1968, № 7—12:

այլոց կանգ առնել մի հատվածի վրա, որը կրում է Արիստոտելի անունը՝ «ՅԱրիստոտելէն վկայ բանիս»¹¹²: Այդ հատվածը հետևյալն է.

«Արդ պարտ է գիտել թե խաւարն չէ էութիւն և ոչ ունակութիւն, և ոչ այլ ինչ բնաւ [1]էիցս, բայց պակասութիւն լուսոյ. զի չիք խաւարի արարողական պատճառ որ [1]իրմէ էութենէ առնէ զնա, այլ ուր լոյս ոչ գոյ՝ անդ խաւար է»:

Արիստոտելի ո՞ր երկից կարող էր լինել այս հատվածը: Խնդիրը պարզելու համար ստիպված եղանք մի քանի անգամ որոնումներ կատարել Արիստոտելի այն բոլոր գործերում, որոնք հայերեն թարգմանությամբ հայտնի են, սակայն այդ տաժանելի աշխատանքը ոչ մի արդյունք չտվեց. իսկ դրանից հետո հետաքրքրության համար դիմեցինք Արիստոտելի երկերի հունարեն համաբարբառին, ուր Σκότος (խավար) բառի տակ գտանք աղբյուրը՝ Արիստոտելի «Περὶ Χρώματος» («Ցաղագս գունոց») երկը, որը, որքան հալտնի է բոլորիս, հայերենի չի թարգմանվել: Վարդան Այգեկցու բերած հատվածը կազմված է հիշյալ երկի առաջին գլխի երկու տարբեր տեղերից: Դրանք են՝

Τὸ σκότος οὐ γένετα δὲ καὶ στέργει· ἐστὶ φῶς (խավարը գույն չէ, այլ լուսի պակասություն)¹¹³:

Τὸ δὲ σκότος ἐκτείνοντες τὸ φῶς γίνετα: (Իսկ խավարը լինում է՝ երբ չքանում է լուսը)¹¹⁴:

Սրանով հատվածի ծագումը ճշտվեց՝ շնորհիվ հունարեն համաբարբառի: Բայց այս դեպքում, ի հարկե, բարեբաստիկ հանգամանքն այն էր, որ հատվածի սկզբնաղբյուրը հունարեն էր և նրա հեղինակի հունարեն երկերը համաբարբառ ունեին: Սակայն այսպիսի զուգադիպություններ միշտ չէ, որ կարող են լինել:

Մյուս կողմից՝ այս կողմնակի միջոցն էլ դեռ միայն մասնակիորեն է լծում հարցը՝ եթե հաշվի առնենք, որ մեր հատվածը բառացի չի առնված Արիստոտելի բնագրից, այլ խմբագրված ձևով. և այստեղից արդեն նոր հարց է ծագում, որ եթե ապացույց չունենք, թե Վարդան Այգեկցին ուղղակի ինքն է այն խմբագրել հունարեն աղբյուրից, ապա նաև կարիք կլինի ենթադրել, որ նա այս հատվածը կարող է նույնությամբ առած լինել Արիստոտելի գործերի մի որևէ հայերեն մեկնությունից, կամ թե՛ իմաստասիրական կամ աստվածաբանական մի որևէ երկից, — ինքնուրույն կամ թարգմանական, — որոնցով այնքան հարուստ է հայ մատենագրությունը: Այստեղ Արիստոտելի հունարեն համաբարբառն արդեն անգոր է մեզ օգնելու և նորից է ծառանում մեր առջև հայ մատենագրության ընդհանուր համաբարբառի անհրաժեշտությունը:

Ի հարկե՝ կարելի է աղբյուրագիտական ու բնագրաբանական աշխատանքների բնագավառից նշել ուրիշ շատ դեպքեր, որոնք հավասարապես հետաքրքրում են պատմաբաններին և լեզվաբաններին: Բառային և լեզվական-քերականական համեմատության այն միջոցներով, որ կընձեռեր հայ մատենագրության մի ընդհանուր համաբարբառը, կարելի կլիներ գոնե մասամբ լուծել մի շարք երկերի հեղինակության կամ նրանց թարգմանիչների ինքնության վիճելի հարցերը: Օրինակ՝ թե Խորենացու վավերական հեղի-

¹¹² Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3295, էջ 378ա:

¹¹³ Stu' Aristotle, «Minor Works... With an English Translation by W. S. Hett», Cambridge, Harvard University Press, 1955, p. 6.

¹¹⁴ Ibidem, p. 4.

նակություն հանդիսացող «Պատմություն Հայոց»-ի հետ լեզվական ի՛նչ առնչություններ է ներկայացնում «Գիրք թղթոց»-ում գտնվող դավանական սյն գրվածքը, որի հարազատությունը, որպես Խորենացու հեղինակություն, տարակարծությունների առարկա է բանասիրության մեջ. կամ թե՛ նրա անունը կրող մի շարք այլ գործեր, ինչպես են Հոփսիսիմյաններին, Վարդավառին, Տապանակին, Տիրամոր պատկերին նվիրված և այլ ճառերը, Քերականի մեկնությունը, և կամ՝ «Յաղագս պիտոյից» և «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու» երկերի թարգմանությունները: Համաքարբառը նմանապես զգալի չափով կօգներ, օրինակ, ըստ լեզվական հատկանիշների խմբավորելու այն բազմաթիվ երկերը, որոնք մեզ են հասել ԺԲ/ԺԳ դարերից՝ «Վարդան» կամ «Վարդան վարդապետ» հեղինակային անունով, իսկ դրանից հետո հնարավոր կլիներ նաև ասել, թե ո՛ր խումբը ո՛ր Վարդանին է պատշանում (Վարդաններ՝ Հաղբատացի, Այգեկցի, Արևելցի, Բարձրբերդեցի, Անեցի, Աղվանեցի, գուցե նաև ուրիշներ):

Հայ մատենագրության ընդհանուր համաքարբառի ստեղծման գործը մեր օրերում արդեն ընդգրկվել է հայագիտության գծով տարվող աշխատանքների շրջանակի մեջ: Ավելի քան մեկ տասնամյակ առաջ Հայկ. ՍՍՀ Գիտությունների Ակադեմիան ստանձնել է այդ գործի կազմակերպումը՝ ակադ. Ա. Ս. Ղարիբյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ:

Այդ աշխատանքների հիմքը դրվել է Ակադեմիայի Լեզվի ինստիտուտում 1957 թվականին՝ աշխարհաբար և գրաբարալեզու գրականության քարտարաններ կազմելու ծրագրով, իսկ հետագայում գործը տեղափոխվել է Ակադեմիայի Կենտրոնական գրադարանը, ուր և շարունակվում է մինչև այսօր: Գործի սկզբնական շրջանի ծրագրի, կազմակերպման և կատարման եղանակների մասին մենք Լեզվի ինստիտուտի նախկին դիրեկտոր պրոֆ. Ղարիբյանից ստացանք հետևյալ տեղեկությունները:

Սկզբնական շրջանում՝ 1957—1962 թվականների ընթացքում վիթխարի աշխատանք էր ծավալվել Լեզվի ինստիտուտում՝ առաջին հերթին հայ ժամանակակից հեղինակների երկերի համաքարբառային քարտարաններ կազմելու նպատակով:

Հեղինակային քարտարաններ կազմելու համար հեղինակի երկերից ամեն մեկը մշակվում էր առանձին, նրանում օգտագործված բառերը հավաքվում էին քարտերի վրա և այդ քարտերը դասավորվում էին այբբենական կարգով: Այդ բառաքարտերի վրա էջերի նշումով բերվում էին գրքի այն բոլոր հատվածները, որոնց մեջ պատահում էր տվյալ բառը: Եվ երբ այս եղանակով պատրաստվում էին հեղինակի բոլոր աշխատությունների քարտարանները, դրանք ի մի էին ձուլվում և ստեղծվում էր գրողի աշխատությունների համաքարբառային լիակատար քարտարանը: Այս ձևով Լեզվի ինստիտուտում լիովին ավարտվել էր Բաֆֆու գործերի համաքարբառային քարտարանը, որն ընդգրկում էր շուրջ 1 միլիոն 756 հազար բառաքարտ: Այս ուղիով էր ընթանում նաև մյուս գրողների քարտարանների կազմման գործը: Քարտագրվել էին հետևյալ հեղինակների կարևոր համարված երկերը. Շիրվանզադե, Մուրացան, Նար-Ռոս, Ծուռանիկ Կուրդիջյան, Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Վահան Տերյան, Լեո (գեղարվեստական երկերը), Ավետիք Իսահակյան, Դանիել Վարուժան, Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Գրիգոր Զոհրապ, Տիգրան Կամսարական, Մկրտիչ Պեշիկ-թաշյան, Հակոբ Պարոնյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Սիմանյոթ,

Սերո Խանգադյան, Գեղամ Սարյան, Նայիրի Զարյան, Գարեգին Սևունց, Ստեփան Զոքյան, Անահիտ Սեկոյան, Հակոբ Հակոբյան, Սարմեն, Բոգդան Վերդյան, Ակսել Բակունց, Դերենիկ Դեմիրճյան, Եղիշե Զարենց, Հովհաննես Ծիրազ, Խաչիկ Դաշտենց, Արագի, Անահիտ Սահինյան, Հրաչյա Քոչար, Քրիստափոր Թափալցյան, Վահան Թորոպենց, Մկրտիչ Կորյուն: Այս հեղինակների երկերի բովանդակած բառերը լիակատար կերպով են ենթարկվել քարտագրման, իսկ մի քանի ուրիշ գրողներին՝ միայն ընտրովի բառերով (Հովհաննես Հովհաննիսյան, Վրթանես Փափազյան, Մկրտիչ Խերանյան):

Եթե կազմվեր բոլոր հեղինակների ընդհանուր քարտարանը և դրա հիման վրա՝ ընդհանուր համաքարքառը, դա հնարավորություն կտար հայերեն արդի գրական լեզուն հետազոտելու բազմաթիվ կողմերով, ուսումնասիրելու նրա բառային և քերականական կազմի պատմությունը:

Լեզվի ինստիտուտի համապատասխան բաժնից մեր առաջած տեղեկությունների համաձայն՝ հայ գրական նոր լեզվի համաքարքառային աշխատանքներն ինստիտուտում դադարեցվել են 1962 թվականին, երբ պրոֆ. Ա. Ս. Ղարիբյանը հեռացել է ինստիտուտի ղեկավարությունից: Ավարտված վիճակում է միայն, ինչպես նշեցինք, Բաֆֆու քարտարանը, որի հիման վրա կազմված քառացանկը մնում է անտիպ: Ինստիտուտում 1965 թվականից մի քանի աշխատակիցներ կազմում են ընտրովի քարտարան՝ հիշյալ ընդարձակ քարտարանի հիման վրա, նրա վրա ավելացնելով կարևոր համարվող որոշ երկերի և գրական ու գիտական մամուլում լույս տեսնող ուսումնասիրությունների ընտրովի բառերը: Այս բոլորով, ի հարկե, հայ գրական լեզվի քարտարանը չի գնում դեպի լիակատարություն և ոչ էլ հետապնդում է համաքարքառային նպատակ, բայց այդ ընդարձակ և ընտրովի քարտարանների նյութերը լայն չափերով օգտագործվում են ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքների համար: Դրանց հիման վրա կատարվում են ուսումնասիրություններ՝ այս կամ այն հեղինակի լեզվի և ընդհանրապես ժամանակակից հայերենի հարցերի վերաբերյալ: Դրանց հիման վրա է կազմվել «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ը, որը բաղկացած է 5 հատորից և որի առաջին հատորը լույս է տեսել արդեն (Երևան, 1969 թ.): Ծրագիր կա կազմելու նաև բացատրական մի ավելի ընդարձակ բառարան, որում կօգտագործվեն բնագրային վկայություններ ևս, գրաբարի «Նոր-Հայկազեան» բառարանի օրինակով, և որը նախատեսվում է 16 հատորով: Նույն նյութերի օգտագործմամբ Լեզվի ինստիտուտում և գիտական այլ հաստատություններում կազմվել են և կազմվում են մի շարք հեղինակային բառարաններ, որոնցում յուրաքանչյուր բառի տակ, բացի բացատրությունից, նշվում են նաև հեղինակի երկերի այն բոլոր էջերը, որոնցում օգտագործված է այդ բառը, մեծ մասամբ բերելով նաև վկայություններ: Այսպես՝ Վարազ Առաքելյանը կազմել է Շեքսպիրի «Համլետ» թատերախաղի հայերեն թարգմանության (թարգմ. Հովհ. Մանուկյան) համաքարքառ-բառարանը, Թամարա Չիլինգարյանը և Վարազ Առաքելյանը միասին կազմել են Ավետիք Իսահակյանի սրձակ երկերի համաքարքառ-բառարանը, Լիդա Պետրոսյանը՝ Հովհաննես Թումանյանի գեղարվեստական երկերի բառարանը: Նմանապես՝ հեղինակային բառարաններ կամ, ավելի ճիշտ, քառացանկներ են կազմել, միայն էջերի լիակատար նշումով և առանց բնագրային վկայությունների, Աշոտ Մարությանը՝ Զարենցի երկերի, Վոլոդյա Ալեքսանյանը՝ Ծիրազի բանաստեղծությունների, Ֆրիդրիխ Խլաթյանը՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմական վեպի:

Լեզվի ինստիտուտում 1960 թվականից սկսվել էր նաև գրաքարակերտ հեղինակների երկերի քարտագրում (Եզնիկ, Կորյուն, Սեբեոս և այլն), բայց այդ քարտարաններն այժմ գտնվում են Ակադեմիայի Կենտրոնական գրադարանում, որովհետև 1962 թվականին քարտարանային գործը ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Նախագահության որոշմամբ փոխանցվել է Կենտրոնական գրադարանին, որին այդ ժամանակ դիրեկտոր էր նշանակվել պրոֆ. Ա. Ս. Ղարիբջանը: Գրադարանին առընթեր կազմակերպվել է մի նոր բաժին՝ «Համաքարքառային քարտարանի բաժին»-ը, որի աշխատակիցների թիվը ներկայումս մի տասնյակից ավելի չէ: Մենք մի քանի անգամ այցելեցինք այդ բաժինը՝ տեսնելու համար, թե ի՞նչ է այնտեղ կատարվող աշխատանքների էությունը, ինչպե՞ս են դրանք կազմակերպված և ինչպե՞ս են իրագործվում:

Գրադարանի այդ բաժնում աշխատանքների առարկան հայ հին գրականության քարտարանի կազմումն է, մի աշխատանք, որը, ինչպես ասվեց, մասամբ սկսվել էր դեռ Լեզվի ինստիտուտի շրջանում, 1960 թվականին, աշխարհաբարի քարտարանին զուգընթաց: Ծրագիրն ընդգրկում է գրաքարակերտ ամբողջ մատենագրությունը՝ հին և միջին հայերեն, ներառյալ թարգմանականը, սկսելով մաշտոցյան դարաշրջանից:

Սակայն դա մի վիթխարի ծրագիր է, որի իրականացման համար ապաստանել միմիայն մարդկային ձեռքի աշխատանքին՝ կնշանակել արդյունքի սպասել բազմաթիվ տասնամյակներ, իսկ հալագիտությունն իր զարգացման ներկա ընթացքում տրամադրելի այդքան ժամանակ չունի այդ արդյունքին հասնելու համար: Այդ պատճառով՝ քարտային աշխատանքներում բնագրերի բազմացման արագության համար օգտագործվում է գլատիպ մեքենա (rotator, rotary):

Ի դեպ՝ ասենք, որ գլատիպի օգտագործումը՝ նոր չէ, որ սկսվել է այս գործում: Դեռ 1957 թվականից, աշխարհաբար քարտարանի աշխատանքների հետ, Լեզվի ինստիտուտում սկսել էր գործել այդ մեքենան: Գլատիպը Ն. Ս. Օ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի նվերն էր Ակադեմիայի Լեզվի ինստիտուտին: Հետագայում Ակադեմիայի Կենտրոնական գրադարանը պր. Երվանդ Հուսիսյանից (Միլան) նվեր է ստացել ուրիշ երկու գլատիպներ, որոնց մասնակցությամբ էլ այժմ շարունակվում են գրաբարի քարտարանի աշխատանքները:

Քարտագրական աշխատանքները մի քանի փուլերով են անցնում՝ մինչև որ այս կամ այն գիրքը վերածվի համաքարքառի: Բացատրենք մի պայմանական օրինակով:

Առաջին փուլ (Բնագրի պատրաստում).—Ենթադրենք, որ գրքի առաջին էջում կա 250 բառ. ուրեմն՝ այդ էջը բազմացվում է 250 օրինակով: Եվ այսպես բազմացվում են գրքի բոլոր էջերն այնքան օրինակով, որքան բառ կա տվյալ էջի վրա: Հասկանալի է, որ գրքի էջերը պահպանվում են բնագրի բազմացված օրինակների վրա: Սրանով բնագիրը պատրաստված է լինում մշակման աշխատանքի համար:

Երկրորդ փուլ (Քարտագրում).—Բնագրում եղած բոլոր բառերը հերթականորեն փոխադրվում են քարտերի վրա: Այսպես՝ բնագրի առաջին օրինակում ընդգծվում է առաջին բառը և այդ բառը գրվում է բնագրի վերևում. դրանով արդեն պատրաստ է առաջին քարտը: Բնագրի երկրորդ օրինակում ընդգծվում է նրա երկրորդ բառը և գրվում է վերևում. դրանով պատրաստ է

դառնում երկորդ քարտը: Եվ այդպես շարունակ՝ առաջին էջի բոլոր 250 օրինակները վերածվում են բառաքարների: Երբ այս ձևով մշակվում և ավարտվում է առաջին երեսը՝ բազմացվում է հաջորդ երեսը, երրորդը, չորրորդը և այլն: Այսպիսով՝ գրքի բոլոր բառերը վերածվում են քարտերի:

Երրորդ փուլ (Քարտերի այբբենական դասավորում)։— Բառաքարտերը կտրատվում են և նրանցից յուրաքանչյուրի վրա թողնվում է, էջի նշման հետ միասին, բնագրից միայն այնքան մաս, որքան մտքի քերականական ամբողջության տեսակետից պատկանում է տվյալ բառին: Դրանից հետո բոլոր բառաքարտերը ենթարկվում են համախառն դասավորման՝ այբբենական կարգով: Հասկանալի է, որ եթե, ասենք, տվյալ գրքում այս կամ այն բառը 50 անգամ է օգտագործվել, այդ բառի 50 քարտերը դասավորվում են իրար ետևից՝ գրքի էջերի հերթականությամբ:

Մշակման այս երես փուլերն անցնելով՝ գրքի քարտարանը պատրաստ է լինում: Այս քարտարանը փաստորեն տվյալ գրքի բառերի լիակատար քարտարանն է՝ շարժական քարտերի վրա: Շարժականության այս վիճակը, սակայն, վտանգավոր է նրանով, որ, անխնամ կամ անզգույշ վարվելու դեպքում, քարտերը կարող են դուրս ընկնել իրենց տեղերից ու կորչել և կամ ենթարկվել ակամա տեղափոխումների, իսկ դրանով կարող է աղավաղվել, եղծվել ու արժեքազրկվել ամբողջ քարտարանը: Այս վտանգի դեմ քարտարանի կազմն ու բովանդակությունը ապահովվում են մշակման վերջին գործողությամբ, որ է՝


Չորրորդ փուլ (Քարտարանի մեքենագրում)։— Հերթականությամբ մեքենագրվում ու վերջնապես գրանցվում են քարտարանի բոլոր բառերը՝ ըստ բառաքարտերի բովանդակության և սրանով տվյալ գրքի քարտարանը դառնում է նրա համաքարքառը: Բայց այս փուլում մշակումը կատարվում է կամ կարող է կատարվել երկու տարբեր եղանակներով և ուղղություններով, որոնք ըստ բնույթի անվանվում են քերականական և բնագրային, և ըստ այնմ էլ գրքի համաքարքառը լինում է կամ կարող է լինել երկու տեսակի, որոնց մասին կտեսնենք ստորև:


Սա է համաքարքառային քարտարանների և համաքարքառների կազմման հիմնական ընթացքը:

Այս եղանակով կմշակվեն այս կամ այն հեղինակի երկերն առանձին-առանձին, և երբ պատրաստ կլինեն այդ երկերի քարտարանները, դրանցով կստեղծվի հեղինակի երկերի լիակատար քարտարանն ու համաքարքառը: Իսկ սա՝ դեռ բոլորը չէ անջուշտ: Հետագայում կարող է կազմվել նաև ամբողջ հին՝ գրաքար գրականության ընդհանուր քարտարան ու համաքարքառ և սա կլինի իրագործումը հայ մատենագրության ընդհանուր համաքարքառի այն գաղափարի, որ այնքան փայփայանքով ներկայացրինք մեր նախորդ էջերում և շեշտեցինք այն նշանակությունը, որ մամնօրինակ համաքարքառը կունենա թե՛ լեզվաբանական և թե՛ պատմա-բանասիրական հետազոտությունների բնագավառում:

Ակադեմիայի համաքարքառային քարտարանի բաժնում կատարվող եռուն աշխատանքները փաստորեն գնում են այդ ուղղությամբ, դեպի այդ նպատակը:

(Շարունակելի)





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆՂԱԿԸ Մայր Աթոռի տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակի առթիվ	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Աստուածային և երկնային շնորհ որ միշտ լնու զպետս սրբոյ սպասաւորութեան Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ	6
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍԱՀ Մինիստրների սովետի նախագահ Բաղալ Մուրադյանին	9
Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը լիոնաբնակ մեծահարգ պարոն 'Նապոլեոն Պոլլուքյանին' ֆրանսիական Պատվո լեգեոնի շքանշան ստանալու առթիվ	10
Հաղորդագրություն	11
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Է. Կ. Բլեկը Մայր Աթոռում	13
Սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում	19
Հաղորդագրություն	23
Զեռնայություն Մայր Աթոռում	24
ԽԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	26
Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ—Ուր-ձայնի սկավաճքները	28
Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Ամաղու 'Նորավանքը'	35
Սահ Սուրեն Ղահրամանի Արևշատյանի	44
Բուցակ Մայր Աթոռ և Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	46
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Հայ համաքարբառային գրականությունը և հայ մատենագրության համաքարբառը	49

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26/І 1972 թ.: Ստորագրված է տպագրության 17/ІІІ 1972 թ.:

Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 55

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1972 թ.